This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

## Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

## About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

AD
EN
9
1
HR

B 1,236,646

THE UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
THE UNIVERSITY OF MICHIGAN
ARTES SCIENTIA VERITAS
1817

# Ա Ց Գ Ե Կ Ո Ւ Թ Ք

[redacted]

ՏՊԱՐԱՆ
ՄԻՀՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
«ՃԻՀԱՆ»

معارف نظارت جلیله‌سنك ۷۸۲/۱٤٥ نومرولی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

[redacted]

2364

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ

(ԱԼՓԱՅԼԱՆ)

# ԱՅԳԵԿՈՒԹՔ

(ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ)

ԱՌԱՋԻՆ ՔԱՂ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ժ. ԳԱՅՍՔԷՐԵԱՆ

Արտօնատէր «Մանզումէի» Օրաթերթի

Կ. ՊՈԼԻՍ

1908

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

DHD
ICEN
999
Bulw
v.1

ՀՕՐՍ

**Գէորգ Էֆ. Փանոսեանի**

ՄՕՐՍ

**Տիկին Նւարդուհիի Փանոսեանի**

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


Տիկին Զ. Հ. Ասատուրի Նամակը . . . Ա.—


## *Սէր եւ Քնար*

### Քերթուածներ


| | | Երես |
|---|---|---|
| 1 | Բաժակներ | 1 |
| 2 | Առ Նուա | 2 |
| 3 | Բաղձանք, առ Նուա | 4 |
| 4 | Աղօթք | 6 |
| 5 | Կաղանդի երգս | 7 |
| 6 | Ուղիներու քով, *Սիպիլին* | 9 |
| 7 | Ի՛նչ փոյթ, *Ձայնեակ* | 11 |
| 8 | Բերան կուսին | 12 |
| 9 | Մատունք կուսին | 13 |
| 10 | Առ Արուսեակ | 14 |
| 11 | Առ Ճէյլան | 15 |
| 12 | Առ Ճէյլան, *Երկու. ձայնեակներ* | 16 |
| 13 | Նոյեմի | 17 |
| 14 | Մարի | 20 |
| 15 | Փոքրիկ ուղին | 22 |
| 16 | Հիւծեալ աղջիկը | 24 |
| 17 | Պզտիկ տղաքը | 26 |


## *Մանկական տողեր*


| | | |
|---|---|---|
| 18 | Տարեդարձ մանկան | 31 |
| 19 | Առ Զաւէն | 36 |
| 20 | Երկրորդ տերեւը | 42 |
| 21 | Աստուծոյ մոմերը | 44 |
| 22 | Երբին հարցում | 45 |
| 23 | Արդար բողոք | 46 |
| 24 | Կաղանդն որ չի գար | 47 |
| 25 | Ամանորի յորդորներ | 48 |
| 26 | Մարիին մաղթանք | 50 |
| 27 | Ծառը | 52 |

[redacted]

## Ֆանթեզիներ - Գրչի խաղեր


| | | | |
|---|---|---|---|
| 28 | Օգսէնին նամակը | | 55 |
| 29 | Մանզումէ | | 58 |
| 30 | Թուղթ առ Ֆիլիպեցիս | | 60 |
| 31 | Մեղայագիր-Մեծ Արմէանցւոց | | 61 |
| 32 | Ապուզաքը | | 64 |
| 33 | Անխոհեմ հարցումներ | | 66 |
| 34 | Կնոջ հարցումներ | | 67 |
| 35 | Ալէմտաղիի ներշնչումներ | | 68 |
| 36 | Աղջիկն ու պոէտը | | 73 |
| 37 | Բաղդաւոր տղան | | 77 |
| 38 | Հովահարը | | 80 |
| 39 | Սիրահարութիւն | | 84 |
| 40 | Արձագանգին հարցումներ | | 86 |
| 41 | Հարցումներ արձագանգին | | 87 |
| 42 | Ցայգերգ | | 88 |
| 43 | Յորդորակներ | | 90 |
| 44 | Տղու պատասխան | | 96 |
| 45 | Բեռնաբարձը | | 100 |
| 46 | Առաջին ապտակը | | 102 |


## Օտարէն Թարգմանած


| | | | |
|---|---|---|---|
| 47 | Ամուսնութեան կանոնները | *Մոլիէռ* | 107 |
| 48 | Ամուրին | *Նման. Ֆրանս.* | 110 |
| 49 | Թիթեռնիկը | » » | 111 |
| 50 | Խորհրդակցութիւն | » » | 112 |
| 51 | Աղուէսն ու Ագռաւը | *Լաֆոնթէն* | 114 |
| 52 | Լեռն որ մուկ մը կը ծնի | » » | 115 |
| 53 | Գուշակութիւն | *Նման. Ֆրանս.* | 116 |
| 54 | Սէրը | » » | 117 |
| 55 | Տասնաբանեայ պատուիրանք | » » | 118 |
| 56 | Տիպար ընտանիք | » » | 119 |
| 57 | Անմխիթար | » » | 123 |
| 58 | Անդարձ կորուստը | » » | 124 |
| 59 | Ոսկոյ մասը | *Վ. Հիւկօ* | 125 |
| 60 | Լապտերն ու ճրագը | *Լըպայի* | 127 |
| 61 | Քերթողի սէր | *Հ. Հայնէ Նման.* | 128 |
| 62 | Հին երգ | *Վ. Հիւկօ* | 129 |
| 63 | Բանաստեղծը | *Կրընէ-Տանզու* | 130 |

| | | | |
|---|---|---|---|
| 64 | Ըսէ ինծի | Յ. Կրիւն | 131 |
| 65 | Օրօրոցներ | Վ. Բրիւսով | 132 |
| 66 | Ինչպէս այն ատեն | Վ. Բրիւսով | 133 |
| 67 | Համբոյրը | Յ. Գոթթէ | 134 |
| 68 | Սիրոյ երգ | Յ. Գոթթէ | 134 |
| 69 | Վերադարձ | Ժ. Սուլլարի | 135 |
| 70 | Սպառածներ | Մ. Ռոլլինա | 136 |
| 71 | Հուսկ բանքս | | 137 |

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

**ԾՈՂՆԵՐ ՈՒ ՑՈՂՆԵՐ**

Պատանեկան բանաստեղծութիւններ, պատկերազարդ
Տպագր. Նշան Պէրպէրեան. 1885
*Սպառած*

**ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ**

Զաւեշտ 1 արար

Տպագր. Յ. Մինասեան. 1901

**ԱՅԳԵԿՈՒԹՔ**

Գրական գործեր. Ա. հատ 1908

## ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԳՈՐԾԵՐ

**ԱՅԳԵԿՈՒԹՔ** Բ. հատ
" Գ. "
" Դ. "
" Ե. "

*ՄԱՐԻՈՆ ՏԸ ԼՕՐՄ*, *Տրամ Վ. Հիւկոյի. 5 արար*
*Ոտանաւոր թարգմ.*

*ՍԻԼՎԱՆՏԻՐ*
*Վէպ Ալեքսանդր Տիւմա հօր*

*ԱՐՁԱԿԻ ՏՐՑԱԿ*
*Նկարագրական, փանթէզի, եւլն., արձակ գրուածքներ։*

## Տիկին Զապէլ Հ. Ասատուրի

### ՆԱՄԱԿ

**Տիկին Եւա Ա. Փանոսեանին**

Բերա , 21 Օգոս. 1907

*Սիրելի Եւա ,*

*Գեղեցիկ լուր մը հասաւ ականջիս , թէ Փանոսեան Էֆէնտի իր քերթուածներուն ամբողջութիւնը քանի մը հատորներու մէջ ամփոփած , տպագրութեան պիտի յանձնէ ։*

*Հաճելի ընթերցումներու սա օրերուն մէջ , ո՛րքան հրճուանք ազդեց ինծի այս անակնկալը որ գրեթէ շնորհապարտ կը զգամ ինքզինքս իրեն այս սքանչելի գաղափարին համար , որուն մէջ անշուշտ մեծագոյն բաժինը ունիս դուն ։*

*Նախապաշարո՞ւմ մը կամ կանոնաւոր չափ դերանուրբ յաւակնութի՞ւն մըն է արդեօք մաքիս այն տրամադրութիւնը որո՛վ ամուսինդ ամէնէն սիրուն բանաստեղծութեանց մէջ քու պատկերդ կը տեսնեմ շարունակ ։ Ինծի այնպէս կու գայ որ իր ամէնէն նշմարելի տողերը քու աչքերուդ մէջ կարդացած է , և իր ամէնէն չքեղ յանգերը քու ձայնիդ հնչիւնէն քաղած է ։*

*Եւ ապահով եմ որ չեմ սխալիր ։*

[redacted]

Ո՛վ կ'ուրանայ թէ Ալիփաշայան, քիչ ճանչնալէ առաջ, Հայ բանաստեղծութեան մէջ ինքն էր որ ներմուծեց, անզուգոր, ինքնատիպ և բոլորովին նոր տաղաչափութեան մը հետ, սեռ մը որ կատարելապէս անծանօթ էր մեր լեզուին. սրամիտ բանաստեղծութիւնը։

Մինչև այն ատեն գրուած քերթուածներուն մէջ, կարելի չէ ըսել թէ տաղանդը կը պակսէր։ Գեղեցկութեամբ արձօրուն հիանալի տողեր կարդացած էի, որոնց թախծոտ խառնութիւնը կամ վեհաշուք ծանրութիւնը իր խորունկ հետքը կը ձգէր դեռափթիթ մտքիս վրայ։

Ցաւի հոգեառնող աղաղակներ, մահուան, հիւծումի սրտակեղեք հեկեկանքներ, յուսահատ սիրոյ ցաւագին կոչեր երևակայութիւնս թուլելով, ամբողջ գիշերներ կը լացնէին զիս։

Բանաստեղծներ կային զորս չէի հասկնար, իրենց խըրթին և մութ նախադասութեանց պատճառաւ. բանաստեղծներ կային զորս կը յարգէի, բանաստեղծներ՝ որոնց վրայ կը սքանչանայի, որովհետև հակառակը անիրաւութիւն պիտի ըլլար. և սակայն չէի կրնար անձնական անկեղծ սիրով մը սիրել զանոնք, որովհետև ամէնէն աղուորները կը տխրեցնէին զիս, և տրտմութիւնը ա՛յնքան շատ է կեանքի մէջ, սիրելի Նեւա, որ մեր ընթերցումներուն մէջ չենք կրնար փնտռել զայն։

Այն ատեն, Ալիփաշայանի առանց ճիգի հաւկցուած ջինջ տողերը, հնչուն յանգերը, իր երգող, կայտառ, թրթռուն զուարթամտութիւնը, զիս յանկուցանելու բոլոր յատկութիւններովը կը ներկայանար ինծի, եթէ այդ ներդաշնակութեամբ ընդելուզուած տողերուն մէջէն չընդնշմարէի չարամտութիւն մը, մեղուին խայթոցին պէս սուր, որ իմ հիացիկ համակրութիւնս կը վիրաւորէր։

Ամէնէն աւելի դուն գիտես, Նեւա, թէ ինչ տարբերութիւն կայ դառն ու կծող չարամտութեան և սրամիտ աւիւնին միջև։ Մէկը կը խոցէ, միւսը կը բուժէ։

Դուն, Նեւա, քու պարզկեկ գաւազանիդ ծայրովը, իր մեղուի խայթոցը թաւշոտ փայփայանքի մը փոխեցիր, և իր

ծաղրանքը, առանց թոյնի, անմեղ, նուրբ սրամտութիւն մը դարձաւ. ներողամիտ փիլիսոփայութեան մը շունչովը ոգեւորուած, որ սիւքի պէս թեթեւ, կը սաւառնի տխմարութեան, տափակութեան, գռեհիկ բարքերու շուրջը, վէտվէտելով, ծփծփալով եւ սակայն միշտ փափկելով իր անողոք ճշմարտութիւնները։

Կատարելապէս կ՚ըմբռնեմ ճշմարտութիւններ ըսելու ծարաւը, նախապաշարումներ ունենալու իրաւունքը ամէն մարդու եւ մանաւանդ քերթողին համար, որ ամէն մարդէ աւելի՛ բան մըն է անտարակոյս։

Ով որ ամէնքը կը գովէ, կ՚ապացուցանէ թէ ճաշակ չունի, եւ բնաւ մէկուն չի հաւնիր իրապէս. իր հաճոյագովի արդարութիւնը, որով կը պարծի, ուրիշ բան չէ բայց եթէ անտարբերութեան արդիւնքը որ անքննութիւնն իսկ է։

Առանց չարութեան հեգնող սրամտութիւնը, ճաշակի, մտացիութեան եւ սրտի ապացոյց մըն է. եւ ա՛յդ իսկ է Ալփաւլանի տաղանդին ամէնէն իրական, ամէնէն խնկաւէտ յատկութիւնը, որ քու ազնիւ եւ սուրբ ներշնչումիդ ազդեցութիւնը կրած է։

Եւ հիմայ, իր տաղերը, որոնց մէջ չկան հին քերթողներու մաքին մղձաւանջները, վիշտակներու, դիակներու, ուրուականներու, մշուշներու, մութ անտառներու արհաւիրքը, կը ներկայացնեն կեանքը [illegible] ծիծաղով մը լեցուն։

Ինքն ալ կ՚երգէ թռչունները, [illegible], սոխակները. բայց իր թռչունները, ոսկի վանդակներու մէջ ա[illegible]ութենէ չեն մեռնիր, այլ աշխարհիկ կեանքի հմայքը կը փառաբանեն. իր սոխակներուն մէջէն կը լսես կանանչ վարսերով ու ցոլցլուն քօղերով յաւերժահարսերու մշտնջենական խնդուքը։ Թեւաւոր զուարթութիւնը կը շրջագայի իր յանգերուն եւ վանկերուն հետ, շուրջը աւելի կապոյտ աւելի պայծառ յօրինելով հորիզոնը։

Երբ մահը կ՚ողբայ, իր քնարերգութիւնը մեռելները աղուորցնելու գաղտնիքը ունի.

«Պայծառ էին իր աչերն, այտերն ալ թարմ ու գըլխարդ
վարդ, վարդ, վարդ . . .»

[redacted]

Ու կը մոռնայ լալ մեռելին վրայ, անոր վարդ այտերուն անմահական բուրման հետ վերցած ։

Իր ոճը ա՛յնքան պայծառ, նախադասութիւնները ա՛յնքան թափանցիկ են որ, կարդացած ատեննիդ, ձայնդ երաժշտական շեշտեր կ'առնայ ակամայ, ու միտքդ հետեւելով իր ոճին, կ'ոստոստէ, կը ծիծաղի թեթեւնալով իր հոգերէն, ու աչքդ ծիրանի հորանջումներ կը նշմարէ շուրջդ ։

Սրտի բանաստեղծներուն ոչէն, միայն սիրոյ և ցաւի մէջ չէ որ իր քնարը կը թրթռայ ։ Ամէնէն չնչին առարկաները յանկարծ կը կայծկլտան իր տողերուն մէջ ։ Խորհրդաւոր, հեռաւոր, անանց պատճառի արտայայտութիւններ չունի իր մուսան ։ Իր քնարին առօրեայ լարերուն վրայ ամէն բան արեւով կը ճառագայթէ ։

Այս փիլիսոփայութիւնը միայն կը հանդարտեցնէ, սիրելի Նուառ, ինչպէս քեզի հետ ունեցած տեսակցութիւններս ։ Ահա՛ ինչու համար կը յամառիմ դիտել տեսնել ամուսնոյդ քերթուածներուն մէջէն, թէև բառ մը գրած չըլլայ [illegible] անոնց մէջ, և երկուքիդ միասին կ'ողջունեմ սրտագին շնորհաւորութիւններս ։

ԶԱՊԷԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ





# ԲԱԺԱԿՆԵՐ

Եթէ անծանօթ են քեզ ոխն ու քէն ,
Նախանձ, սեւ կիրքեր , յոյզեր դառնագին ,
պէտք է որ շրթունքդ հպին ապակէն
Վեներիի բաժակին ։

* *

Եթէ կը բաղձաս ըզգալ բացայայտ
թէ ո՛րքան կրնայ տառապիլ հոգին ,
պէտք է որ շրթունքդ հպին՝ հրացայտ
Սիրոյ բաժակին ։

Եթէ կ'ուզես որ ոտքիդ վառ աչեր
ձին ունայնութեանց տենչով բորբոքին ,
պէտք է որ շրթունքդ հպին՝ ջերաչեր
Փառքի բաժակին ։

*

Եթէ , ապրելէ ձանձրացած խոպառ ,
կ'ուզես համն առնել անտա՛ւս Հեշտանքին ,
պէտք է որ շրթունքդ հպին՝ քա՛ղցր ու սառ
Մահուա՛ն բաժակին ։

# ԱՐԵՒՍ

Թէ ինձ տային սար, ձոր, բըլուր ,
   հողեր ընտիր ու պարարտ ,
լի երգերով ախորժալուր
   դարաստաններ , անտառ, արտ ։
թէ ինձ տային մշտածորան
   ջուրեր, առուակ, գետ, աղբիւր,
որք մարգերու մէջէն սուրան
   ալեօք յստակ ու պաղ բիւր.
թէ ինձ տային բանգ թէ խոնարհ
   ամէն ծաղկունքն ու բոյսեր,
ո՛չ , չէի տար ես իմ Քընար ,
   չէի տար իմ Սի՛րտն ու Սէր ։

* * *

Թէ ինձ տային անհատնում գանձ ,
   սուտակ , զմրուխտ , ադամանդ ,
վայելք ու շահ առանց ճըգանց ,
   անչափ ոսկի՛ մանաւանդ .
թէ ինձ տային թագ , գաւազան ,
   պալատ , պերճ կեանք իշխանի ,
հեշտք եւ հաճոյք զարմանազան ,
   տարփոտ հարսներ գեղանի
ոյց շրթունքէն՝ մահճիս սընար
   Աստղըկան ձայնն ինձ խօսէր ,
ո՛չ , չէի տար ես իմ Քընար ,
   չէի տար իմ Սի՛րտն ու Սէր ։

* * *

Թէ ինձ տային ամպոց թեւեր ,
    շանթն ու գոռումն ահարկու .
կամ թէ գիշերն ինձ՝ պարզեւէր
    աստեղազարդ վերարկու .
թէ շունչս այս սեգ երկրիս վերեւ
    յարուցանէր փոթորիկ .
կամ թէ ձեռա՛ցս իսկ մէջ Արեւ
    զերդ ջահ , վառէր անդորրիկ .
թէ ինձ տային – տո՛ւրք անհընար –
    երկնից պատումն ու յոյսեր ,
ո՛չ , չէի տար ես իմ Քընար ,
    չէի տար իմ Սի՛րտն ու Սէր ։

* * *

Հըրեշտակի՛ պէս յուսածիր ,
    անո՛յշ էակ , չքնաղ կոյս ,
որ ժպտո՛վ մը փարատեցիր
    հոգւոյս մըռայլ տարակոյս .
դու , վա՛րդ , որ դեռ չ՛եկած փթթիլ
    մէջ իմ անշուք պարտէզիս ,
մեղր համբոյրէդ լոկ մէկ կաթիլ
    տալով արբշի՛ռ ըրիր զիս ,
քե՛ւ ինձ ժպտին՝ այս աշխարհէն՝
    անմահ կենաց քաղցր յոյսեր ,
ո՛վ իմս Եւա , ա՛ռ փոխարէն ,
    ա՛ռ իմ Քընար , Սի՛րտն ու Սէր ։

—1892—

4

# ԲԱՂՁԱՆՔ

Առ. Ծաւ

Նորէկ գարնան բարձ ու դալար
պուրակներէն, բուփերէն,
այգուն ցօղով ողողեալ յար
վարդի թերթեր քո՛ղ բերեն.
քո՛ղ փետուրներ բերեն ինձ ձան
չինիչ ապաւնոյ, տատրակի·
թիթռանց թեւեր օդասասան,
ձիւն փրփուրներ առուակի,
փետուր, փրփուր, վարդ, թիթռան թեւ
քող խառնուրին, ձեւ առնուն,
եւ կազմեն զոյգ մէ՛ջ մը թեթեւ
քողք՝ ուր գրեմ քու անուն :

*
* *

Թո՛ղ Դրախտին ածուներէն
հաղեն մի փունջ մանուշակ
հրեշտակներն, եւ ինձ բերեն
հիչ մ՚այ նեկտար անուշակ,
եւ Տիրամօր լուսաւոր կաթեն
կաթի՛լ մ՚ինձ տան եւ մի հիչ
իր արտասուաց անմա՛ռ շիթեն,
—երկրի ցաւոց ամոքիչ —.
արցունք Կուսին, կաթ ու նեկտար
մանուշակի գոյն առնուն,
կազմեն մելա՛ն մը աւրքասար
որով գրեմ քու անուն :

*
* *

Եւ քո՛ղ երթան լեռնէն, դաշտէն,
    անտառներէն թանձր ու թաւ,
ուր երգելով զիրար պաշտեն
    թռչունք անկեղծ ու անդաւ,
երթան բերեն ինձ բոյն ու բառ
    սարեակներու, սոխակի,
եւ անոնցմով կազմեն կիթառ
    նուրբ, հեշտաձայն կրկնակի,
որուն վրայ ես, հեզ պլուէս,
    խանդով մ'անմեղ եւ անհուն,
ցըմա՛ն երգեմ յերգ սիրուէս,
    ո՛վ իմս Նւա, քու անո՛ւն ։

—1892—

6

# ԱՂՕԹՔՍ

Նարդիկ, Նարկիզ-իս բերանն է՝ վարդի
բաժակն ուր կ'ըմպեմ երկնածիր նեկտար.
ու խոպան ճամբաս կը ծաղկազարդի,
հոգերուս բեռն ալ կ'ըլլայ դիւրատար:
— Աստուա՛ծ իմ, հոգին որ զանո՛նք քեզ պարտի,
անոնց փառաւորիչն, ա՛հ, տեսնել մի՛ տար:

* * *

Ոգի, խանդ, աւիւն չեմ փնտռեր հեռուն,
սիրոյս զեղոնն են, ջինջ, երկու հասուած.
աստղե՛ր ժպտին մէջն անոնց բիբերուն
ուր լողայ հոգիս մուքեն ապաւինուած:
— Անոնց արցունքէ, ցաւէ մոլորուն
մարիլն՝ ինձ տեսնել մի՛ տար, ո՛վ Աստուած:

* * *

Աղաւնիներուս վուվուն, դաշն, տաղու,
լեզուն պաստելի, թոթով, անկասար,
եուբեանցս մէջ հնչանք կը հեղու
օրհնենքի մը պէս անձառ, սրբասա՛ր:
— Այդ անմեղունակ ձայներուն տղու՝
ողբն ու կոծն, Աստուա՛ծ, ինձ լսել մի՛ տար:

* * *

Մարմնացուցի Քաղցրին, Գողտրին, Անգայտին,
հրեշտակնե՛րն ինչ երգիս մըտերիմ,
ընտրեալի, փոխ իսկ, զեղն անոնց այտին
Դրա՛խտ կը դ․․ձուենն կեանքն ուր կը յածիմ:
— Սիրէ՛ օր մ'անոնք պիտի անյայտին,
Այն օրն ինձ տեսնել մի՛ տար, Աստուա՛ծ իմ . . . :

—1909—

# ԿԱՂԱՆԴԻ ԵՐԳՍ

## ՆԱՐԴԻԿ ՈՒ ՆԱՐԿԻԶ

### Ա.

Տարի մ'ալ կ'անցնի այսօր մեր կեանքէն
որ , անփայլ , աղօտ , ա՛լ կը խոնարհի . . .
— Իմ հոգւոյս մէջ հազար ալէլո՛ւ կ'երգեն
ձայներ երկնաւորաց , ձայներ հինաւուրց ։

Յուշեր , վարանոտ խոհեր տխրունի ,
Նոր տարւոյն դրանն առջեւ կը դառնան . . .
սիրտս անձկաւ վայելքն ու հեշտա՛նքն ունի
ձմռան , ձիւնին մէջ՝ դալարուն գարնան . . .

Զի ես՝ բուսնին եմ , դուն՝ իմ ծաղիկներս ես ,
կեանքս հաստատող զոյգ անոյշ վարդիկ ,
ձեզմո՛վ եմ ուրախ , երջանիկ ու սէգ ,
Նարդի՛կ ու Նարկիզ , Նարկի՛զ ու Նարդիկ ։

Բ.

Բը՛նութեան ծոցէն՝ օրէղ , մեծափառ
Նուագներ , գըռուագներ կը պարզուին բիւր .
— Ձեր անմէկունակ մանկական բարբառ
է իմ հրճուանքի մեսամոս աղբիւր .

Մոխանի , լըճակին ալիք կապուտակ
կը ցոլացունեն երկնի վառ լոյսեր .
Ձեր հըրեշտակի ջինջ բիբերուն տակ
կը ցոլայ արեւս որ կը կոչուի Սէր :

Կը ցնծամ երբ դուք օրրունքներէն շարժէք .
Ձեր մէկ ծըպիտը , մէկ ճի՛չը զուարթիկ ,
ունին գանձերո՛ւ համասար արժէք ,
Նարդի՛կ ու Նարկիզ , Նարկի՛զ ու Նարդիկ :

Գ.

Մըռայլ խորհուրդներ , յոյզեր դառնագին
կ՚եռան վայրագակ մեր ճակտին ներքեւ .
. . . արշալոյսին պէս սո՛ւրբ է ձեր հոգին ,
խնկաբոյր խորան աստուածապարգեւ :

Թոյլ ու դիւրաբեկ է քընարիս թել
որուն վրայ մատներս մերթ կը դողդոջեն . . .
Ձեր դէմքն է որ գայ ինձ հըմայք ազդել . . .
ձայնե՛ր կը լըսեմ ամպերուն մէջէն . . . :

— Ծըլվըլուն , ծենծող ու ծըընօրհունակ
զոյգ մը թռչնիկներս ո՛չ փետրազարդիկ ,
դո՛ւք կուտաք երգիս ծեծն ու եղանակ ,
Նարդի՛կ ու Նարկիզ , Նարկի՛զ ու Նարդիկ ։

Դ.

Տարի մ՚այ կ՚անցնի այսօր մեր կեանքէն
որ անփայլ , աղօտ , ա՛լ կը խոնարհի . . .
— Ի՛նչ փոյթ , Կաղանդին գալուստը կ՚երգեն
Նարդիկ ու Նարկիզ , սոխակ-քանարի . . . .

Իղձեր , փափաքներ , անուրջներ տարտամ
այսօր մեր հոգւոյն մէջ կը սողոսկին . . .
ձեր վարդ այտերուն ես համբոյր մը տամ ,
հոտոտեմ , գրգռեմ ձեր հերաց ոսկին ,

Եւ զարդափայլից մաղթեմ որ՝ երբէք
չը հասկընաք թէ ի՛նչ չար են մարդիկ ,
եւ ցաւի կաթի՛լ մ՚արցունք չը թափէք ,
Նարդի՛կ ու Նարկիզ , Նարկի՛զ ու Նարդիկ ։

—31 Դեկտ. 1900—

# ՈՒՂԻՆԵՐՈՒ ՔՈՎ

Օլիվիեն

Այն ուղիներու քովն, եզերքն ի վեր ,
խոտին մէջ ծաղիկ՝ ճեղքին, աղուորիկ ,
Ի՛նչ հոգիներ կան անոնց. անձնուէր .
մէկ կողմ մնացած հե՜զ, մենաւորիկ.
այն ուղիներու քովն , եզերքն ի վեր . . . :

Խոտին մէջ ծաղիկ հեզիկ. աղուորիկ.
որոնց վրայ ձեռք մ՚երբեք չի դպար .
տենչերով տոչորուն սիրտեր կան գողտրիկ .
հեշտաբոյր , ոսկայ՚ն անխայլ . անբարբառ ,
խոտին մէջ ծաղիկ , հեզիկ , աղուորիկ . . . :

Ի՛նչ հոգիներ կան անոնց , անձնուէր ,
որոնք կը ծնին , կուլան մեկուսի .
գութ ու գորովի բո՛յն սիրահրաւէր ,
լանջքին տակ անհուն կը նոյն ու կուսի
Ի՛նչ հոգիներ կան անոնց . անձնուէր . . . :

Մէկ կողմ մնացած հե՜զ , մենաւորիկ ,
երազուն աչքեր լոյս ու կապուտակ
որո՛նց ժպիտին թրթռումն անդորրիկ
կը խամրի՝ խորունկ . խո՜ւլ ցաւերու տակ ,
մէկ կողմ մնացած հե՜զ , մենաւորիկ . . . :

Այն ուղիներու քովն , եզերքն ի վեր ,
մարդիկ , անտարբեր , կ՚անցնին ու կ՚երթան . . .
իրենց ոտքին տակ ծաղկունք հոգիներ՝
մարքին մէջ , լո՜ւռ , կը մեռնին անձայն ,
այն ուղիներու քովն , եզերքն ի վեր . . . :

— Լ. Ն. Օ —

# Ի՛ՆՉ ՓՈՅԹ

ՁԱՑՆԵԱԿ

Մութ են երկինք, փըչեն հողմունք դառնաշունչ
եւ փրփրալից կը ստրսի ծովն անյատակ.
դու, անհարկու ըսպառնայի՛ք մահաշունչ,
որոտմանց ձայնն ալ կը թնդայ ամպոց տակ:

Մութ են լերինք. հովիտք անքոյր, անմըռունչ,
ո՛չ վարդ ունին, ո՛չ ալ շուշան ըսպիտակ.
ծառք անտերեւ, անձրեւաթուրմ, լուռ ու մունջ,
կ'ողբան զարնան պայծառ աւուրց յիշատակ:

—Այլ ի՛նչ փոյթ ինձ թէ զոռան ամպք եւ այերք,
թէ մռայլ են դաշտք եւ թէ թըշուառ չունին երգ.
Է՛ն, ի՛նչ փոյթ ինձ սուգն անտառաց եւ բլրոց,

Մինչ կենսատու, ճաճանչափայլ եւ անշէջ
յիս կը վառի, կ'արծարծի վէհ սիրոյ բոց,
եւ աչերուդ լոյսն՝ Ա՛յգ բերէ հոգւոյս մէջ:

—1884—

# ԲԵՐԱՆ ԿՈՒՍԻՆ

Փոքրիկ, վարդագեղ ունէր մի բերան
Եւ շարք մ'ատամանց ողորկ, ձիւնազօյն.
հոգեյոյզ ժպտից ջի՛նջ բընակարան,
սիրոյ, հեշտութեանց երանաւէտ բոյն,
փոքրիկ, վարդագեղ ունէր մի բերան:

Եւ շարք մ'ատամանց ողորկ, ձիւնազօյն,
շողար, սուր, մաքուր, փայլուն, կորովի,
այլ ոչ ո՛ք կարծէր թէ - ծաղկին մէջ բոյն-
շրթանցն ետեւ կար, արեան ծարաւի
Եւ շարք մ'ատամանց ողորկ, ձիւնազօյն:

Հոգեյոյզ ժպտից ջինջ բընակարան
բերանն այն ժպտէր ժպտով մ'երկնային,
Աստղըկանըւէր, մշտավառ խորան,
աղբիւր գըգուանոյշ շնորհաց կընային,
հոգեյոյզ ժպտից ջինջ բընակարան։

Սիրոյ, հեշտութեանց երանաւէ՛տ բոյն...
թառեցաւ պահ մ'անդ սրտիկս ու սընաւ...
այլ սուր ատամունք խածին զայն իսկոյն,
զի տըրուած չէ՛ր ինձ ունենալ բընաւ
սիրոյ, հեշտութեանց երանաւէտ բոյն...։

—Փոքրիկ, վարդագեղ ունէր մի բերան,
որ այժմ ա՛յլ երթանց քաղցր հեղու նեկտար,
մինչ իմ խռով երազք իւր վրայ գուրգուրան
եւ անյագ տենչիւ հեծեծեն անդադար.
«. . . Փոքրիկ, վարդագեղ ունէր մի բերան . . . :»

—1886—

# ՄԱՏՈՒՆՔ ԿՈՒՍԻՆ

Անճա՛ռ, աննըման, ջինջ եւ անապակ
մատունքդ. ուր վայլէ ոսկի գաւազան,
բանան դրունքն ամէն սրտից անմահական
երբ շողան աչերդ՝ լուսո՛յ աւազան,
անճառ, աննըման, ջինջ եւ անապակ:

Մատունքդ, ուր վայլէ ոսկի գաւազան,
Ձիւնոյշ զեղ բամպակ, նուրբ են զերդ պրտու.
այլ բաւ՛ ինձ, կո՛յս, ո՞ր վայրի գազան
փոխ տրուաւ քեզ իւր նիրաններն հասու,
մատունքդ՝ ուր վայլէ ոսկի գաւազան:

Բանան դրունքն ամէն սրտից անմահական,
որպէս չարագործք՝ խորտակեալ արկեղ
միշտ արծարծելով քնքուն ներսից պտապակ
այլ յաւէ՛տ քողով անդ անբոյժ մի կեղ,
բանան դրունքն ամէն սրտից անմահական:

Երբ շողան աչերդ, լուսո՛յ աւազան,
հոգիք – խոյ փիրուզք – կ՚ընթանան առ քեզ,
այլ մե՛ն մի ակնարկդ՝, նո՛ւր զարմանազան,
կը լափէ մի սիրտ սիրո՛յ ողջակեզ,
երբ շողան աչերդ լուսո՛յ աւազան:

Անճառ, աննըման, ջինջ եւ անապակ
հոգիս երբ անցնի աշխարհիս սեմէն,
կո՛յս, բո՛ղ դագաղիս նեղ, կարճ ու տափակ
կափարիչն ալ քու մատո՛ւնքդ գամեն
անճառ, աննըման, ջինջ եւ անապակ:

—1885—

# Առ Արուսեակ

Երկնից մէջ կայտռող թուխ ամպոց ներքեւ,
օրօրոց եւ բոյն ծանթից մահարկու,
հըրա՛տ շողշողուն, լոյս կենսապարգեւ,
փայլէին երբեմնի աչկունքըդ երկու,
երկնից մէջ կայտռող թուխ ամպոց ներքեւ։

Օրօրոց եւ բոյն ծանթից մահարկու.
ամպք պատառէին ըզքեզ, եւ լուսն
եւ ես հարցնէինք, լռին, մէկ մէկու.
«Ա՞մպք են թէ աչկունք գեղանոյշ լուսին,
օրօրոց եւ բոյն ծանթից մահարկու....»

Հըրատ շողշողուն, լո՛յս կենսապարգեւ,,
Հետեւեցար դու ճակատագրիդ չար,
մի[illegible]աւարի հոգւոյս կը փարատէր քեւ,
հեռացա՛ր յանկարծ, աւա՛ղ, եւ ծիչար,
Հըրատ շողշողուն, լո՛յս կենսապարգեւ։

Փայլէին երբեմն աչկունքըդ երկու...
այժմ հայի՛նի միայն այստեղ վերեւ,
եւ յայն վայրն օտար յորում կ'ապրիս դու
մա՛րդ չի կասկածիր թէ՛ որպէս արե՛ւ
փայլէին երբեմն աչկունքըդ երկու....։

Երկնից մէջ կայտռող թուխ ամպոց ներքեւ
բիւրաւոր յոյսեր պըլպըլան հեռուն,
այլ առ քե՛զ սլանան իմ յուշք, երազք, եւ
զքե՛զ որոնեն իմ խոհեր թափառուն
երկնից մէջ կայտռող թուխ ամպոց ներքեւ....։

—1886—

# ԱՌ ՃԵԼԼԱՀ

Երբ լոյսն այգուն կարմրագեղ
պատռէ ճզմէ խաւարին քօղ ,
Եւ մեր կանթեղն երկնից շքեղ
արփի թափէ վերուստ ի հող ,
Եւ բնութեան մէջ՝ դեռատի
ցնծան ծաղկունք , ծառք ու բոյսեր ,
փակեալ մնան դրունքն իմ սրտի
զի չէ՛ շողար անդ քոյին սէր ։

* * *

Երբ լուսնակն ալ , գիշերն ի քուն
դեգերելով քայլիւք թեթեւ ,
Երթայ ննջել հանգիստ ի քուն
ստուերապատ լերանց ետեւ .
Երկրի գիշերն ալ ինձ չէ մութ ,
Ինչպէս ինձ չեն մութ քու լոյսեր ,
Քանի որ չեմ տիրած հոգւոյդ ,
Քանի որ ինձ չես տար քոյ սէր ։

* * *

Իմ խաւարին՝ դու՛ միակ ջահ ,
Եւ համբոյրդ՝ իմ կենաց աւետին .
ըզքեզ սիրել պիտի , ցը մա՜հ ,
լինի երազն հեզ պըրւետին .
Եւ երբ տանին զիս հոն ուր միտս
թաղուին , դագուին մըռայլ փոշեր ,
դիակիս հետ ցուրտ , բազմավլիօս ,
պիտ՚ թաղեն , Ճելլա՛հ , քոյ սէր ։

—1886—

# ԱՌ ՃԵԼԼԱՀ

ԵՐԿՈՒ [illegible]ԱՅՆԵԱԿՆԵՐ

Ա.

Ով ձեղան, դու վարդ մ'ես անփուշ
որ արբեցած հովին [illegible]տէն .
Եակ մ'ես դու նուրբ ու [illegible]
զոր սուրբ սիրոյս [illegible] պաշտէն :

Աչկունքդ հաստեալ են իրեւ նուշ .
Քու պարմ խնձոր ու դեղձ այտէն ,
ուր միշտ ցոլայ ժպիտդ անուշ ,
բուրմունքդ , [illegible]նոյն ու գեղ ցայտէն:

[illegible]նքդ , չի՛կն իբրեւ կեռաս ,
բարբառ[illegible]ին , երբ յոյզ[illegible] կ'եռաս ,
զերդ Եւողեա՞ն պերճ քնար ինչ .

Լանջդ է նուրբ զերդ նորաբոյս ծառ
որոյ վերայ , պլպուլք պայծառ ,
կը դողդողան երկու նարինջ . . . :

Բ.

Նայուածքդ՝ երկնից է ճառաւիղ .
ու ձիկդ ալ զանձ մ'է թախթախուր .
Եւ մասունքդ , երբ զարնէն տաւիղ ,
բազմազան կանգնին հոգւոյդ մախուր :

Կիրբ է նազանկդ ու միտքդ՝ ուղիղ
ներաշխարհդ տակ գեղապանձուր .
—Բէ ոչ քոյ մօս՝ Բարունյն ճաւիղ
պէտք է փնտռել չզիտնեմ ո՛ւր... :

Խօսուն գոհար, դու, Արարչին
գլուխ գործո՛ցն ես անցուցս վերջին.
զաշխա՛րհ կոչեմ առ այս վըկայ,

Ջի, Բարիզէն մինչեւ ի [illegible]ն,
Ալեմտաղէն՝ ի Քամչաթկայ,
Քեզ պէս աղջիկ՝ հա՛տ մ՛ալ չիկայ։

— 1886 —

## ՆՈՑԵՄԻ

### Ա.

Երբ կ'երեւաս, նուրբ նակշիւ,
թարմ այտերով հոգեգրաւ,
կանանց սեռին՝ զարդ, պատիւ,
Արարչութեան՝ փա՛ռք իրաւ,

Ա՛յնքան չքնաղ ես. ըրբեղ,
ո՛ւ անկենքն ալ, Նոյեմի,
կը հարցունեն.—«Ո՞հ, այս գեղ
«Վարդի պարնայնո՛յ է մի։»

Բ.

Արեւին շող լուսագես
որ սէր [illegible] կեանք կը հեղու ,
երբ կը խօսիս կամ կ'երգես ,
ձայնով անուշ եւ աղու ,

Զմայլկոտ ամպք եւ աչերք
կը մրմնջեն , Նոյեմի .
« - Այս նուագ , դայլայլ , այս երգ
«Քնարի՞, թռչնո՞յ է մի :»

Գ.

Պչրանքդ է գողտր ու սիրուն ,
— Նազելանեմ լուսինկայ—
ու միտս , հետ քու քայլերուն ,
քաղցր , տանող բա՛ն մը կայ ,

Որով մանկունք ու կուսանք
կը զմայլանան , Նոյեմի .
« — Ա[illegible]նք ա՛յսքան չնորհք ո՞ւր տեսանք,
«անմեղ աղաւնո՞յ է մի :»

Գ.

Երբ յածելով՝ խնկաշունչ
դալարեաց մէջ առանձին ,
ծաղիկներէ կապես փունջ ,
ամենքն ալ քեզ նախանձին ,

Եւ երբ կուտայ քեզ համբոյր
զեփիւռն այգուն , Նո՛յեմի,
կը հծծէ . —«Այս գոյն , այս բոյր ,
«Ծաղկի՞ երկնայնո՞յ է մի . . .»

Ե.

Երբ խոկմանց մէջ թափառած ,
կուսական ու կենսային ,
ժպտին աչքդ եւ կայծ հեռուն
փրփրոտ ալեաց կը ծայլին ,

Ջուրերն յուզուած , մրմռին ,
կը դողդոջեն , Նո՛յեմի .
— «Այս խոր նայուածք , այս ժպիտ,
«անմահ զուարթնո՞յ է մի :»

Զ.

Բայց՝ չ՚անսացի՛ր բընաւ դու
սիրատենչի՛ս իմ ողբոց ,
եւ , զուրկ ստուերէդ կենսատու ,
երբ կը մարի հոգւոյս բոց ,

Ես — ա՛հ , լոկ՝ քեզ ծարակ —
կը հարցունեմ , Նո՛յեմի .
—«Սիրտդ որ ունիս լանջիդ տակ,
«սառ ձմեռայնո՞յ է մի :»

— 1888 —

# Մ Ա Ր Ի

Տարիներով, տաս, տա՛ս առաջ,
— ո՛հ, կ'արթըննա՛ն դառն յուշեր —
աչքովն հոգւոյս սիրահառաչ,
ըզքեզ տեսայ մէկ գիշեր.
կոյսերու հետ կառնէիր պար,
կ'արձակէր լանջքդ, ո՛վ Մարի,
ցոլմունքն անհառ եւ անօրպար
չինիչ ու մաքուր մարմարի :

* * *

Խունկի նըման ամպապալացիկ,
երազի պես լուսափունկ,
ձայնդ անուշ էր, զողեր, ազդեցիկ,
երթունքդ ալ՝ նուրբ ու փափուկ :
Մազերուդ տակ ըստուերարկու,
դէմքիդ վերեւ, ո՛վ Մարի,
կը շողային կարծես երկու
աստղեր երկնից կամարի :

* * *

Երբ, հանդիպո՛ւմ կամ պատահար,
մընացինք պահ մ'առանձին,
իմ ձեռքերուս մէջ դողահար
քու մատներդ ալ դողացի՛ն . . .
Եւ, բառերով հուր կենարար,
մենք, այն գիշերն, ո՛վ Մարի,
ուխտեցինք միշտ սիրել զիրար,
սիրել սիրով յիմարի՛ . . . .

* * *

Բայց, երբ անցան օրեր սակաւ,
 —ա՛հ, թողէ՛ք զիս, դառն յուշեր —
քեզ պէս, նրկուն, նուրբ հասակաւ
 ընկերուհւոյդ, մէկ գիշեր,
—«Քոյր իմ, այդքան դիւրախա՞բ էք»
 կ'ըսէիր դու, ո՛վ Մարի.
«կրնայի՞ սիրտ, Սէ՛ր տալ երբէք
 մէկ երազող տխմարի...:»

* * *

Տխմարն խպառ տարաւ այլուր
 իր երազներն ու խոհեր.
ուրախ հնչեց ձայնդ հեռաւոր.
 հոգեակդ՝ ազատ, ա՛լ զո՛ւ էր...
Եւ եղար դու է՛ւս երջանիկ
 երբ հարո՛ւստ մը, ո՛վ Մարի,
առաւ ըզքեզ իրեն... կընիկ
 փոխան մէ՛կ մեծ գումարի...:

* * *

Չեմ գանգատիր ամենեւին
 թէ, անարդար կամ ծըլաս,
Երկինք իմ մէկ Քընար տըւին,
 քեզ այ՝ պերճանք ու պայլաս....
Այլ կ'արբընա՛մ յիս դառն յուշեր,
 կ'ողբամ ըզքեզ, ո՛վ Մարի,
Երբ մտքիս մէջ, ամեն գիշեր,
 պսպղուն մ'այրի ու մարի՛...;

# ՓՈՔՐԻԿ ՈՒՂԻՆ

Թրգ. Հայկել Սամուէլեանի

Փոքրիկ, պաշտելի՛ ուղի մ'է ան,
մորենիներով փակ երկու քովէն,
ուր յասմիկներ ալ ժայթքին պէղանի.
փոքրիկ, պաշտելի՛ ուղի մ'է ան։
Հոնկէ կ'անցնին միշտ կոյս ու պատանի,
թեւ թեւի, սիրոյ բառեր քրքուլին...։
Փոքրիկ, պաշտելի՛ ուղի մ'է ան,
մորենիներով փակ երկու քովէն.

Հոնկէ կ'անցնէինք երբեմն, ա՛ն եւ ես,
սարեակի բոյներ գտնելու համար...
— Այն օրերն աչքիս առջե՛ւն են կարծես... —
Հոնկէ կ'անցնէինք երբեմն, ան եւ ես.
Ծաղկաքաղելով թռչուններու պէս
յոյսեր, խոստումներ, երդումներ յիմար,
Հոնկէ կ'անցնէինք երբեմն, ա՛ն եւ ես,
սարեակի բոյներ գտնելու համար...։

Խե՜ղճ աղջնակն, ա՛ն, անվերջ կը խնդար,
կը խնդա՛ր — ի՛նչ ալ սիրուն էր, գիտե՞ք... —
կը հառաչէի ես, մինչ անդադար
խե՜ղճ աղջնակն, ա՛ն, անվերջ կը խնդար,
երբոր տեսնէր զիս շատ անմխիթար...։
Զինքը մոռնալ, ա՛հ, չեմ կրնար երբեք...։
Խե՜ղճ աղջնակն, ա՛ն, անվերջ կը խնդար,
կը խնդա՛ր, ի՛նչ ալ սիրուն էր, գիտե՞ք...։

Ծաղիկ կը փեթթէր ձախէն ու աջէն,
փունջ փունջ երեսիս կը նետէր բոլոր . . .
— այս խաղերն, քա՛ք, հրեշտակային չէ՛ն —
Ծաղիկ կը փեթթէր ձախէն ու աջէն.
որոնց ցօղաթուրմ բուներն, բողբոջէն
վրան արցունքներ թափէին մոլոր . . .
Ծաղիկ կը փեթթէր ձախէն ու աջէն.
փունջ փունջ երեսիս կը նետէր բոլոր . . .

Տաս կը նախանձէր ան թռչուններուն,
ըսելով. — «Ո՛ւր էր, տային ինծ թեւեր,
ճախրելու համար երկինքն, հո՛ն, հեռո՛ւն . . . :»
Տաս կը նախանձէր ան թռչուններուն.
անոնք, թեւաբախ, թեթեւ, թափառուն,
կը սուրային թաւ ծառերն ի վեր . . . :
Տաս կը նախանձէր ան թռչուններուն,
ըսելով. — «Ո՛ւր էր, տային ինծ թեւեր . . . »

Թեւե՜ր . . . տրուեցա՛ն հետ աղջընակին,
քանի որ մեռաւ . . . — ու կ'արտասուեմ ես —
լըռեց ձայնն անոր անմեղ խնդուքին . . .
Թեւե՜ր . . . տրուեցա՛ն հետ աղջընակին.
Իսկ այն փոքր ուղին այլ՝ եւ իմ աչքին՝
ցուրտ, լո՛ւռ կ'երեւայ գերեզմանի պէս . . . :
Թեւե՜ր . . . տրուեցա՛ն հետ աղջընակին,
քանի որ մեռաւ . . . — ու կ'արտասուե՜մ ես :

24

# ՀԻՒԾԵԱԼ ԱՂՋԻԿԸ

Զ. Հ.-ի յիշատակին

Պայծառ էին իր աչքերն, այտերն ալ թարմ ու զուարթ,
վա՜րդ, վա՜րդ, վա՜րդ.
Կուգար զեփիւռն անոնցմէ՝ քաղել քաղցրիկ ի համբոյր,
բո՜յր, բո՜յր, բո՜յր.
Շուշանք զայն կ'անուանէին, ի տես գեղին, անոնց քոյր,
քո՜յր, քո՜յր, քո՜յր...:
Թռչունն ալ պէս նորաթեւ կ'երգէր ան, սիրտն ի ծիծիւ,
ծի՜ւ, ծի՜ւ, ծի՜ւ...
Եւ կը ցոլար իր ճակտէն, երբ որ ժպտէր կամ խօսէր,
սէ՜ր, սէ՜ր, սէ՜ր...։
Բայց, քա՜ն մ'ըզգաց մէկ գիշեր, պաղ քրտանց մէջ արթնցաւ,
ցա՜ւ, ցա՜ւ, ցա՜ւ...։
Քրտինքներն իր այտերէն կը սահէին սրավար,
վա՜ր, վա՜ր, վա՜ր...։
Հազ մ'ալ պոռթկաց իր կուրծքէն, չոր հա՞զ մ'էր թէ պարզ հարբուխ,
բո՜ւխ, բո՜ւխ, բո՜ւխ,
Եւ ա՜լ հազա՜ց ու նազաց հէգ աղջիկը դալկահար,
յա՜ր, յա՜ր, յա՜ր...
Ունեցաւ խռով երազներ, տագնապայոյզ զառանցանք,
ցա՜նգ, ցա՜նգ, ցա՜նգ...
Որք իր կուրծքին տակ բացին արիւնահոս, դա՜ռն աւերք,
վէ՜րք, վէ՜րք, վէ՜րք,
Եւ սիրաշող այն աչերին սկսաւ մարիլ լոյսն, աւա՜ղ,
վա՜ղ, վա՜ղ, վա՜ղ...
Աւա՜ղ, քանզի երկրիս վրայ, ախտիդ դարման, ո՜վ աղջիկ,
չի՜ք, չի՜ք, չի՜ք...
Կը մօտենա՛ր մահն, հազիդ, ցաւերուդ դեղն ամոքիչ,
քի՜չ, քի՜չ, քի՜չ,
Եւ օր մ'հոգեակդ համբարձաւ, պարզած անբիծ իր թեւեր,
վե՜ր, վե՜ր, վե՜ր...։

Պառաւ կընիկ մ'աղքատիկ պատնեց ըզքեզ անյապաղ ,
պա՛ղ , պա՛ղ , պա՛ղ . . .
Ճերմակ դագաղդ գամեցին սուր գամերով վեց կամ ութ ,
մո՛ւթ , մո՛ւթ , մո՛ւթ . . .
Յուղարկաւորք ալ ըզքեզ , առին , տարին , անմրմունչ ,
մո՛ւնչ , մո՛ւնչ , մո՛ւնչ ,
Տաճարն ուր սուրբ աղօթքներն ու տխուր զանգերը թնդան ,
դա՛ն , դա՛ն , դա՛ն . . .
Ետքն ալ տարին , թաղեցին , հեզ աղջըկան գեղջկօն ,
հո՛ն , հո՛ն , հո՛ն ,
Ուր սեւ նոճեաց սուզին տակ գերեզմա՛նը կը բացուի ,
վի՛ն , վի՛ն , վի՛ն . . . .
— Հիմայ զքեզ հոն կը ծածկէ ամենակուլ ու պահող
հո՛ղ , հո՛ղ , հո՛ղ . . .
Ձագիր սողնոց , որդոց հետ պար կազմելով միասին ,
սի՛ն , սի՛ն , սի՛ն ,
Լանջքիդ վրայ անկենդան ա՛լ կը հեղուն զարշ նըռնիք ,
նի՛զ , նի՛զ , նի՛զ . . .
Կ'ըլլայ անոնց քու չքնաղ դէմքդ , անարատ քու պատկեր ,
կե՛ր , կե՛ր , կե՛ր ,
Մինչեւ մարմինդ եւ ոսկերք դառնան տակաւ առ տակաւ
կա՛ւ , կա՛ւ , կա՛ւ . . . .
Մայրդ , քարին վրայ ցուրտ որ հողակոյտդ է գոցած ,
ցա՛ծ , ցա՛ծ , ցա՛ծ ,
Յաճախ կուգայ բունագիրկ թռչունի պէս ճըլվըլալ ,
լա՛լ , լա՛լ , լա՛լ ,
Եւ զարնելով իր սրտին ուր կը վառի բուռն ողբոց
բո՛ց , բո՛ց , բո՛ց ,
Անիծել կեանքն , հեծելով. «Անխիղճ, անգո՛ւթ Եհովան ,
«վա՛ն , վա՛ն , վա՛ն ,
«Ուրի՞ր ծագումն , ո՛ւր եւ զիս , եկո՛ւր , քեզ չունիմ ահ ,
«մա՛հ , մա՛հ , մա՛հ . . . :»

# ՊԶՏԻԿ ՏՂԱՔԸ

Տիրան Իսաապարեանին

Սրախաներն — այն վըսեմ ,
վէ՛հ պարգեւներն Արարչին —
մի՛ զարմանաք երբ ըսեմ
թէ . . . ջիղերուս կը դպչին :

Անոնք ունին սպա՛ղ աչքեր ,
սեւ կամ կապոյտ , երկնայի՛ն ,
որք այտերու մէջէն գէր՝
պայծառ ապուշ կը նային :

Խելք ու միտքէ բընատուր
զուրկ են , բանան երբ բերան .
միշտ անիմաստ , կըցկըտուր
ճիչ ու կոչեր կը բառնան :

*Դէ՛ , դէ՛ , տա՛ն տա՛ն , պօ՛ պօ՛ , թի՛ . . .*
կը ճչըճըրան անձանձիր .
մարդուն սի՛րտը կը ճաքի ,
թէ կրնաս՝ բան մ՛հասկըցի՛ր :

Ծո՛ր ծո՛ր, պա՛ր պա՛ր, ճո՛ պպաղայ . . .
օրրէ՛, երգէ՛, յոգնէ՛ գուն,
պէպէն կուլա՛յ ու կուլայ,
յամա՛ռաբար, մի՛շտ արթուն .

Փորձա՛նքն՝ որմուն դէմ մինակ
կ՚զգայ ինքզինքն եւ անզէն .
այսերկին վար, տա՛րուդակ,
արցունքները կը վազեն :

Եւ տողիքներ դաշտս գաւզան
այն երբեմնի մեղեդին,
որոնց վրայ . . . ապագա՛ն
կը ծայլի ճեղ ամպերէն . . . .

Այդ գլխուցանք նորեկ
երբ կը բզկայ . կը ճչէ,
գիշե՛ր, տարու թէ ցերեկ .
խանձիղեմայր քա՛ն մը չէ :

Ցերոյ, որը սաստ անգամ,
— գործ անապատի եւ խոտոր —
այդ բույլէչքին անցզգամ
պէտք է ճակէլ վաղուց ու տար .

Մաքրել, սրբել վարն ու վեր,
փոխել ծաղիկ, լցնել ջուր.
որոնք կէս ժամ չե՛ն տեւեր . . .
—անտանելի՜ է, խա՛չ որ ։

—Մանուկներն ալ ես կ'ատեմ.
անճարակ կամ անօգնական
պատճառ կարգ ու վարքի դէմ
բաներ կ'ընեն ամէն օր ։

Խիղճ, ամօթը՝ չեն գիտեր
ո՞ւր կ'սկսի, ո՞ւր կ'աւարտի.
տունն ու փողոցը, ծառեր
կը վազվզեն . . . անվարտի՛ ։

Եւ ամառները, անխղճով.
հրեշտակիկներն ու պատանին,
քիթ կը խառնեն մատներով
ու բերաննին կը տանին . . . ։

Աչքառաց, անգաղտնապահ,
խառնակիչներ են ժպտուն.
իրենց վայրկեանն անզգայ
կը կործանեն յանկարծ տուն ։

Անոնց համար բա՛ն չկայ
ծածուկ մնալու արժանի .
մարդ պարզապէս կը տեսնա՛յ
որ լեզուներն չը բանի :

Կեղծ ծա՜մ ունիս , կեղծ ակռա՛յ .
մայրիկն ալ կուրծք . . . անվաւե՛ր .
մանուկը զայն կը պոռա՛յ
հիւրերուն երե՛սն ի վեր:

Պաչիկ մ'առի՞ր թարմիկ յոյն .
ըսպասուհւոյն երեսէն . . .
օփփելիսակ կ'երթան իսկոյն
իրենց *մամային* կ'ըսեն .

Կամ *մաման*՝ ջերմանոցին
մէջ՝ խօսելո՛ւ խիստ կամաց ,
մարդու մը հետ , առանձին . . .
*պապայի*՛ն կուտան իմաց:

Երե՛նք պատճառ կ'ըլլան որ
ամուսնոց մէջ՝ անտեղի
փոխանակութիւն ամէն օր
խօսքեր կըծու կամ լեղի .

Եւ տըղոցմէն թափթփեան՝
դըպրացիներն համօրէն.
յաղթող օ՛րն ինչ կ'իմանան
թէ այր ու կին կըռուեր են :

Հապա անօթի, ցուրտ տեսակ
հող ու ծախքերն անհընար
որք մասէն սիրօն ու ֆըսակ,
ամուրին եթէ գիտնա՛ր . . . .

—Փոքրիկ տըղաքն ես կ'ատե՛մ . . .
թէպէտ երբեմն, իրաւ, կան
գողեր եակներ այգեդեմ
լի օրինակով դիւրական,

Որոնց անմեղ, անաշօտակ
լեզուն, նայուածքն ու հոգին՝
երջանկութեա՛ն տան նաւակ
անհրապոյր մեր կեանքին :

Եւ անոնցմէ երկու հատ,
սիրով մ'անհուն, անհարկո՛ւ,
կը պաշտե՛մ ես անընդհատ.
—Զագուլիկնե՛րս ի՛մ երկու . . . .

# Մանկան Տարեդարձ

Մեռան , կորան քաղցունք զուարթ ,
պաշարել են թուփն ու բոյնը ,
Եւ անձառն ալ կորանցուց արդ
իր զմրուխտի վառ գոյնը :

Սեւ ամպերով գոց երկինքն է
տեղան անձրեւն ու հովը ,
ամրան մա՛հը կ'ողբերգեն
մրրիկին ձայնն ու ծովը :

Տժգոյն արեւն երբեմն հազիւ
կ'այցէ մեր ցուրտ օրերը ,
մինչ լուսինն ալ , հազար նազիւ ,
խոյս տայ երկնից խորերը :

Մո՛ւր՝ ամէն տուն , փակ՝ ամէն դուռ ,
լուռ են պարտէզն ու հիւղը ,
ամայութիւն , ա՛հ եւ սարսուռ
կը պատե՛ն հիւղն ու գիւղը :

Կորսնցուց կեանք, խանդ ու նուագ
ամրան չքնաղ Վոսփորը,
ուր լայնաբաց թեւով ամպ
կը ճախրէն նայն, որորը . . . .

—Բայց ի՞նչ փոյթ ինծի թէ ծառք կ՚օրրեն
իրենց անզարդ ծըլինքը,
թէ չեն հնչեր սարեն, ձորեն
Հովուին ձայնն ու սրինգը :

Կամ թէ այգուն հեզիկ հովին
տեղ՝ կը փըչէ սառ փուքը,
եւ փրփրասաս ալեաց ծովին՝
խառնէ ամպոց արցունքը :

Կը սիրե՛մ ես՝ հանճարազրաւ,
տխրազդեցիկ աշունը,
Քանզի, որդեա՛կ, ա՛ն մեզ բերաւ
ըզքե՛զ, ծաղկանց նախասունը :

Այսօր ինկան քու զոյգ ամեր
ժամանակին անդունդը,
եւ ահա՛ զուարթ սիրտերն ալ մեր՝
կը տօնեն քու ծընունդը :

Թէեւ այսօր գիրկէս հեռի
Են քու վառ բոյրն ու հոտը,
խունկ, որ անդուլ կը թափառի,
կուգայ հանգչիլ քու մօտը:

Անմեղ էա՛կ սիրապաշտութեան,
Մանկանց աղօթքն, անուշը,
դէմքդ ու ձայնիկդ, առո՛ւ անունդ
կը զօրացնեն իմ ուշը:

Կը յիշեմ կլոր, խարտեաշ, վա՛ռ վառ
քու բարեպաշտուն աչերը,
որ զինարբուք կ'ընեն ի սպառ
մեր անմեղ խաղերը:

Մազերդ՝ որոնք գեղապանծուր
կը պճնեն քու ճակատը,
որոնց՝ ոսկւոյ թե՛լ մ՚է մաքուր
կարծես՝ պսէն մէկ հատը:

Կը յիշեմ թուխ աչերդ ալ, գերզ
քան բամբակն ու բալիքը,
որոնց տեսքն՝ նշխարանձ ու կի՛րք
կը զգան, կայծն ու բամբերը:

Ու բերանդ այ մեղրածորան՝
 որուն ձայնին խաղերը
աւելի ջինջ, անկե՛ղծ էին քան
 մեր նայերն ու սազերը . . . :

Եւ կը յիշեմ քու դողդոջուն
 մըսեղ, փափուկ լանջերը .
եւ մանաւանդ համեղ, ննջուն
 շրթունքներուդ պաչիկը ։

Բայց, առաւէ՛լ քան ամենայն,
 քան քու թուշերն ու ճիտը,
ինչ որ սիրեմ՝ ժըպի՛տդ է այն,
 ժըպիտներուն վըճի՛տը ։

Եւ մարդոց մէջ՝ ամէնէ՛ն չոր
 կարծրասիրտն ու կոպիտը,
կը քաղցրանայ իսկոյն, խա՛չ որ,
 երբ տեսնէ քու ժըպիտը ։

* * *

Այլ ի՞նչ մաղթանք ուղղեմ առ Տէր .
 նա՛ կը վարէ աշխարհը,
հովիւ քաջ է, նա չը՞ գիտեր
 հոգւոյ գառանն ու ոչխարը ։

Թո՛ղ ինքն Աստուած ամենազօր
պահէ քու նուրբ տարիքը.
Եւ փայլելիս հանապազօր
կեանքին ամէն բարիքը:

Պակաս չ՚ըլլա՛ն հոգւոյդ խորքէն
Հաւատքն ու Սէրն ու Յոյսը.
միշտ երեւա՛յ քեզ երկինքէն
բարւոյն ուղղորդ ջինջ լոյսը:

Ու ժպտի քեզ ա՛յնքան առատ,
հաճոյ ըլլայ քեզ Բաղդը,
որ աշխարհիս մէջ չ՚ողբա՛ս շատ
քու կորուսած Դըրախտը:

— 1886 —

[redacted]



# ԱՌ ՋԱՒԷՆ

Մայիսին հինգն էր·
զարդարուն լեռներ
ու պայծառ երկին
փայլէին կրկին .

Մեն դաշտ ու պարտէզ
ունէր դէզադէզ
ծաղկունք անուշակ ,
վարդ ու մանուշակ ։

Թաւ ոստերուն տակ
մրմռնջուն , յստակ ,
մոլոր , թափառուն
գընար թափ առուն ։

Թռչունք խաղցրախօս ,
անդուլ , հոն ու հոս ,
երգերով կայտառ
լընուին զանտառ

Դաշնակութեամբ բիւր ,
մինչ զըւարթ զեփիւռ
այլ արշաւասոյր
տար ծաղկանց համբոյր ,

Եւ , ջա՛հ երկնային՝ ,
հաճութեամբ էին ,
վառ ամենուրեք
շողշողար արեգ ։

Եւ ահա , անգին ,
Նըման Սրուանգին,
քնքուշիկ ու դեր
արե՛ւ մ՛ալ ծ ոգեր ։

Թռչնոց ձայն քի՛չ եր.
աղաղակ , ճիչեր ,
երկունք մարդածին
զոդջընդացուցին .

Թափեցան արտասուք ,
այլ ո՛չ առ ի սուգ ,
զի նոր կեանք ու սէր
ի վերուստ հոսէր .

Ոչ ո՛ք էր տրտում :
հրճուանք անպատում
ողողեց իսկոյն
հոգիներն ողջոյն ,

Երբ մեր ականջին
եւ մօրն՝ առաջին
հնչեցուց զիւր ճիչ
Զաւէն - Մըկըրտիչ :

* * *

Չքնա՛ղ արարած
որ, մարմնատարած
ու խանձարրապատ ,
միւռօն ի ճակա ; ,

Օրօրոցիդ մէջ
քունով մ'անընդմէջ
անապակ ու ջինջ
կաս մընաս ի նինջ .

Հրեշտա՛կ ՚լ Նորեկ
որ իջար երէկ
տալ խըռով սրտիս ,
կենաց աւետիս ,

Շնորհ, զա՛նձ անգին,
զոր տայ մեզ երկին,
մանչ, ապագայ այր,
Երուանդին եղբայր.

Տառաւիղ երկրորդ,
ցողեկ ժառանգորդ
հօրդ անուանակիր,
բի՛ւր բարեաւ եկիր:

Ողջո՛յն քեզ, մանուկ,
գարնային գառնուկ
ճերմակ, վարդագոյն.
ողջոյն քեզ, ողջո՛յն:

Եւ պեղապէմ,
ի սրտէ մաղթեմ
որ Տէրն աշխարհի
պահէ զքեզ արի.

Քեզ առա՛ջ լինի
կարգը մայրենի
եւ իրանդ, այնու,
ոյժ ու կար առնու:

Եւ յուշիկ յուշիկ,
կեանքով անուշիկ,
սիրուն՝ բարունակ,
անձիս շարունակ.

Ու լինիս բուրման
բաժակ մ'աննըման
որմէ կաթէ յար
ոգետու նեկտար :

Եւ մեծնաս արագ,
փայլիս զերդ ճըրագ,
լոյսովդ անհետին
լուսուերք մեր սրտին :

Սրտաւանդին հետ, միշտ,
անլայց եւ անվիշտ,
զերդ երկու տատրակ
շրթամբ կամրորակ,

Ծըլուըլաք ի տան
ու սիրատատան,
ղողղոջուն թէթեւ
խայտաք թեւ ի թեւ,

Ու ձեր երգերով
յոյս, ժըպիտ, կորով
եւ խա՛նդ բերէք նոր
մեր հոգւոց ի խոր :

Իսկ քընացի՛ր արդ
հանդարտիկ, զըւարթ,
փակէ՛ բաց բիբերդ,
շուշան փափկաթերթ,

Որ նուրբ, անգիտակ
քու ճակատիդ տա՛կ
երկնային դրախտէն
քաղցր անուրջք յորդեն :

Զաւէն, քընացի՛ր
որ ե՛ս, անձանձիր,
ձայնով իմ նըսեմ
քեզ օրօր ըսեմ :

—1886—

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՐԵՒԸ

Ո՛վ դուն , որ լոյս հոգին անգէտ
 չի ճանչնար մեր գիրերը ,
այս աշխարհիս մէջ բազմաղէտ՝
 դեռ չինչ են քու յուշերը .
մեր նամբէն վարդք եղան անհետ ,
 մեզ մընացին փուշերը ,
այլ՝ վարդ անփուշ՝ երկին մեզ էս
 քու քնքուշիկ թուշերը :

Նորաբողբոջ հօրըդ ճիւղին
 դու՛ես երկրորդ տերեւը ,
եւ , պահապա՛ն ակն Անեղին ,
 օրօրոցիդ վերեւը ,
իւր շողերով կարմիր դեղին
 առ քեզ հայի արեւը ,
եւ՝ ըզմայլած քու ծիծաղին՝
 տայ՛ քեզ իւր պերճ բարեւը :

Մայրդ համբոյրով կը զըգուէ յար
 քու գլխիկն ու մազերը ,
եւ ամէնքս ալ , քեզ սիրահար ,
 կը տանինք քու նազերը .
սոխակի ձայն են մեզ համար
 քու լալագին ճիչերը,
զի՝ քեզ պէս մի զաւակ զոհար՝
 ունին , ա՛հ , խիստ քիչերը :

Նուրբ, թափանցիկ օրղարշին տակ,
  զերդ բունին մէջ թռչունը,
պայծառադէմ իբրեւ հրեշտակ
  երբոր քաշես քո քունը,
հարցնեն ամէնքն ալ անգիտակ,
  թէ՛ փողոցն եւ թէ՛ տունը.
—«Այս աննըման, գէր, ըսպիտակ
  «մանկան ի՞նչ է անունը։»

Զաւէ՛նն ես դու, մեր եւ քո տան
  նորալոյս աստղն ու ջահը,
որով իսպառ փախուստ կուտան
  մեր խաւարն ու մեր ահը։
փոքրիկ իշխան, մեր պալատան
  մէջ դընել գաս քո գահը,
եւ մեզ բերես սիրատատան
  կեա՛նքն, հեռանայ ժանտ մահը։

Ո՛ղջ լեր, որդեակ, պահէ՛ երկին
  քո դողդոջուն հասակը,
չը մերձենա՛յ քո օրթունքին
  ցաւոց, վշտաց նաւակը,
եւ քո ճակտին՝ մութ, դառնագին
  դժբաղդութեան խորշակը,
եւ ցը յատա՛կն ըմպես անգին
  երջանկութեա՛ն բաժակը։

— 1886 —

# Աստուծոյ Մոմերը

Գիշեր էր, երկնից մէջ կապոյտ կամար,
կը շողշողային աստղեր անհամար:
Ջաւէն՝ մօտ գալով իւր պապուկին՝
—«Այս լոյսերն ի՞նչ են . . .»
—«Տղա՛ս, ըսաւ նանին,
«երբ մութը կոխէ, ինչպէս որ մենք՝ մեր՝
«այնպէս ալ Աստուած կը վառէ մոմեր . . . :»

* * *

Յանկարծ հով մ'ելաւ, թանձր ամպեր եկան
մրրկին քողով մը ծածկել լուսընկան.
—«Մոմերն ի՞նչ եղան . . . :»
—«Մարեցա՛ն հովէն . . . :»
—«Ի՛նչ աղուոր էին, թոթովեց Ջաւէն,
«զանոնք վառելու համար, մե՛ր նանի,
«իրեն լուցկիներ տա՞նք, եթէ չունի . . . :»

# ԽՐԹԻՆ ՀԱՐՑՈՒՄ

«Ինչպէս եկայ ես աշխարհ . . . »
իր մօրն հարցուց Գոհարիկ :
Մանկան հարցին այս դըժուար ,
մայրը , ձայնով մ՚անդորրիկ ,
պատասխանեց .—«Դուն բըռա՛ր ,
«Երկինքէն եկար՝ իմ գիրկ . . .:»
Աչքերն իր մօր դէմքն ի վեր ,
մանկիկն յարեց վստակիր .
—«Թէ ունէի ես թեւեր ,
«զանոնք ինչո՞ւ կտրեցիր . . . : »

## ԱՐԴԱՐ ԲՈՂՈՔ

Աստուծոյ մատով լարուած քնարիկ ,
մինչ վանդակին մէջ կ'երգէր քանարիկ ,
մայրն ալ Զաւէնին , իրիկուն առտու
կ'ըսէր .—«Իմ թռչնիկ , քանարի՛կս ես դուն :»
Այլ սակայն թռչունն երբ կ'երգէր աղու ,
չէր ուզեր մայրն որ ձայն լսուի տղու ,
եւ կը սաստէր . «Լո՛ւռ , Զաւէ՛ն , կանգ առ , կա՛նգ :»
Այս բանն՝ Զաւէնին թուելով զրկանք ,
անցեալ օր շեշտով մ'անմեղ, անուշիկ ,
հարցուց .—«Ես ի՞նչ եմ , մա՛յրիկ . . .»—«Իմ խուշի՛կ»
—«Երբ խուշիկդ եմ , ինչո՞ւ թող չես տար ,
որ խուշիկին պէս խօսիմ անդադար . . . :» ,

## ԿԱՂԱՆԴՆ ՈՐ ՉԻ ԳԱՐ

—«Կաղանդն երբոր գայ, մօրեղբայրդ Ալիք
«քեզի պիտի տայ շաքար, խաղալիք,
«հայրիկդ՝ հըրացան, մեծ հայրդ ա՛լ թմբուկ....»
Մայրն այսպէս կ'ըսէր Զաւէնին փափուկ
որ ընդունէյիք նուէրներուն ի սէր,
կաղանդին գալուն անձկաւ կ'սպասէր։

* * *

Բայց մանկիկներու սիրտերն ըսպիտակ
շատ համբերելու չեն վարժ ու ատակ,
Եւ երէկ Զաւէն ըսաւ.—«Հէ՛, մայրի՛կ,
«քանի որ չի գար Կաղանդն աղուորիկ
«որ պիտի բերէ ա՛յնքան բաներ թանգ,
«եկո՛ւր քեզի հետ մենք իրեն երթանք....»

# ԱՄԱՆՈՐԻ ՅՈՐԴՈՐՆԵՐ

Նոր տարի, Կաղանդ, Ս. Ծընունդ Փրկչին՝
ցնծութեան օրեր են մեզի համար,
համբոյրներ տեղան, ժըպիտներ բռչին.
կը խայտան երգ, պար, խինդ, խաղ անհամար։

Դուրսը, դաշտն ու լեռ, նայեցէ՛ք տըղաք,
[illegible]անձր ամպեր, անձրեւն ու ձիւնն են պատեր.
[illegible] ցուրտէն, բուքէն դուք պէտք չէ՛ դողաք,
[illegible] որ սիրով տաք են ձեր սիրտեր։

* * *

Մըռայլ են տարւոյն օրերն առաջին
կեանքին պէս, որ դառն՝ այլ կ'արժէ ապրիլ.
զի թիթռանց, թռչնոց սիրոյ հառաչին
ծաղկի փունջերով տուն կու տայ Ապրիլ։

Դուք, մայր Բընութիւնն երգեցէ՛ք, տըղաք,
դուք որ անիծել ու լալ չէք գիտեր.
երանութեան մէջ դուք պէտք է լողաք,
քանի որ խանդով լի՛ են ձեր սիրտեր։

* * *

Վեհաշուք երկնից արեւն ալ պայծառ
երբ ձեզ կը ժպտի ամպերուն մէջէն ,
կ'օրհնեն զինքն անվերջ ամէն ոստ ու ծառ
որոնց շուքին տակ բոյներ մըրմընջեն . . . :

Դուք արեւին փառքն երգեցէ՛ք , տըղաք ,
որ , վարդ , դեռ խամրիլ , այրիլ չէք գիտեր .
պէտք է միշտ բուրէք , ժպտիք ու շողաք
քանի որ հաւատք ունիք ձեր սիրտեր :

* * *

Աշնան մէջ , տըխուր երբ կը վայէ բուն ,
գօս տերեւներն ալ երբ կը թօթափին ,
մինչ մենք կը խոկանք սիրտով տըրոփուն ,
դուք վերջ մի՛ տաք , մի՛ , ձեր երգ ու ծափին :

Զի ձեզմով կը մնան մեր իղձերն անմեռ ,
ձեզմով՝ որ յիշել , ողբալ չէք գիտեր .
տըղա՛ք , երգեցէ՛ք ամառ թէ ձըմեռ ,
քանի որ լոյսով լի՛ են ձեր սիրտեր :

— 1893 —

# ՄԱՂԹԱՆՔ

Տր. Մարի Միւհէնտիսեանին

Այսօր որբանոցը քու անուանդ է տօնի ,
վեհ Տիրամոր տօնին ըստ Հայ տօմարի ,
Մարի ,

Եւ սիրելիներդ ինծ տըւին պաշտօն
որ քեզ մաղթանքներ ընել գամ արի ,
Մարի :

Տողեր ու ներդաշնակ — կարծես թռչունի —
անունդ , իրա՛ւ , քեզ օաս կը յարմարի ,
Մարի .

Որ աղջիկ քեզ չափ սրտին մէջ ունի
անըսպառ գանձեր սիրոյ գումարի ,
Մարի :

Փափկութեան , շնորհաց վըրայ հոգեկան՝
մարդիկ նայուածքներ նետեն սխմարի ,
Մարի .

Նուրբ զգացումներ , կիրք միտք ո՛ւր որ կան
բաղխին սառուցին քար ու մարմարի ,
Մարի :

Մենք որ շատ տեսնենք՝ թիթեռ զերդ փետուր
աղջիկներ առանց . . . թըռա՛ռամարի ,
Մարի ,

Փայլուն , բարբառուն ծաղի՛կ երկնածուր ,
մեր սիրտն՝ հեզիկ բոյրդ հեռա՛ւոր համարի ,
Մարի :

Ահա՛ միակ բանն որ մեզ կը մաղթեմ .
վառ լոյսերուն պէս երկնից կամարի ,
Մարի ,

քող ժպտի մեզ Յոյսն յաւէտ մաղթրանէմ .
եւ հոգւոյդ արեւն խաւար չի մարի՛,
Մարի :

— 1900 —

# ԾԱՌԸ

— ՀԻՆ ԱՌԱԿ —

«Կաղնի մ'եմ ես յաղթ ու վըսեմ,
    բարձր, հաստարմատ եւ հուժկու.
գըլուխս հասնի ամպոց ի սեմ,
    ծաղրէ կայծակն ահարկու։

«Իմ թանձր ու թաւ ոստոց մէջէն
    —անյաղթ մազեր Սամսոնի —
վայրագ հովերն է զո՛ւր փըչեն,
    յորոց աշխարհ սասանի։

«Արեւ, անձրեւ, ձիւն ու կարկուտ,
    տարերց զայրոյթն, ոխն ու քէն,
չեն խորտակեր ոյժս անկապուտ.
    ես չե՛մ վախնար երկինքէն։

«Ծիւղերուս մէջ պատըսպարին
    թռչնոց բոյներ բազմաթիւ,
որոնց զըւարթ երգ ու պարին
    ականջ դընեմ ցայգ ու տիւ։

«Ծուխիս ներքեւ հովիւք յամեն ,
մոռնան վիշտ , ցաւ , ամէն բան ,
մինչ փա՛ռքս երգեն սարեակք ամէն
եւ սոխակներն օրհնաբան :

«Ոտներուս տակ բոյսեր բոլոր
թըզուկ , դաճան են չնչին
որք, ուշ կամ վաղ , ոլոր մոլոր
կոտրին , փտրին , կորընչի՛ն .

«Ես , անսասան եւ պերճ կոթող ,
ապրիմ , տեւեմ , ծա՛ռ հսկայ .
զիս տապալող կամ ինձ յաղթող՝
աշխարհիս մէջ ոչի՛նչ կայ . . . :»

*
* *

— Մայր Բընութիւնն , արդար կշռով
անոնց դէմ որք յոխորտան ,
հըպարտ ծառին արմատին քով
ո՛րդ մը դըրաւ անպիտան . . . :»

—1892—

[redacted]





# ՕԳՍԷՆԻՆ ՆԱՄԱԿԸ

ՌԱՄԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Առ. Միհրան Յովհաննէսեան

Իլք պահարին էր , սօխախին վարէն
ես կէզի օր մը տեսայ քենճիրեն .
կըլօխըք կապած կենելիք հաշմայ ,
կըրնակըք տալըն ծապիկ մը պասմայ ,
սուռաքըք փառլախ թիւլպէնտի կըտօր ,
հեմեն կիտես քի մարէի սըրտօր . . . :
Ներսիդիս ալքիւսք եղաւ , մէյ մըն ալ ,
անհախ քի կրցայ պէրանըս պանալ ,
ծանըս ձըգեցի , կիտէ՞ս Հոռօքիկ ,
—«Թարչին պանհա:լը Նօհուտը՛ւ թօփի՛կ . . . :»
Տուն երէրցուցիր տուտախըք քիրազ ,
ըսիր .— «Տասըլմա պազգայըմ պիր ազ : »
Տուռը կայնէհայ , վար ինհար հէմէն ,
ան թազէ Ֆիտան , չայիր ու չիմէն
պօյ պօս էնտամըք , աչկըք քէսքանէ ,
քիլին պօղազըք , թուշըք տեսայ նէ՝
ա՛լ չի տիմանայ .—«Կիւզէլ գըզ , ըսի ,
«սանա հէլալ տըր թօփ , թօփնու , հէ՛փսի ,
«քարա խաքէմէզ , եէքէր քի պիր սէն
«պէնի կէօրտիւքմէ եիւզիւմէ կիւլսէն : »

Գերանըս կոցվէ՛ր , ֆեծվէ՛ չըսէի ,
կա՛սկարմիր եղար , ա՛լ նառ չիչէյի ,
Ներս փախար , տուռը կոցեցիր պիրտեն ,
բենճիրեն կացիր , կաօեցիր բերտեն . . . :
Ա՛խ , իօտե անկե , ա՛ն օրեն պերի
ճիյերս , ա՛յ Հօռօբ , ածխօվըթ կերի .
ծածխըն եմ դարճեր արտու իրինկուն ,
նե խստեկ ռւնիմ , նե՛ բռահար կուն ,
նե՛ կըլօխըս խելք , նե՛ վըրաս տերման ,
ածկես տուրս կեյլայ կիտես ֆի տիւման . . . :»
Ան կանի միտկըս չե՞ս իգար , կիւլիւմ ,
կ՛րսեմ աս եօմրեն աղեկ է եօլիւմ :
Եօվլուծը , խախալեն , չարծին , մանհալլեն ,
կը նըստիյմ , կեյլամ ախ վախ ընելեն .
Նե՛ բռախին խեր կ՛ընե , նե թիւթիւն ,
արխատածներս կը խնձան պիւթիւն ,
կրսենֆի . —«Եազըխ , զա՛վալլը Օգսեն ,
«կընծիկ մը խուրմիծ ըրեր եր եօֆսեն ,
«տուն ալ , խուծի պես սերսեմ պուտալըս ,
«պիր ազ զօնայլըմ , ըսիր , պու տալա . . .
«տուզախը ինկար, ա՛լ պօռա՛ կանչէ . . . :»
Ձե՛, վայլահա՛, աս կածվելու պան չէ ,
մըներ , խըրյանե՛ք , կիւնա՛հ է ինծի ,
անապ ա՞ծմ ունիս զենկինի , մենծի
ֆի մէյմը ինծի չես նայիր պիյէ . . . :
Ես կեզի եսիր , խուլ խուրպան , ֆեօլէ ,
մէյմը վըրանիս կարթա տերպապան ,
այթըխ տուն ինե կիտցիր ամեն պան . . .
Ես կեզի տարին տաավլերկու ամիս
հայց , մում , ծաքաթը օխա մըն ալ միս
պակաս նեմ ըներ , ես մա՛րթ եմ , նեմ ալ
կարնեմ , կը ծախեմ հարուր թիւրլիւ մալ .
ծըմերը՛ միտիս , թօրիկ , ֆարիտես ,

պահարին՝ զերեն, ֆուլիա խունկի պէս,
ետքը վախիթը կուգայ չիլեկին,
ետքը պօստանը, խառբուզին սերկին,
ետքը խայիսի, շեֆթալի, արմուտ,
ետքն ալ ուսկումրի, քեֆալ, փալամուտ ։
Մեր տունէն պակաս չըլլար խմերտան.
կը տաշիմ, կեզի կը շինեմ ֆիստա . . . ։
Տուն իմին տիւշկիւն հայլու մը՝ նայիր,
խասըմին հեսըբ երթանք բանայիր
տէ հօն նայէ՛ քի մէկ հաց մը օյունի
կա՞յ Օմսենին պէս պապայիք քօսու՝ ։
Հոռոփիկ, ներսըս կը վառի ալեֆ.
վախ ճիւան եօմրիս քի կ'ըլլայ թելեֆ.
հաչան քի կեզի կեօնիւլ տըվեր եմ
կեզի չարնեմ նէ եւ կըլլամ վերեմ . . . ։
Ներսըս կը պանի թեսերէ քեսեր,
մերհամեթ ըրէ՛. եկու չէ՛ մըսեր,
տուն մեշկիս խուշախ, կըլօխիս մանթել,
եւ Ֆէներ ըլլամ, տուն մէջը խանսըլ,
եւ սաքսի ըլլամ, տուն զերեն զիւմպիւլ,
եւ խաֆէս ըլլամ, տուն մէջը պիւլպիւլ,
տուն տիրէկ ըլլամ, եւ եքեն պեզի
հօկը ալըչէ տէ պատտըրվիմ կեզի . . . .
Կենէ կըսեմ քի չեմ տիմանար կօր,
իշտէ մընացի տէրիյօվ օսկօր,
տահա ինչ կըրեմ, հայըս եաման է,
բախմի մեքթուպիս ճեւապը քայ նէ.
ապսօր պեքլէյեմ. ամա չէ՛ չըսեր,
զիրա, խալալի է, Ճեօքերեկս, խըռօսդ,
կուզեսնէ հայտա, կուզես մը հափսար,
ետքը կեօռիւրին կ'ըլլայ . . . ։ Ա՛ս խըտար,

— 1893 —

# «ՄԱՆՁՈՒՄԷ»

Մրդուած հանրօգուտ ջերմ համոզումէ .
մեր անզուգական բերթը Մանզումէ
լոյս էջերն այգուն կանուխ պարզում է ։

Արժէքն՝ իրական գինը բազում է .
մեր անզուգական բերթին Մանզումէ
լեզուն՝ հնչալից, համով լեզու մ'է ։

Նիւթը յօղուածներով հոգին յուզում է .
մեր անզուգական բերթը Մանզումէ
կարդացողն՝ անյագ զայն լափլիզում է ։

Տափակութեանց դէմ միշտ ընդվզում է .
մեր անզուգական բերթը Մանզումէ
ուղղութիւն , [illegible] , ջա՛նք տարազում է ։

Միտքին հաւատար սի՛րտն ալ մարզում է .
մեր անզուգական բերթը Մանզումէ
կարծես ծաղկոցից գարնան ածու մ'է ։

Բաժանորդի կապն ո՛վ որ խզում է
մեր անզուգական բերթին Մանզումէ ,
գիշերներն [illegible] զա՛յն երազում է ։

Ո՛չ ծախսէ վախցող , ո՛չ նուազումէ ,
մեր անզուգական բերթը Մանզումէ
օրէ օր համբաւ , [illegible] դիզում է ։





Ամէն սկսնակ մի նոր գիր խազխզում է.
մեր անզուգական թերթը Մանզումէ
զայն խրախուսել, մա՜րդ ընել ուզում է։

Եւ, միշտ անսայթաք, յառաջ վազում է.
մեր անզուգական թերթին Մանզումէ
մրցակիցներուն վերջը չփլուզո՞ւմ է։

Ուրիշ ամէն թերթ մինչ լպառ պօզում է,
մեր անզուգական թերթը՝ Մանզումէ
եափրնեա՞խ ալ չէ՛, չամո՞ւր լիզում է։

Համրկային տանեց այս պարսէզ ո՞ւմ է.
Մեր անզուգական թերթին Մանզումէ
տէրն է Գայսէրեան . . . Օրթի՛, պրոսխումէ՛ :

# ՑԵՏՍ ԿՈՉՈՒՄ ԵՒ ՄԵՂԱՑԱԳԻՐ

**Առ պատուական մեծ Արմեանցիս**

Յորմէ հետէ աստ ի սխնակս Արեւելից
տողեցի զայն նրկարագիր կատակալից
որ Արմենացւոց հոգին եւ սիրտ ցաւամաք ելից ,
խմբագրատունն անթիւ զանգատ , բողոք տեղայ ,
թէ՛ ո՛չ տանձ են Արմբտանցիք եւ ոչ բանջար . . .
թէ՛ չար մ'եմ ես որ կը սիրեմ գրել բան չար ,
թէ՛ միտս ի յայս կ'ածեմ մի վաս, անսուրբ հանճար,
թէ՛ գրածիս համար պարտիմ գոչել «մեղա՜յ»

Խոստովանիմ եւ հաւատամ ահա՛ շիտակ·
ընկերութեան ազնիւ են գործն ու նրպատակ ,
սակայն անդամք կ'երեւի չե՛ն սիրեր կատակ ,
եւ բարկանայք պոռան կանչեն իբրեւ տղայ ,
երբ—զավելով հանդերձ արդիւնքն իրենց քրտանց—
համարձակի մի ո՛ եւ է նրբամիտ անձ ,
Մեծ Արմբտանն հոլովելով հանել . . . մի տանձ ,
—եւ պահանջեն որ ծունր իջած գոչէ «մեղա՜յ»

Եթէ մէկը քննադատէ անոր տանձին,
կամ պարտէզը քար մը նետէ , քար մը՛ տանձին .
ա՜հ , գրի՛չ ալ կ'առնու եղեր Արմբտանցին . . .
—չէի՞ք գիտեր . Ա՛ս ալ դեռ նոր հասու եղայ—
գրիչ կ'առնու , կ'իջնէ եղեր ի հրապարակ
եւ գործածէ կապոյտ մելան , ոն տափարակ.
եւ խնդրէն դուրս դեգերելով երկար բարակ ,
ա՜յնքան կ'ըսէ որ կ'սկսիմ գոչել «մեղա՜յ»

Մեղա՜յ գոչեմ ուրեմն , յուսամ ինձ գթայ Տէր .
խոստովանիմ թէ այն գիշերն ես, ի թատեր.
Արմբտանցի՛ք , այո՛ , բղձեզ յաւ չեմ դատեր ·
—ներեցէ՛ք ինձ , գրելու մէջ եմ դեռ աբեղայ —
մի՛ քարկոծէք զիս, մի՛ թափէք գլխուս... տանձեր,
դուք ամէնքդ ալ բարեսէր ու պարկեշտ անձեր,
մե՛ծ մարդիկ էք, որպէս է մեծ . . . Արմբտա՛ն ձեր ...
վա՜յ ինձ, վա՜յ ինձ, ներեցէ՛ք ինձ. քանզի մեղա՜յ:

# ԿԱՂԱՆԴՉԷՔ ԱՌ ՓԻԼԻՊԷՑԻՍ

## ԲԱՑ ՆԱՄԱ.

Ողջոյն ձեզ, ողջո՛յն, ո՛վ Փիլիպէցիք
որ սիրով, երկու ու կէս ամեր ձիգ,
կամայ ակամայ բռնած մեր օձիք,
ըզմեզ շահեցիք . . . շահագործեցիք։

Մենք, ու մե՛նք միայն գիտենք թէ՝ քանի՛
անկեղծ երախտեաց էք դուք արժանի
որ զմեզ նըկատել բարեհաճեցաք
ամէնքս ալ իբրեւ մէկ մէկ . . . մարդու ձագ։

Մեր մէջ ո՛չ խելք կար, ո՛չ միտք, ոչ դատում.
—դուք գանձ, մենք ո՛չ իսկ տանձ, հազի՛ւ դըդում,—
եւ համախորհուրդ ըրիք մեծ երդում.
—«Ժամու, դըպրոցի գործի բըռնուին
ազանիքականները քո՛ն չի հարնըւին . . . ։ »—
Որ մ'ալ կուրծք տալով ձմռան ցուրտ հովին,
պաշտօնատուն մը գտցինք խըմբովին,
ուր մեզ անիրաւ սա՛ս մը կերցուցիք . . . ։
—Ողջոյն ձեզ, ողջո՛յն, ո՛վ Փիլիպէցիք։

Մոռնալ չեմ կրնար, յիշել չեմ ուզեր
այն նազելանեմ ընտանիխոզեր
որոնք, անհովիւ եւ աննըպատակ,
հող թափառեցան մեր ոտքերուն տակ։
Ո՛չ ալ կաղամբներն այն լեռնակուտակ
որք ձեր մառանին խորը, շար ի շար,
կազմեն ձեր ձմռան պարէնն ու պաշար.
ո՛չ ալ այն ձուկերն անձեւ, բոլորշի,
աղած, քարացած զազրանոտ կաշի,

որոնց տեսէն մարդ սոսկմամբ կը դառնի ,
որոնցմով խանութք լի են բովանդակ ,
եւ բարբախաւոր գեղջուկք այլանդակ
կը լափեն զանոնք իբրեւ կարկանդակ ։
Պուլկարն ունի հզօր բռնամոլ ական ,
սխտոր , հոտած ձուկ՝ իր կե՛ր սիրական ,
խակ կարմիր պղպեղն , ամոլեյի չուշկան ,
ափո՛վ կուլ կուտայ զերդ . . . մարտաղակ ոն ։
—Այս ամէնն հոդ դուք մեզի ցուցուցիք .
ողջոյն ձեզ . ողջո՛յն , ո՛վ Ֆիլիպէցիք ։

Ճանչցանք ձեր դաշտերն , հովիտն ու լեռնք .
Քանի՛ցս անոնց մէջ պտոյտներ ըրինք .
Եւ , ուսուցութեան պատրուակին տակ ,
Քանի՛ցս ունեցանք խաղ , խինդ ու կատակ ։
Բարեկամ մը կար , ոսոող էր նարպիկ .
—Մարդուս նախանձայրն է , կ'ըսեն , կապիկ . . .—
միւս մ'որ մ'էջ փայլուն ակնոց ու ճապիկ
կը կրէր ու ծախէր տրպածոյ , դերձան ,
կրունակին՝ մախաղ , ու ինն հրացան
մ'անցուց . ոսո՛րդ մ'ալ եկաւ թնացան ,
մենք ծիծաղեցանք , տիկնայք հիացան . . . ։
Եւ օր մ'ալ հինգ վեց ընկերք անձնուէր
ոսկի երբալու բռնացանք հրաւէր ։

Նոր կ'արթննայի այգախօս հաւէր ,
Երբ ուղղուեցանք լայն բլուր մի վեր
ուր բռին բէ ուս ճաս կը զըսնուէր ։
Եւ մինչ մեր երկու ուսուողք նռանառու
բոկրսան ռշիկ հոս , հոն , քիչ մ'հեռու
մենք կը հանգչէինք բաւ ծառի մը տակ ։
—Օ՛հ , այն պատմական օրուան յիշատակ . . . —
Յանկարծ երեք չորս պայթիւն լսուեցան ,
հեռուն հնչողներ քրռան , ցիր ու ցան . . .
Եւ Տիրան աղան կը պոռար , —«Թագո՛րէ .
«Կո՛ռ, պա՛ք, ճուր ասա վուրուլսո՛ւ մու լուռ . . . ։»
Մինչ միւս ուսուցյլ, Եդուարդը քինուռ ,
իր փափուկ սրտին յուզմանն աղագաւ ,
չի՛ գարկաւ կացան այլ տեղը . . . ազա՛ւ ։

—Այն օրն ըզմեզ ծո՛վ զուարճացուցիք․
ողջոյն ձեզ, ողջո՛յն, ո՛վ Ֆիլիպէցիք։

Ձեր հանգոյցներուն, որոնք տակաւ են,
ամառ թէ ձմեռ, կեդրոնն ապաւէն
ու ժամադրավայր՝ լի ու լի բաւեն
հանրապարտէզն ու Ասիլիին խանմէն,
յարկ մը նեղ, ցածուկ, անշուք ու մռթին,
որ ո՛չ դիրք ունի ոչ ալ տեսք չորս դին․
ուր օղիներուն ամէնէն վինթին
կը մատուցուի ձեր անտէրունչ քիթին։
Յարկ մ՛որ տասն աթոռ ունի, վեց սեղան․
ուր Գրավարէմն եւ Անտօն աղան
դէմ առ դէմ, օրն ի բուն նարտ կը խաղան,
մինչ միւս անկիւնէն, ուր *թրքմ* կայ կամ *պրիկ*,
զոռայ ձայնն անուշ, զեղզեղն հրապուրիչ
մերթ Աքուշին, մի՛ս Տ․ Զարամեանի․ ․ ․։
—Քանի՛ երախտեաց չէ՛ք դուք արժանի
որ ձեզ հետ՝ մեզ ալ նոն․ ․ ․ ծորեցուցիք։
Ողջոյն ձեզ, ողջո՛յն, ով Ֆիլիպէցիք։

—Յիշատակներով ըզգածուած սաստիկ,
Նոր տարի մաղթեմ ձեզ բարեբաստիկ,
ձեզ եւ առ ձեր մէջ *ճերմակ* Հէր-Աստիկ,
որ, մինչ անփոփոխ եւ․ ․ ․ անըզգաստիկ,
ձեզ նուիրած է իր սուրճն ու *մաստիկ*․ ․ ․ ․։

Եւ ցորչափ ապրիմ ես, ո՛ւր ալ երթամ,
թէ կեանք վարեմ պարզ կամ նոխ ու փարթամ,
ի՛նչ որ ճաշակեմ ընտիր համադամ,
միտս պիտի յիշեմ սիրուն Ֆիլիպէս,
ուր, թակրտելով յետին աղքատէն,
ամէնքն ալ, ամէն տեղ, ամէն ատեն,
կարմիր պղպեղի փունջեր կախ, պատէն,
խոզ, երեխ, կաղամբ ու սիսոր կ՛ուտեն․ ․ ․
*Փիլի՛* պէս։

# ԱՊՈՒՔԱԹԸ

Այգեպան մը․ լուրջ ու փորձառու ծեր,
որ շատ մարդոց հետ գործ ունեցած էր
եւ տարիներով, անվերջ, անընդհատ,
ասոր ու անոր դէմ վարած էր դատ,
— Եւ այդ պատճառաւ ինքն, երբեմն հարուստ,
այժմ հազիւ ունէր համեստ մէկ ապրուստ . . . —
որ մ'յուլիսի տաք օր մը լուսահեր,
մօտիկ օրերուն վրայ կը խորհէր
ուր պիտի քաղէր խաղողն անուշա՛կ ։
- Յանկարծ, հեռուէն տեսաւ մէկ մըշակ,
իր մարդիկներէն, պատանի կայտառ
որ այծամարի պէս, լեռ ապտառ,
սրընթաց իբրեւ պարտասիկի քար,
արտերուն ճամբէն դէպ ի տուն կուգար ։
Այգեպանն յուզմամբ հարցուց . — «Հէ՞, Գասպա՛ր,
«Ո՞նչ կայ, ի՞նչ եղաւ, խե՞ր է, ի՞նչ *խապար* . . . ։»
Շնչասպառ մըշակն յարեց .—«Է՛հ, *աղա՛յ*,
«աս *չօպան* մը կար, *Պուլղար*ի տղայ
«որ *էս* մօտն ոչխար եւ այծ կ'արածէր,
«մեր *պաղչէն* են մտեր իր բոլոր այծեր . . .
«թէ դուրս չի հաննէն՝ խաղող, *տալ*, *ֆիտան*,
«*խարապ* տի անեն, *եաղմայի* տի տան . . .
«հա՛, մոռցայ, *պաղը*, եղածին վը՛րայ,
«աս, ը՛նո՞ր կ'ըսեն . . . ապուքա՛թ մ'էլ կայ . . . ։»
—«*Պաղն* ապուքաթ կա՞յ—գոչեց ծերունին—

«Անոր քով այծերն *հի՛չ զարար* չունին.
«անոնք *պաղն* աւրող, խաղողն ուտող են
«*ամմա*, *քէօֆ*երը չեն հաներ հողէն . . .
«*փախսար*, ապուզարքն, Աստուա՛ծ ողորմի,
«մէկ մարդուն *պաղը*, *պաղչան* մըտա՞ւ *մի*,
«—պատի՛ժ, պատուհաս նըմարիս — անի
«պըտո՛ւղն ալ կ՚ուտէ, ծա՛ռն ալ կը տանի . . . :
«Մեր տըղոցն քսէ՛, տո՛ւս, չանցնի՛ ատեն,
«ապուքարքն առաջ բռնեն, դուրս նետեն . . . : »

— 1890 —

ԱԼԳՈՄԷՍ

Մարտիրոսն, ըլլա՛յ Mardaux քէ Martin,
բան մը չի փոխուիր բարքէն ու մարդէն։

---

Մանկիկն — հայրն ըլլա՛յ Զուլուն, Հայն, Ծանքին —
խօսուն թռչունն է ընտանի կեանքին։

# ԱՆԽՈՀԵՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

**Արձագանգին**

— Սիրե՞ս տեսնել թարմ կուսական
դէմքն հայտնենաց նորաբողբոջ....։

—. «Ո՛չ»։

— Ի՞նչ, անոնց մէջ միթէ չկա՞ն
անկեղծ սիրտեր սիրադողդոջ....։

—. «Ո՛չ»։

— Չի՞ մտներ մէջն անոնց ունկյան
քարոզչին խոսքն յեկեղեցւոյ....։

—. «Ո՛չ»։

— Եւ չե՞ն լսեր՝ պաղատական
որբին լացն ու աղքատին կոչ....։

—. «Ո՛չ»։

— Ա՛հ, գէթ գիտե՞ն փակել բերան
կամ խօսիլ ի վայել տեղւոյ....։

—. «Ո՛չ»։

— Հոգւով այլ բարձր, ազնուական
չե՞ն մեր տիկնայք հարուստ ու ցոյց....։

—. «Ո՛չ»։

— Հրճուանք ե՞ն իրենց էրկան
իբրեւ իրենց միակ սիրոյ....։

—. «Ո՛չ»։

— Յարգ կ՚ընծայեն խոր, խրախյան,
իրենց ամուսն սալ ու ներոյ....։

—. «Ո՛չ»։

— Հայոց գորով, սէր տեւական
չկա՞յ ընդ մէջ հարս ու կեսրոջ....։

— «Ո՛չ»։

— Մարդը, յուրջ, ծանր ու խոհական
պէ՞տք է անոյ խոսքին կրկնոջ....։

— «Ո՛չ»։

— Պատասխաններդ են ժխտական.
զանոնք կ՚լսե՞մ եւ մեծազոչ....։

—. «Ո՛չ»։

— Ասանանց ձեռն., ո՛րքան որ կան,
այլ չե՞մ կրնար փրկել իմ պոչ....։

—. «Ո՛չ»։

# ԿԸՆՈՋ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

**Արձագանգին**

— Մարդը կ'ըմբռնէ՞ թէ մտաւոր կուսին
սիրող սիրտն ի՛նչ նուրբ ծաղիկի բոյրով է . . . —«Չէ՛»

— Կարգըւիլ առանց դրամօժտի յոյսին
կ'սպասուի՞ այսօր ո՛ եւ է մանչէ . . . —«Չէ՛»

— Է՛ն , կ'արժէ՞ որ կոյսն , պաշտուած փեսին
համար՝ երազկոտ , անձկաւ հառաչէ . . . —«Չէ՛»

— Հէք , հըմայաքալի ամէն նոր հարսին
ողբն ու զանգատանքն հոլի տրտո՞ւնչ է . . . —«Չէ՛»

— Ամէն մարդ , իբրեւ հայր եւ ամուսին ,
իր սանձնուած պարտերն աղէկ կը ճանչէ՞ . . . —«Չէ՛»

— Գիտէ՞ նախ, երբ որ նոյին կամ խօսին ,
սիրով ակնածիլ անոր , զոհանչէ . . . —«Չէ՛»

— Երբ իր քով անկեղծ զուրգուրանք պահին ,
իր կընոջ զօրով . սէր կը ներշնչէ՞ . . . «Չէ՛»

— Ինչո՞ւ անգին զա՞նձ մ'է յանկութեանց մասին
որ կընոջն ա՛յնքան խոստապահանջ է . . . —«Չէ՛»

— Ո՛զգա՞յ իր վարմունքն յանախ կոես ու սին
որով կընոջ զոյգը հոգի՛ն կը տանջէ . . . —«Չէ՛»

— Մարդուն սրնապարծ եւ անմիտ եսին
կինն հա՞րկ է որ միշտ «Այո՛» մրմնջէ . . . —«Չէ՛»

— Ու փառաւորուի՞ արեւու լոյսին՝
դանի՛ներն այն զոր կինն «Էրիկ» կը կոչէ . . . —«Չէ՛»

— 1900 —

# ԱԼԷՄՏԱՂԻԻ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ՅՈՎԱՆՆԻՍԻ ՊԱՆԴԻՈՒՆ

## ԳՐՁԻ ԽԱՂ-ՆԱՄԱԿ

Թուղթ, գրիչ, մելան,
ինձ գրգիռ կ'ըլլան
որ գամ, այս անգամ,
քու բարեացակամ
միտքիդ ու խիղճիդ
—հիւրընկա՛լ խորհիր—
մէջն, իբրեւ կնճիք
փիղի ընտանի,
իմ յանգաբանի
հետեւալից երկանց
արդիւնքն -հնչո՛ւն գանձ-
այլոց ի պապանձ
մխխել անճանախանձ։
Կը ցանկամ ուրտանց,
ո՛վ վեհասիրտ անձ
որ, քաղցր ու բարի
ինձ համար կարի
հաստ աչքդ երկարի
իմ՝ դեռ տըկարի՝
գըրուածքիս վերեւ.
զի փափկատերեւ
վարդ մ'եմ, ում արեւ
դեռ նոր տայ բարեւ . . . :
Ո՜ւֆ, այս ի՜նչ անծրեւ
ջրհեղեղ իբրեւ
որ յորդ, յարատեւ,





Երկինքէն սեփ սեւ
թափի հեւ ի հեւ . . . ։
Անտառին ետեւ
հոս , Ալեմտաղի ,
ա՛յնքան կատաղի
է ցուրտն՝ որ խաղի ,
խինդ ու ծիծաղի
վայելքին համար
գերազանց յարմար
բարձրաղիր , ժպտուն
այս պանդոկատուն
տեղն է հանգստեան ,
կոչուած , յաւիտեա՛ն ,
օթէլ Լեվենտեան ։

* * *

Երբ Սամուէլ Երեց
փոքրով ձեռներեց
մեզ նըկարագրեց
այն բազմահրապոյր ,
համակ գոյն ու բոյր
պաշտելի գիւղին
ջուրն , օդն ու . . . օղին ,
եւ պատմեց շիտակ
թէ՝ թանձրակուշտակ
թաւ ոստերուն տակ
խոլ խաղ ու կատակ
ընելու ատակ
թռչնոց զուամարտակ ,
դայլայլով յստակ ,
պճնվէրջ , անվաստակ

հոգւոյն ի հրճիւ
Երգելով ճիւ ճիւ ,
ռամկին , պրուէտին՝
ըղձայլուն , հեշտին
յոյզեր տան սրտին ,
— մոռցած էր , աւա՜ղ ,
ըսել թէ՝ նուաղ ,
ղաստարկ , անսլուաղ
ըստամոքսին՝ ո՛ւր տեղ ,
անօթութեան դեղ ,
համեղ ու հիւթեղ
լաւ կերակուրներ
պիտ՛ արդեօք գտնէր :
Մոռցած էր անի
թէ՝ ո՛չ գեղանի՝
այլ խիստ անուանի
տէ՛ր օթեւանի ,
Յովակիմ աղան
կազմ ունի սեղան
ուր կը պըսպըղան
ըսպասներ բոլոր .
Եւ շուրջն , անմոլոր ,
Նիհար , գէր , կլոր ,
Երկսեռ , հաւ , աքլոր
հիւրեր նորանոր
կուգան ամէն օր
վայելել անոր
ճաշերն՝ անխտիր
համադամ , ընտիր :
Մա՛րդ չըսէր . «կա՛նգ առ» .
անկուշտ , անպատկառ
բերաններ . . . տակառ ,
կուլ կուտան կանկառ

խորտիկ, վառեակ, ձուկ։
Թանգ այլ վաղանցուկ
պըտուղներէ զատ,
մածունն հարազատ
եւ կարն ու կարագ
կը սահին արագ
անլոյս, անճըրագ
մեր խոր ու՝ խաւար
կոկորդներէն վար։
Իր հիւրերն ամէն
քո՛ղ ուտեն, խըմեն,
խնդան ու խաղան.
Յովակիմ աղան
հրճուի՛ իւրովի,
այն ժպտուն աչուի
յաղթ ու կորովի
—փառաց ծարաւի—
մարդն որ, յիրաւի,
յուզուած զորովի·
շեշտով մ'աններման
մեր շուրջ կուգայ ման,
ձեռքին՝ մէկ աման
ձիթապուրմ *տօլման*
բաժնելով լըման
չի տոկար մերժման.
«Առէ՛ք, ա՛խ. *ամա՛ն*,
«*եամա՛ն* է, *եամա՛ն*։»

* * *

Լոյս, օդ. կեանք՝ մաքուր,
ո՛չ նամակ, ո՛չ լուր,

սոխակ՝ դաշնամո՛ւր ,
զուռնայի ձայն՝ սո՛ւր . .
առատ կերակուր ,
մշտաճարճատ հուր ,
ոչխար ի շամփուր ,
կարագ , կաթնապուր ,
անմահակա՛ն ջուր ,
օղի անփրփուր ,
լեցո՛ւր ու լեցուր ,
հոգերէ թափուր ,
կե՛ր , ա՛րբ , *եւ ն* եկուր :
Ցորեկին՝ կանգուն ,
գիշերն՝ անուշ քուն ,
իսկ առաւօտուն
մեր տան դէմ , ծայտուն ,
Եղսաքեր տուտուն
զգգուէ իր կատուն . . . :
Սենեակ բռնողին՝
մաքուր անկողին ,
շիշ մ'այ ջուր՝ կողին ,
գաւաթ՝ նորէկուկ ,
ո՛չ շատ՝ կլկլլուկ ,
ո՛չ մեկ հատ մլլուկ . . . :
— Ցովակիմ աղան ,
եւ իր ճոխ սեղան ,
Օրէկ Լ. Եվկնտեան ,
աշխարհի յատեան
կեցցէն յաւիտեան . . . :

Ալեմտաղի , Մայիս , 1900

# ԱՂՋԻԿՆ ՈՒ ՊՈՒԷՏԸ

ԱՂՋԻԿԸ

— Աղջիկ մ'եմ ես հետաքրքիր,
ուրիշ աղջկանց ո՛չ նման.
սիրել, սիրուիլ չեմ փափաքիր.
ո՛չ ալ երգ, պար, *գոմպլիմանի*։

Չեմ ուզեր որ՝ քնքնիկ, օտար,
չափահասն ու պատանին,
հաւնին ինծ եւ դէմս, անդադար
խունկ, մոմ վառել հոգ տանի՛ն։

Չեմ մտածեր՝ ծիր ամուսին,
տիկին ըլլալ, կազմել տուն,
եւ զաւակներ՝ որոնք խօսին
թռչնոց նման ոտոտուն։

Չեմ փափաքիր որ խինդ ու խաղ
հետեւին օրերն իմ օրեր,
այրիմ անհոգ, անվիշտ, խաղաղ
տափակութեամբ մ'աներեր։

Հոգիս միայն կ'ուզէ փրթիլ,
— հոգիս լեղւոյ ծարաւի —
ի սրտի առնելով կաթիլ կաթիլ
Ու ափսոսանքի, սուր ցաւի:

Կ'ուզեմ որ՝ ես, ես'ս ցաւ ըզգամ,
բարոյական բիրտ տանջանք,
Եւ չը կրնամ գէթ մէ'կ անգամ
բերնէս հանել հառաչանք:

Կ'ուզեմ որ ձայն մ'(ներշո՛ւն ապտակ,
այլափողոս չար ժանիք,)
Սուրանայ՝ գանկ ու լանջիս տակ
Ինչ որ կայ լաւ, արժանիք:

Այցելութեան սրահ, սեղան,
թատրոնն ըլլամ թէ փողոց,
գլխու եւ խորհանք, խայթուածք տեղանի,
սիրելս կշեն զերդ որդոց:

Եւ զոյգ մ'աչքեր չար, մի՛շտ արթուն,
Քննեն շարժուածքս ու քայլեր,
բռուին ըսել.—«Անկի՛րթ մ'ես դուն,
Նսար . . . եղեր . . . չէ՛ր վայլեր :»

Ձաղկեն զիս իբր ըստորնացած
ցեղով , ոսկւով ալ աղքատ ,
եւ չը կրնամ , ճիչո՛վ մ'իսկ ցած ,
յայտնել բողոք կամ գանգատ ։

Կ'ուզեմ որ կամքս ալ խորտակի .
ձանձրոյթն ալ , ծանր ու տափակ ,
զիս պաշարէ շուրջանակի
բանտի մը պէս ամրափակ :

Եւ վառի սիրտս , հրդեհի՛ յար
անարգանաց կայծակէն ,
եւ արիւնի , լա՛յ վշտահար ,
սո՛ւր սուր փուշեր զայն ծակեն ։

Կ'ուզեմ որ միտքս յորջորջունի մէջ
յոյլ , անմըշակ ու տըհաս ,
դէմքս՝ անշըքնորհ, աչքս՝ ամպարիշ,
անձս՝ ընտանի պատուհաս :

Ա՜հ , ի՞նչ ընեմ , ըսէ՛, Պըւէ՛տ ,
որ, երկնից տակ լուսավառ ,
հընար չըլլա՛յ գտնել յաւէտ
էակ մ'ինձ չափ նեղ , թըշուա՛ռ ։

Կ՚ուզեմ ըզգալ կսկիծն հըզօր ,
կոտտանքն անհուն , անսահման ,
լուռ , անտրտունջ , համառա՛ զօր ,
հոգւոյն , սրտին խայխայման . . . : »

## ՊՈՒԷՏԸ

— Կ՚ուզե՞ս ճանչնալ , աղջի՛կ յիմար ,
Գողգոթայի ցից ճամբան .
միջոց մը կա՛յ քեզի համար ,
միա՛կ , ըստո՛յգ, անխափա՛ն :

Ամուսնացի՛ր , Էրիկ մ՚առ դու ,
Եւ թո՛ղ , լեզուով սայրասուր ,
սիրտն անգթօրով , դեմքը թըթու՝
միշտ հետդ ապրի . . . մի Կեսուր :

—1893—





# ԲԱՂԴԱՒՈՐ ՏՂԱՆ

Լեւոնիկն երէկ տարինք, քաղեցինք . . .
օրն էր կիրակի, օդն՝ աղուոր ա՛յնքան
որ՝ յուղարկաւոր քառասուն անձինք
հանութեամբ մինչեւ գերեզման եկան . . . ։

Իր մահն ամենուն ազդեց խորունկ ցաւ,
մինչեւ իսկ վըրան . . . լացողնե՛ր եղան,
ծառ ալ վայելուչ թաղում մ'ունեցաւ,
—Բաղդաւո՛ր տղան . . . ։

Ցոփակեաց ջոջի զաւակ մէկ հատիկ,
Լեւոնիկ՝ տխմար, խուլ ու միաչէն,
բա՛ն մը չիմացաւ ու չզգաց սաստիկ,
ժպտաշո՛ւրթն անցաւ աշխարհիս մէջէն . . . ։

Ո՛չ գիրք ձեռքն առաւ, ո՛չ դպրոց գընաց,
ուր կարկուտի պէս *ուրբունք* կը տեղան,
ուղեղն ենթակայ չեղա՛ւ տանջանաց,
—Բաղդաւո՛ր տղան . . . ։

Մեռան հայրն ու մայրն ետեւէ ետեւ,
տուն տեղ՝ ժառանգեց ամբո՛ղջն, առանձին ։
Աղջըկան մը հետ — հովի պէս թեթեւ —
որ մ'ալ Լեւոնիկն ամուսնացուցի՛ն . . . ,

Փեսայ գտնելուն ցնծման պատճառաւ,
հազիւ թէ բազմած հարսնիքին սեղան,
սիրտի . . . կոտրուածէ զոքանչը մեռա՛ւ . . .
—Բաղդաւո՛ր տղան . . . ։

Կինն, երկու տարի, շուայտ ու օրուայ
երգեց ու պարեց, մսխեց անդադար.
մինչդեռ, Սոկրատի՛ նման անողայլ,
Լեւոնիկն անո՛ւշ անուշ կը խնդար . . . :

Եւ իր բոլոր ինչքն երբ եղաւ անհետ,
ո՛չ յուզմունք ըզգաց, ո՛չ ուրացող ա՛ն.
կինն օր մ՛ալ փախաւ . . . ապուշի՛ մը հետ,
—Բաղդաւո՛ր տղան . . . ։

Գիտեր մ՛իր տունէն ծագեցաւ հրդեհ,
մոխիր դարձաւ տունն—ինք՝ փրկեց հոգին . . .
օր մ՛ալ թրամվէյի արկած մ՛անծպատեհ
ջախջախեց միայն . . . ոսկորն աջ ոտքին . . . ։

Անկէ ետքն ա՛լ մարդ չի գընաց իր քով,
եւ, զըւարթ անոնց պէս որ . . . կը կաղան,
աշխարհքն ոտնակո՛խ ըրաւ . . . մէ՛կ ոտքով,
—Բաղդաւո՛ր տղան . . . ։

Վերջերս—երեսուն տարու հազի՛ւ կար—
ունեցաւ *թլփամզնաբշտապ* . . .
համայն անկելոց բըժիշկ օգտակար
տօքթոր Զաւըրծեանն հասաւ հապըշտապ . . . ։

Քովն՝ հիւանդապահ կընիկ մը—պառաւ—
դըրին, աննըշան վարձքի մը փոխան,
անոր գիրկին մէջ . . . խռկալո՛վ մեռաւ,
—Բաղդաւո՛ր տղան . . . ։

Ընկուզի փայտէ դագաղ մը գըտանք,
Նոր—քիչ գործածուած . . . —կէս գինով առինք.
բարեկամներն ալ ըրին խըղճմըտանք,
ձըրի տըւին մեզ մոմ ու շուրջառ հինգ . . . ։

Հինգ քահանայի տղիներ չո՛րս մեծիս .
ուրիշ ծախք չեղաւ . . .։ Զըրի՝ Հայր Ալյան
դամբանական մը խօսեցաւ վըճնի՛ս . . .
—Բաղդաւո՛ր տղան . . . :

Կարապես աղան , մխիթար մեր քաղքին ,
—Լեւոնիկին մօրն հօրաքրոջ փեսայ —
լաւ տեղ մը ցուցուց մեռելաթաղին ,
ըսաւ . «Փորեցէ՛ք գերեզմանն հոս՛ . . .»

Այժմ , ապես Զունդի դամբանին մօտիկ ,
ուր մարմարէ պերճ սիւներ կը տողան ,
Լեւոնիկ հանգչի քունով մ'հանդարտիկ ,
—Բաղդաւո՛ր տղան . . . .

Լեւոնիկն երէկ տարին , թաղեցին . . .
օրն էր կիրակի , օդն՝ աղուոր ա՛յնքան
որ՝ յուղարկաւոր քառասուն անձինք
հաճութեամբ մինչեւ գերեզման եկան ։

Իր մահն ամենուն ազդեց խորունկ ցաւ . . .
մինչեւ իսկ վըրան . . . լացողնե՛ր եղան . . .
ա՛ս ալ վայելուչ թաղում մ'ունեցաւ
Բաղդաւո՛ր տղան . . . ։

— 1901 —

# ՀՈՎԱՇԽԱՐԸ

## ՉԻՆԱԿԱՆ ՄԱՍԱԼ

Օրիորդ Մարգնամիս, ուսեալ ու սիրուն,
—ի՛նչ սքանչելի բան, չէ՞ . . .—
որ՝ զբաղար, ճամփով պատմուածքներուն
յարգը կը ճանչէ,
Եւ որ լաւ գիտէ տարժել ի հարկին
լեզու ու գրիչ,
պատասխանելով իմ առաջարկին,
ձայնով հրապուրիչ.
«Մասալ» մը պատմեց ինձ, դեռ անցեալ օր,
Չինական մասալ,
զոր յանգի չափով առնու փեղոյոր
ձեզ պատմեմ ես ալ ։

* * *

Չինաստանի մէջ ուրեմն, անուանի
Բեքինի մօտիկ,
Չինկ-Ֆու-Լի անուն կոյս մը գեղանի
ու մանրասօսիկ,
Չենկ-Լի-Շու անուն մէկ երդյալ մարդու
հետ, իրկուն առտու,
ի՛նչ պչրանքներով՝ ժպտելո՛ւ բան էր,
կը սիրաբանէր ։

Մագաղաթի գոյն, աչքով կիսափակ,
    դէմքովն ալ տափակ,
գլխուն գագաթէն մազին հիւսքն ըստուար
    կախուած մէջքն ի վար,
վառած, բորբոքած պարզուկ Չենկ-Լի-Տուն,
    հնազանդ իբրեւ շուն,
աղուոր աղջըկան սիրովն անդադար
    կը հալէ՛ր կ՚երթար ։
—«Կ՚ուզե՞ս կինս ըլլալ, անուշ Ջինկ-Ցու-Լի,
    «քա՛կ պաշտելի»
ըսաւ օր մ՚անոր, «վըկա՛յ այս արեւ
    «մեր գլխուն վերեւ,
«որ եթէ դու սիրտդ ինձ չի տաս, գո՛ւն իմ,
    «ես պիտի մեռնիմ ։»
Չինկ-Ցու-Լի մնչեց, աչքերը խոնարհ.
    —«Մերժել չեմ կրնար . . .
«ես ալ քեզ, կ՚ուխտեմ պուտտային յատեան,
    «սիրել յաւիտեա՛ն . . . ։»

* * *

Զարդ ու վարդերով թարմ ու գունագեղ,
    այգուն տակ շքեղ,
ննջեցունելով սըրինգ ու շեփոր,
    կազմեցին թափոր,
որ մ՚առին զիրենք երկու մանտարին
    ու մեհեան տարին,
եւ հոնկէ ալ դուրս ելան՝ անմեկին
    եղած այր ու կին . . . ։

* * *

Սիրով անայլայլ ու հոգեպարար
    գըգուելով զիրար,

Ճիշդ երկու տարի , աղջիկն ու տղան
    երջանիկ եղան ։

* * *

Մութ գիշեր մ'իրենց տնակին վրան
    բու մը վայրբերան
թառեցաւ... ողբաց...։Չէնկ-Լի-Ճու հիւանդ՝
    Առտուն՝ տխրաւանդ
Մահճին մէջ փռուած , շնչահատ իբրեւ ծեր
    անդուլ կը հեծէր . . .
մարած էր նայուածքն ու լեզուն՝ կարկամ .

    —«Վաղն , ա՛լ ես չի կամ . . . »
մրմընջեց ձայնով մ'հազիւ լըսելի ,
    «Ազնիւ Չինկ-Ֆու-Լի ,
«Երբոր ես մեռնիմ ի՞նչ պիտ'ընես դու
    «Առանց այր մարդու . . . ։ »
—«Ա՛յ , միտս բրջելով գերեզմանիդ վէմ ,
    «պիտի արտասուեմ . . . ։»
—«Դեռ ատի , սիրուն , երբ մնաս այրի ,
    «Հոգիս պիտ'այրի՛ . . . ։»
— «Պիտ'անմըխիթար հիւծիմ, ա՛յնչափ հեզ.
    «կարգըւի՞լ , երբե՛ք . . . ։ »
—«Չես կրնար ըլլալ այդքան զոհաբեր ,
    «դու զքեզ մի՛ խաբեր ,
«թեկնածուներ շուրջդ, աշնան ու գարնան,
    «շա՛տ պիտի դառնան . . . ։ »
—«Պիտի մարմի՛ն հետդ իմ կեանքիս լոյսեր ,
    «այլ ինձ պէտք չէ՛ սէր . . . ։»
—«Գիտեմ որ կրկին պիտ'ամուսնանաս . . .
    «միայն , *զոզնա՛*ս ,
«կ'ուզեմ որ ուխտես , երդնուս ասանոր,
    «ո՛րչափ ատեն որ

«գերեզմանէս հողն ըլլայ թաց, խոնաւ,
«չը կարգըւիլ բնաւ . . . :»
Չինկ-Ֆու-Լի, նուաղկոտ, ձեռքերը կուրծքին,
ողբով լալագին,
հեծեծեց.—«Կ'երդնում, վըկայ ա՛յս արեւ
«մեր գլխուն վերեւ,
«որ պիտի ապրիմ իբր այրի, պառաւ....:»
—Չէնկ-Լի-Շու մեռաւ:

* * *

Մէկ շաբաթ ետքը, այրին, ամէն օր
թաթխըւած սուգով,
գերեզմանատուն կ'երթար, եւ անոր
հողակոյտին քով,
ա՛լ դադրեցուցած արցունք եւ հառաչ,
մեծ հովահարով
որպէս զի հողը չորնար օր առաջ,
անոր կու տար հով . . . :

* * *

Հետեւութի՞ւնը՝ պա՛րզ է.—Պերայէն
մինչեւ ի Պեքին,
վա՛յ անոնց որոնք հաւատ կ'ընծայեն
կանանց խոստմունքին:

# ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Յար. Գ. Մրմրեանի

* * *

Հայկ եռանդագին կը խօսէր .

—«Նուա՛րդ ,
«վաղն առտու , արեւն երբ ծագէ զուարթ ,
«քեզ հետ դուրս ելլենք եւ երթա՛նք անտառ ,
«գիտե՞ս , այն անտառն , առուակին մօտիկ
«ուր կան ծաղիկներ ու կակուղ խոտիկ ,
«եւ ուր , թառ բնտրած թաւ ծառի մը բուն ,
«միշտ կը ներնուրայ նրպաւուն , օ՛րն ի բուն .
«Մինչ ոստերու տակ , բոյներուն մէջէն
«թռչուններն անուշ երգեր մրմնջեն .
«կրնանք , կրթընած իրարու ուսին ,
«խնդալ ու խօսիլ , երգել միասին .
«Ծաղիկներն ամէն բացուած են արդէն .
«փուշեր կը քաղենք յասմիկէն , վարդէն ,
«յետոյ , խոտերուն մէջ , թաւալգլոր
«կը զուարճանանք ցերեկը բոլոր . . . .
«Կու գա՞ս վաղն , ըսէ՛ . . . .»

—«Վաղն , առաւօտուն
«ազգականներ հիւր պիտի գան մեր տուն ,
«եւ դ ուն գիտես , Հայկ , թէ մայրս հոգատար ,
«երբ հիւր գայ , ինծ դուրս ելլել թող չի տար .
«Հա՛յկ , այսօր երթանք , հիմա, ե՛կ փութանք ,
«երթիլ անտառին ըստուերներուն տակ .
«հոն ո՛չ հովիւներ, ո՛չ գառնուկներ կան . . .
«եկո՛ւր , ըլլանք հետդ հոն թափառական . . .
«բարեւ տանք , —Գարուն եղի՛ր , ես՝ Տիկին —
«թիթեռնիկներուն մեծ ու պզտիկին . . . .
«Վերէն , թռչուններն երգոր մեզ դիտեն ,
«կըմնանց խօսէ՛ հետս , ականջիս մօտէն . . .
«տուն , հա՛յէ երթանք , երկար չէ ճամբան ,
«առաջէն պատմելիք քեզ ունիմ շա՛տ բան . . . .»

—«Իրա՞ւ , նայա՛ծ ե՛ս . . . բայց չը՛լլար հիմա . . .
«Նուարդ , պէտք է տուն դառնամ , ակամա՛յ . . . : »
—«Երբ կը հեռանաս , գիտե՞ս , ցաւ կ'զգամ . . . »
«Դուն չես սիրեր զիս , անսի՛րտ անզգամ,
«Եթէ սիրէիր , կ'ըսէիր . —«Նուա՛րդ ,
«Եկուր երթանք խաղել հետդ յասմիկն ու վարդ ,
«գլորիլ վրայ խոտերուն դալար . . .
«Եթէ սիրէիր , կ'ըսէիր — «Մի՛ լար . . . »
Եւ սկըսաւ լալ . . . ։
Մինչ արեւն արդար՝
այս զուր արցունքին վրայ կը խնդար ,
Հայկ յուզուած , Նուարդ՝ մազերը ցիրցան ,
թեւերնին բացին , իրար փարեցան ,
մէյմէկ տաք համբոյր տուին իրարու . . . ։

* * *

—Հայկ ութ տարու էր , Նուարդ՝ վե՛ց տարու ։

—1892—

« Ա Լ Պ Օ Մ Է Ս »

Կինն ազնուազոյն , պարկեշտ , անբասիր՝
ա՛յն է որուն վրայ բընաւ չեն խօսիր ։
—Իսկ այրն՝ արանց մէջ պատուականագոյն՝
կընոջ կամքն ամէն կատարո՛ղն խնկոյն ։

# ԱՐՁԱԳԱՆԳԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

* * *

—Ի՞նչ է անունն երկրիս տիրող էակին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ սիրահեղ գեղգեղն ունի սոխակին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ շողուն դէմքն ու շնորհն ունի լուսնակին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ թոյրն, հրապոյրն ու բոյրն ունի վարդ ծաղկին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ դրախտաբոյր լոյսն եւ յո՛յսն է մեր յարկին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ կուտայ մեզ համն հեշտութեան բաժակին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ է զոհարն երջանկութեան սրբակին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ է այն որ սիրովն անզի՛ք բըռընկին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ կայ ու կեանք չամբէ նորեկ մանկիկին . . .
—Կի՛ն . . .

—Ո՞վ է այն որ զտնենք բեւեռ մէջ զերկին . . .
—Կի՛ն . . .

# ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԱՐՁԱԳԱՆԳԻՆ

* * *

—Ո՞վ անկայուն է նման ծովու ալեակին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ է թեթեւ փետուրին պէս թռչնիկին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ սուր ճանկեր պահէ տակն իր թաթիկին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ թշնամին է մեր պատւոյն, հրաշկին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ մեր յուզող առուրց ընկերն անմեկին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ մերթ պարզէ, մերթ պատուհա՛ս մէ կրկին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ է այն որ ձեռնով սիրտե՛ր խորտակին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ է այն որ սրտին մէջ ի՛մ բընակին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ է խառնուրդ սատանին ու հրեշտակին . . .
—Կի՛ն . . . :

—Ո՞վ կը մատնէ զմեզ դըժոխի՛ կըրակին . . .
—Կի՛ն , . . :

— 1885 —

# ՑԱՅԳԵՐԳ

## ՏՕ, ՌԷ, ՄԻ, ՖԱ

[Երգանակի դրուելու համար]

Մինչդեռ յուսնի ճակատն յստակ
ցոլայ ամպոց մէջ ի մօտոյ,
կուգամ երգել պատշգամիդ տակ,
տօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի, տօ՜...։

Բնութիւնն ամէն հանգչի ի քուն,
թռչունն ոստոց մէջ կը լռէ...
Եկո՛ւր, երգենք ցնծագ այգուն,
ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի, տօ, ռէ՜...։

Ո՛ւր ես, հոգիս սիրատենչիկ
սիրուն ժըպիտդ ըմպել կամի,
բա՛ց պատուհանդ, անգո՛ւթ աղջիկ,
մի, ֆա, սօլ, լա, սի, տօ, ռէ, մի՜...։

Ցուցո՛ւր երեսդ ինձ լուսաշող,
նուրբ, ճըկուն լանջքդ որ կը հեւայ,
եւ ակռաներդ՝ հոգի՜ մաշող.
ֆա, սօլ, լա, սի, տօ, ռէ, մի, ֆա՜...։

Ցուցո՛ւր գլուխըդ թագավայել,
խոպոպներն ալ մազերուդ խօլ
զոր զեփիւռը գայ փայփայել.
սօլ, լա, սի, տօ, ռէ, մի, ֆա, սօ՜լ...։

Կը հիւծի, տէ՛ր, սրտիկս ի սպառ,
կ'երգէ կիթառս այլ ու կուլայ
բաղատելով քենէ մէ՛կ բառ ·
լա, սի, դօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա՛ . . . :

Թէ կը լսես ձայն մ'որ, տղու,
երազիդ մէջ քեզ կը խօսի,
իմ հառաչն է դժբաղդ սրտու ·
սի, դօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի՛ . . . :

Այսիդ վըրայ անուշաբոյր,
զերթ բրբուր ի վերայ որբոյ,
թո՛ղ որ հանգչի պահ մ'իմ համբոյր . . .
դօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի, դօ՛ . . . :

Իմ յուսահատ գլխուս վերեւ
ուղղէ՛ աչքդ որ հրդեհ վառէ,
խաւարիս՝ դուն լո՛յս տուր, Արեւ,
ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի, դօ, ռէ՛ . . . :

Վարդ մ'եմ զոր կը խեղդեն փուշեր,
որ, ջուրէ զուրկ, կը թառամի ·
ո՛հ, ոռոգէ՛ զիս այս գիշեր,
մի, ֆա, սօլ, լա, սի, դօ, ռէ, մի՛ . . . :

Մի՛ զրկանար դուն առ Ադամ,
ո՛վ դրախտածին չքնաղ Եւա,
կենաց պտուղն այն համադամ,
ֆա, սօլ, լա, սի, դօ, ռէ, մի, ֆա՛ . . . :

Շնորհալէմ ես ու գեղանի,
կրնա՞ս ուրեմն անտարբեր գոլ,
մերժել վէրքիս ըսպեղանի . . . .
սօլ, լա, սի, տօ, ռէ, մի, ֆա, սօ՛լ . . . ,

Թէ կին եմ ու պէտք է նազիս,
Նրէտօտա՛կ ալ ես . պէտք է, Ծէլլա՛հ,
որ կարէլցիս ու . . . փրկես զիս,
լա, սի, տօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա՛ . . . ։

Ա՛լ կը մարի ձայնըս նըւաղ,
մօտեցաւ ժամն հաւախօսի,
ու չերեւցար դուն դեռ, աւա՛ղ,
սի, տօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա, սի՛ . . . ։

Ես կ'երթամ, դուն յաւ քընացի՛ր .
վաղն, օրուան լոյս տալէն յետոյ,
պիտի երգել գամ անձանձիր,
տօ, ռէ, մի. ֆա, սօլ, լա, սի, տօ՛ . . . :

—1887—

# ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ

Ծըփող է ծովն , այլ ունի փոքրիկ ։
Երբ կ'ուզես որ նաւակդ անդորրիկ
յառաջ ընթանայ , ընտրէ՛ դու փոքրիկ
լըճակը ։

Անպէս բանեցու մի՛ սար երբէք զին .
հաճուով ծախսէ՛ պղինձն , արծաթն եւ ոսկին .
ծահուն յարմարցո՛ւր ծապիկդ – ու ծապկին
կռնակը ։

Խընայող եղի՛ր գործով ու բանիւ .
Թո՛ղ ոտքերդ ըլլան քու կառք . . . երկանիւ.
Նեղ , նուրբ կօշկին տեղ՝ հագի՛ր լայն , ազնիւ
մուճակը ։

Եղի՛ր աշխատող , պարկեշտ ու բարի ,
եւ գիտցի՛ր որ միշտ իշխանք աշխարհի
չեն ունենար քու երջանիկ , արի
վիճակը ։

* * *

Համաշխարհային օրէնք մ'է ասի .
անմիտ մա՛րդն է որ միշտ շատ կը խօսի ,
լռելացին՝ խօսքով չ'ենթարկեր վնասի
իր ոյժը ։

Հոն ուր այր ու կին հաշտ չեն միասին ,
վա՜յ այն տան գլխուն . . . — տղայք կը վըլսին,
եւ սեղանին վրայ կու գայ միշտ միայն
վատոյժը ։

Երբ որձակ մ'ըլլայ յարկին ու օրէնքն ,
ունենայ համեստ սէրին, պարզ սուտան ,
Նուա՛ղ դառն ակամբչին կը հեշտ մահուան
չար գոյժը ։

Ծանօթ են բազում տխուր հարկերանք ,
այլ ա՛յն որ կոչի «Դրագէտի Երկրանձ»
է՝ սուր տխրութեան անէնէն անանց ,
անբո՛յժը ։

* * *

Ամբողջ մարդկային կեանքն է մի մատեան
ուր կ'ապացուցուի յա՛ւ թէ՝ յաւիտեան՝
յարատեւ չա՛նքն է ամէն ծանրութեան
լըծակը ։

Երբ չի գործածես խիղճ պնուսահոս ,
ու չ'երկարես ձեռքդ ամէն ծայրկի մօտ ,
չի խայթեր ըզքեզ՝ աննաւս , անամօթ
պիծակը ։

Երբ գիտնաս ծերոց խօսքն ու խրատն յարգել ,
մեր բանին արամփուղ փքերնէ ստանարգել ,
քեզ չի ծեծեւնար չարին անարգել
կայծակը ։

Երբ դու կ'երթեւեկէիր ու կամքիդ չես գար .
անկեղծ բարեկամ չունիս , կեղծ՝ օտար ,
ո՞ւր պիտի երթաս մեռնել . . . չեմ գիտեր
ո՛ր ծակը . . . :

* * *

Արտաքին տեսքէն մի՛ խաբուիր ի զուր .
զորս , անսուտ հաւի՛ն միայն զարդ տուր ,
զի նա լա՛ւ է քան սոնք , մաքրափետուր
կարապը :

Մէ՛յ մ'երկինք ուղղէ աչքերդ , մէ՛յ մ'երկիր ,
եւ կարկառէ՛ միշտ ձեռք մը կարեկիր
անոնց որ կ'իյնան ցաւոց խմակիր
վիրապը :

Պարկեշտ , խելացի կոյսն ընտրէ՛ քեզ կին .
զի նենգ 'է տանիլ արծաթն եւ ոսկին,
մինչ ոչինչ կրնայ լեցունել զանկին
պարապը :

* * *

Խոստմանց ու քծծոց մի՛ վստահիր դու ,
զի մէկ կուտ չարժեն անզգասի մարդու
երեսուն խոսքն ու քառասունն երկու
նամակը :

Ծանծաղ կերպեր կան նուրբ որ ա՛ղտ կը կորսին . . .
մինչ նամանաւորեն փրթուած ի գետին
հինցուկ այլ մաքո՛ւր է միշտ աղքատին
վերմակը :

Աղջի՛կ, քեզ ի՞նչ փոյթ դուռն ու դըրացին.
վօտա՛ց աղբիւր են ծախք ու խաղք նոցին.
—թէ՛ ըղձուարաժամս, թէ՛ սուղ՝ է հացին
ճերմակը:

Թէ զոհ են քիչով, հեզ, եւ կ'աշխատին
քեզ նըման, պարկեշտ կինդ եւ քու որդին,
երնէ՛կ քեզ, ո՛վ մարդ, հեծեր ես Բաղդին
քամակի:

* * *

Դանդաղ ընթանալն է գործ կրիային.
այն աչքերն որ քեզ ուշիւ կը նային,
կը սիրեն ձեռքին ու մեքենային
արագը:

Վազէ՛, սուրա՛, տէ՛ս, փնտռէ՛ դէս ու դէն,
հող չէ որ ճակտէդ յորդ քրտինք կաթեն.
առանց յոգնութեան չի հանուիր կաթէն
կարագը:

Մըշակին, որ պինդ չի կապեր գօտի,
չի խլեր խոտերն իր արտէն սընոտի,
կը փըլի հիւղակն երբոր ժանգոտի
ուրագը:

Ծոյլին վիճակն է վիճակ յիմարի.
Եղբա՛յր, եղիր միշտ ժիր, արթուն, արի,
որպէս զի քու տանդ երբէք չի մարի
ճրագը:

* * *

Մի՛ զանգատիր դու բաղդէն ամէն օր .
Երբ գործ մը բռնես , խանութ բանաս նոր ,
Եւ չի յաջողիս՝ լոկ դո՛ւ ես անոր
պատճառը ։

Կամ , մինչդեռ խնդրանք ու պէտք չի կային ,
գին վճարեր ես սուղ՝ վատ առարկային
զոր չի սպառեր բնաւ բանգէտ շուկային
վաճառը ։

Կա՛մ չես զիջանիր ծախել աժանի .
կա՛մ , երբ դրացիդ ծուխն իրեն կը տանի,
անհոգ՝ կը կարդաս դու Է. Ռընանի
մէկ ճառը . . . ։

Թէ դու չի շահիս , անփո՛րձ բարեկամ ,
գիտցիր որ չեն տար քեզ հաց ու դրամ ,
հոս թէ այլուր , Հայն , Եգիպտացին , կամ
Մաճառը ։

— 1887 —

# Տղու Պատասխան

Միլսօն Սերոբեանին

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
— Հայ ուսուցիչ մը, որ կը փափաքէր,
բերմամբ պաշտօնին իր բարձր ու վսեմ,
թաղին վարժարանց մերձենալ ի սեմ,
քննել զանոնք եւ, ճակտիւ անկրնճիռ,
տալ նոր հրահանգ, դաս, պատուէր, վճիռ,
պանդոկ մը մտաւ եւ, օտարաբար
կօտանալէ վերջն, ինկաւ ճանապարհ ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
Պարոն ուսուցիչն, արդէն քիչ մը գէր,
ակնոցն ի քթին, գլխարկ ի գլուխ,
կ'երթար, թափելով քրտինք յորդաբուղխ ։
Թաղն հեռաւոր էր, ճամբան ալ՝ երկար,
բայց պէտք էր երթալ, քալե՛լ, ճար չի կար .
— միթէ հնա՞ր է նստիլ կառք կամ ձի
երբ մարդ տնուչ է մի . . . հայ դպրոցի ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
Երերցնելով ձեռքերն ու ոտքեր,
մեր *միւսիւն* որ, տաս յոգնած, կը հեւար,
փողոց մը մտաւ քարուտ, զառիվար .
այնտեղ փողոց մը ուր չէնք, խանութ, տուն՝
տեսք մ'ունեցած, մութ, խարխուլ, փտտուն,
ոյց մէջէն՝ պղտոր, գարշահոտ վտակ,
ջուր մը սողալով վար կ'երթար ծիտակ ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
Հոս, հոն, հաւ, աքլոր, բադեր ու սագեր
շանց հետ, իբր եղբայր եւ քոյր հարազատ,
կ'ապրէին անփոյթ, անտարբեր, ազատ ․
Մինչդեռ՝ բաց գլուխ, կիսամերկ, բոպիկ
խումբ խումբ տղաքներ, վազվըզուն;, ճարպիկ,
շինել քանդելով կոյտեր հողային
արեւին ներքեւ, ծիր, կը խաղային . . . ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
Կին, աղջիկ, գործի լաթերնին հագեր,
բաց պատուհան ու դռներու մօտիկ
մին կար կը կարէր, մին կ'եփէր խորտիկ,
միւսն ալ գետինը՝ ձիւնի պէս ճերմակ
փռած, կը կարկըտէր մէկ հինուկ վերմակ,
մինչ ուրիշ մ'առոյգ, փութով մ'անհամբեր՝
աւելն ոտքին տակ՝ տախտակ կը շփէր ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
Տեղ տեղ լըսուէին *մանի*ներ, երգեր,
սրճարաններու, գինետանց մէջէն
ուր խաղն ու գինին սիրողք պակաս չէն . . .
ուսուցիչն յառաջ կ'երթար յամրընթաց,
խե՛ղճը, ջուրն ինկած ըսպունգի պէս թաց,
դեռ չի մարսած կուռ կերակրոյն պաշար,
մէկ ձեռքը փորին վրա՛յ, կը ֆըշար . . .։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . . ։
Զինքը դիտէին փողոցին աչքեր ․
խանութպան մ'ինքնիրեն կ'ըսէր.—«քի՛մ տիր սու . . . ։»
ձկնորս մ'անդիէն՝—«նէ՞ իսքէր, մուշո՛ւ . . .
«ճէ՛յ պապամ, մա՛լ տըր, թորիկ, փալամուտ . . . ։ »
—«Ծօ՞զմու տուր ալան, եիւզլիւյէ՛ արմուտ ։»
Կին մ'ալ մէկ ուրիշ կընկան—«քա՛ Ֆանի,
«սա շաքխան նայէ՛, *տախտի* կ'ըլլանի . . . ։»

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՜ տաք էր . . . ։
*Միւսիւն* , ոսկելով փողկապին ծայրեր ,
զարկաւ դպրատան դուռն , ու շունչ մ՚առաւ ·
բացաւ դուռն իսկոյն կարճ կին մը պառաւ ,
տնտեսուհին էր , դէմք խնդումերես ։
—«Պատուելին հո՞ս է։»—«Հա՛, հրամմէ՛ր էս . . .։»
Երկու տղաք որ . . . վար էին եկեր
իրեն ուղղեցին զարմացած աչքեր . . . ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՜ տաք էր . . . ։
Բակին մէջ կարգ մը հին կօշկի զոյգեր
շարուած էին մերկ սեղանի մը քով
որուն վրայ նոյնպէս կարգով , խընամքով
դըրուած սակառներ , պընակներ կային
ու անուս մանկունք —յո՛յսք ապագային—
պիտի ուտէին՝ երկնային շնորհաց
արդիւնք՝ քիչ մ՚երօփիկ , պանիր կամ չոր հաց ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՜ տաք էր . . .։
Շիտակ քալելու ընելով ջանքեր
կաղ մարդ մ՚երեւաց սանդուխին վերեւ·
ծեր պատուելին էր.—«Բարեւ ձեզ ։»—«Բարեւ. . .։»
*Միւսիւն* ծանր ու լուրջ դէմքով վեր ելաւ . . .։
[illegible]է՛հ, բարի՛ եկիք, ի՞նչպէս էք . . .։»—«Շա՛տ լաւ։»
[illegible]ակ մը հնչեց , ամբողջ մանկըտին
աղմկայոյզ շարժմամբ կանգնեցաւ յոտին . . .։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՜ տաք էր . . . ։
Կային անոնց մէջ մըտացի դէմքեր
սուր , չարաճըճի աչքերով արթուն
որք կարծես հոգին կը զննեն մարդուն ,
մէկ քանի հատ ալ ճակատ նեղ, տափակ ,
նայուածք անընշան , շրթունք կիսափակ
որոնք , երբ մեծնան , կ՚ըլլան անպատճառ
ձկնորս , ջրհանկիր կամ մրգավաճառ ։

Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . .։»
Տիար քննիչն ուղղեց մեկ քանի խօսքեր .
. . . «Դո՛ւք, որ օր մ'ուսեալ մարդ պիտի լինիք,
«չանացէ՛ք քաղել վեհ փառաց դափնիք . . .
«ուր կայ Գեղեցիկ, Ճշմարիտ, Բարի,
«թո՛ղ ձեր սիրտն ու միտ յաւէտ հո՛ն փարի . . .։»
Երբ տեսաւ իր դէմ եօթ ութ տարեկան
տղայ մ'որ ունէր մազեր աղջըկան . . .

—Տա՛ք էր օդն այն օր, սոսկալի՛ տաք էր . . .—
մազեր զոր իր ուսն ի վար էր ձըգեր . . . ։
—«Մանչոց մէջ ինչո՞ւ նստեր ես, աղջիկ։»
—«Ես մանչ եմ, *միւսիւ*, անունս է Խաչիկ . . .։»
—«Է՛հ, մազերդ ինչո՞ւ կտրել չեն տուեր . . .։»
Տղան, այցելու տեսչին դէմքն ի վեր,
յարեց . —«Մարս աղջիկ չի պերեր կոր տէ . . .։»
—«Լըռէ՛, անպատկա՛ռ շուն, տեղըդ նստէ՛ . . .։»

---

Հըռետորի ուռուցիկ խօսքերն, հրթիռ շողշողուն,
մեր մէջ միայն տեւական . . . գլխու ցաւ մը կը թողուն ։

# ԲԵՌՆԱԲԱՐՁԸ

Դեռ երիտասարդ կին մը պատուասէր
որ իր ամուսինն էր վաղ կորուսեր ,
անօրութենէն ժանտ եւ անարկու
փրկելու համար զաւակներն երկու ,
գիշեր ու ցերեկ , առտու իրիկուն
կ'աշխատէր անդուլ , անխոնջ , աններկուն :
Երկու կով ունէր , չորս ալ ոչխարներ
որոնց կաթէն լաւ [illegible]ծուն կը [illegible]նէր ,
եւ յիսունի չափ իր հաւերուն զեր
թարմ հաւկիթներն ալ միշտ կը հաւաքէր ,
եւ պարտէզին մէջ աճած պտուղներ ,
բանջարեղէնն ալ քաղաք կը տանէր ,
կը ծախէր զանոնք գիներով յարմար
եւ իր համեստ տանն ու տղոց համար
պէտքերը—կեր , պարէն , հագուստ—ամէն բան
առած , կը բռնէր իր գիւղին ճամբան ։
[illegible]մէնօրեայ երթ ու դարձն՝ իրեն
[illegible] կը ննջէր ա՛յնքան ծանրօրէն
որ [illegible]ամ խնայեց , ճար ճարակ ըրաւ
եւ փոքր իշուկ մը գնեց որ՝ դիւրաւ
իր առեւտուրին ,,ծանին պիտանի
ամէն բեռ՝ անով բերէ ու տանի ։
Հէգ կընոջ խոնջէնքն ատենէ մ'ի վեր
—եւ իշուկինն ալ—այսպէս կը տեւէր . . . :
Իրիկուն մը , երբ երկուքն ալ սաստիկ
յոգնած՝ գիւղ հասան , տնակին մօտիկ
դըրացի կին մը դէմերնին ելաւ .
—«Բար'իրկուն:»

—«Բարե՛ւ :»

—«Ինտո՞ր ես :»

—«Շատ լա՛ւ :»

—«Շատ լա՛ւ . չեմ հաւտար , սո՛ւտ կ՚ըսես , քուրիկ ,
«ամե՛ղք ես , քաշածդ ա՛լ հերիք է , հերի՛ք . . .
«ինչո՞ւ տքնիս դուն այսքան չարաչար ,
«մանած բուրդ , մածուն , հաւկիթ ու բանջար
«պատրաստես , օծնես , ժողվես , ու , առտուն
«երեսի վըրայ ձըգած զաւակ , տուն ,
«պատառ մը հացի համար, մի՛ամինակ,
«հոգւով ու մարմնով տանջուիս շարունակ ,
«պարտիզպանի , խեղճ մըշակի մը պէս՝
«քաղքէն՝ գիւղ , գիւղէն քաղաք շտապես . . . :»
—«Ի՞նչ կրնամ ընել . . . : »

—«Քուրի՛կ , ըսեմ քեզ ,
«ծախէ՛ հաւ , ոչխար , կով , տուն ու պարտէզ ,
«դրամի վերածէ՛ այս փոքր ինչուկն ալ
«եւ՝ ամէնուն տեղ՝ կրնաս ունենալ ,
«ըստակին ուժով , ամուսին մը նոր
«որ շան պէս տաշի , տքնի ամէն օր ,
«գիւղ , քաղաք , շուկայ , վազէ , երթայ , գ[illegible]
«ապրուստ , առ ու ծախ հոգայ անիկայ ,
«եւ դուն տանըդ մէջ , հանգիստ , ապահով ,
«ըզբաղիս միայն . . . հիւրասիրանով .
«հաճոյ օրերով անցունես ատեն ,
«հոգերդ ու ցաւեր չորնան արմատէն :
«Համբերող , տոկո՛ւն բեռնաբարձ ընտիր,
—«ծախէ՛ ամէն բան—երի՛կ մը գտիր :»

—1905—

# ԱՌԱՋԻՆ ԱՊՏԱԿԸ

## ՎԻՃԱԿԻ ՎԻՊԱԿ

* * *

Սուրբ Համբարձման տօնին առթիւ օրագրի մը ջինջ ակը
այժմ որ կու գայ խնդրել ինէ յօղուածի մը փինջակը ,
ո՛վ դու Մուսայ, որ կը տեսնես գրչիս ողորմ վիճակը ,
մինչ մէջքիս շուրջ բոլորած եմ յանգարանի ղենջակը ,
ներշնչումի նաւին՝ բաղխէ՛, բաղխէ՛ ուժգին թեւնակը ,
շրջէ՛, յուզէ՛ յորձանքներով մտքիս մեռեալ լճակը
ու բրբռացո՛ւր հոգւոյս թելին ելեկտրական կոճակը ,
որպէս զի մի՛ ոմն աչքառու բարեծաղիկ գրչակը ,
կամ ինքնակոչ քննադատին ստորինն ու միջակը ,
զիս ծաղկելով չի տարածեն իրենց անուան հնչակը ,
կամ խրժալուր խօսուածքով խոցեն իրենց խռչակը
նարուածելով՝ մազիս գոյնէն՝ մինչեւ ոտքս . . . մուճակը ։
Համակմարդի ծակայ ճաղով ես չեմ կրնար . շիտակը ,
խառնել , խուզել ինծ նոր գրեանց վրան , մէջն ու յատակը.
եւ , Վիճակի աւանդական հին ծոցումին զիտակը ,
եր[illegible]ն գալ արտադրելով գրուածքի մը . . . սիտակը ։
Ո[illegible] այժմ որ նամբայ առած , լայնցած կեանքիս գետակը
[illegible]այ կը գլորէ իր յորդ ալեաց կատակը ,
որոնց այլ չեն ժպտիր , աւա՛ղ , սատափին ու թանգ տուտակը ,
կը յիշեմ ես , ուղղած արտիս յեսնահայեաց դիտակը ,
պատանեկան իմ օրերուն էն անուշն , է՛ն յստակը
ու՝ Համբարձման , Վիճակի օր , թաւուտ ծառի մը տակը ,
աղջկան մը ձեռքն այտիս ձօնեց իր առաջին . . . ապտակը ։

* * *

Գիւղին եզին կը տարածուէր այն ծառայից բլրակը
որուն , այն օրն , չորս ընտանիք զբաղած մէկ պուրակը ,
այր , կին , մանուկ , երիտասարդ , խառն , հաստին քով բարակը,
զացած էինք ուրախ զուարթ տօնել օրուան Վիճակը ։

Դոյլ մը ջուրի շուրջ բոլորած հաւերուն հով՝ տատրա՛կը ,
հո՛ն էր Լուսիկ որ ամէն օր ձեռքն առած գիրք, տետրակը,
երբոր դպրոց կ'երթար կու գար՝ իր աչքերուն կըրակը
Ուղենելով կը բորբոքէր ուրախ սիրոյն երակը . . . .
Բերանն՝ աղուոր , հնչուն մնջուն զերթ աղբիւրի ծորակը.
դէմքն՝ աննըման վարդ ու շուշան , ճակտէն մինչեւ ծոծրակը ,
լանջքն՝ հազուաբոյս երանութեանց գաղտնաթագոյց դարակը ,
հո՛ն , մօ՛տս էին , ի՞նչպէս պատմեմ յուզմանս չափն ու որակը ,
կը հարուածէր , կը ցնցէր զիս ցանկութեան սուր մտրակը . . .
արիւնիս՞ մէջ կ'այրէր երկրիս բոլոր բոցն ու բորակը . . . .
Արձանի պէս լուռ —ինչպէս է սիրահարին համբակը
որ վախն ունի միշտ ըսելու խօսքերուն էն տափակը—
մինչ գլխիկոր կը խառնէի բանկոնակիս լամբակը ,
հաւաքեցին առարկաներ , մատնոց , մատիտն , օղակը ,
եւ , ամէնքն ալ լեցունելով դոյլին ջրալից ծուղակը .
ձայն մը գոչեց . —«Պիտի սկսինք , հանդա՛րտ կենան տղաքը . »

* * *

. . . . Երբոր, ոսկի զարդասեղէն մինչ բալլիքի տրցակը,
բոլոր գրաւներն հատիկ հատիկ հանուեցան դուրս, արձակը ,
ամէն մէկին՝ արտասանուած անիմաստ խօսքն—հարցակը—
յարմար գտան Ազնիւ հանըմն , Արթին աղան , դերձակը .
Մին հետեւցուց՝ պիտի լենար տանոյն մէջ իր քըսակը ,
ուրիշ մ'ալ թէ՝ իր արտերուն առատ զարին , վարսակը ,
պիտի կրնար սուղ սուղ ծախել՝ ի՛նչ վաս ըլլար տեսակը
կամ ի կատար ելած տեսնել իր կուզ աղջկան պսակը .
Եւ ամէնքն ալ գոհ , երջանիկ , տանուտէրն ու մըշակը ,
—որոնց համար ելած վիճակն եղած էր լաւ գուշակը , —
ծաղուրտուեցան , մին մոյկն հագաւ , միւսն ալ կոնկեց չիփա՛ը
եւ, փոքր ու մեծ, ճամբայ ելան , տարտղնեցաւ խմբակը .

* * *

. . . . Անտառին մէջ ապուշ ապուշ կը գեղգեղէր սոխակը ,
ու խնկաւէտ կը պչրէին լելակներն ու մեխակը . . . .
Ծանր , յամրաքայլ , խումբէն անջատ , ճօճելով նուրբ հասակը ,
ուսերն ի վար թափած առատ մետաքսաթել գիսակը ,
Լուսիկ կ'երթար իմ առջեւէս , բոլորովին մինակը . . .

թէպէտեւ ինձ դարձուցած իր հրեշտակային . . . կռնակը ,
ա՛հ , կը սարսէր , կը դողդղար հոգւոյս խարխուլ տընակը . . .
. . . չի դիմացա՛յ . երթամ , ըսի , բանամ լեզուիս դռնակը ,
դուրս թափեմ , ցոյց տամ իմ սիրոյս ու պաշտումիս քանակը . . .
աղաւնի՛ մ'է , սիրտը բարի , պիտի գթայ , աղջնակը ,
երբ երկարեմ տարփախնդիր մուրացկանիս . . . պընակը . . . .
Եւ՝ մէկ ոստմամբ , քովն երթալով—«Օրիո՛րդ , ըսի , լուսնակը
«վրկա՛յ է որ դուք էք կեանքիս աւետաբեր խօսնակը ,
«ա՛հ , այո՛, դո՛ւք , դարդմանա՛կը . բարունակը , թռչնակը ,
«առտանա՛կը , տապանա՛կը , ըմպանա՛կը , բունա՛կը ,
«սրտիս ա՛կը , հոգւոյս փա՛կը , գլխուս թագը , լոյս բակը ,
«ա՛հ , թո՛յլ տուէք որ՝ կամ կուրծքիս մխեմ սա սուր դանակը ,
«կամ տամ բակի՛ց ձեր այտերուն համբոյրներուս կրկնակը . . . :»
Ու խելայե՛ղ՝ բացի թեւերս . . . Ան վեր առաւ դասակը,
քթիս , բերնիս վրայ իջեցուց է՛ն սառաչուն ապտակը
եւ —«Օգնութի՛ւն , հասէ՛ք , պոռաց , խենթեցե՛ր է Արտակը . . . »
Անօթանար , իբրեւ գլխուս զարկած ըլլար կայծակը ,
փախայ , գացի , ամիսներով մրսայ . . . չգիտեմ ո՛ր ծակը . . . ;

* * *

Ծատոնց Լուսիկ . Երբեմնի այն զիս ապտակող պիծակը ,
Նեռու զաւառ մ'նարս է գացած , գլխուն ձրգած լաչակը ,
այսօր՝ նինզ նոտ լաներու մայր՝ հոն կը տօնէ Վինակը .

---

Երկու բաներ , երկրիս վրայ , կը վերջանան խիստ արագ ,
խաղամոլին ոսկին ու լատինին թիւ պատարագ ;

[redacted]



# ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

### Կանոն Առաջին

Երբ , ամուսնութեան պարկեշտ օրէնքով ,
կոյս մ'երթայ . . . ապրիլ այր մարդու մը քով ,
լաւ մը խելամուտ ըլլալ հարկ է որ ,
—հակառակ տիրող բարուց մեղաւոր —
զինքն առնող մարդը , դատելով յարմար ,
զինքն առած է կին՝ լո՛կ իրեն համար ։

### Կանոն Երկրորդ

Կինն՝ հագուիլ , օծուիլ կը պարտի միա՛յն
ճաշակին , կամքին , քսակին համաձայն
ամուսնոյն որ իր տէրն է լիազօր .
իր գեղեցկութեան հոգն՝ անկ է անո՛ր ,
փոյթ չէ՛ բնաւ թէ կինն՝ այլոց աչքերուն
չերեւայ հաճոյ , գեղեցիկ , սիրուն ։

### Կանոն Երրորդ

Պչրոտ ակնարկներ անպէտ են յաւէտ ,
ինչպէս շպարներ , իւղեր հոտաւէտ
եւ բիւր դեղերն որ դէմքին կու տան գոյն,
անոնք են պատւոյն միշտ մահաբե՛ր թոյն .
գեղեցկանալու խնամքներն՝ արդէն
հազուադէ՛պ է որ ամուսինք առթեն ։

[redacted]



Կանոն Չորրորդ

Փողոցն՝ հարկ է որ, համեստ քօղին տակ
մարէ լինին աչքին նայուածքներն յուսակ .
կինն՝ էրկանն հաճոյ կ'ըլլայ՝ պայմանա՛ւ
որ մարդիկ իրեն չի հաւնին բընաւ ։

Կանոն Հինգերորդ

Այն անձերէն զատ տարեց, խոհական
որոնք ամուսնոյն այցելու կու գան,
պատշաճ է որ կինն հիւր բնա՛ւ չընդունի,
քանզի ծեքծեքող, քծնող, լեզուանի
մարդիկն որ տիկնոջ խունկ վառեն առջին՝
տանտէր պարոնին ջիղերուն դպչին ։

Կանոն Վեցերորդ

Մարդոց նուիրած ճոխ ընծաներէն
պէտք է զգուշանալ միշտ խոհեմօրէն,
քանզի մեր ապրած դարուն մէջ վատթար՝
ոչինչի համար՝ ոչինչ բան չե՛ն տար . . . :

Կանոն Եօթներորդ

Ո՛րքան ալ նեղուի՝ կընոջ չէ յարմար
գործածել թուղթ, գրիչ, մելան, կաղամար .
վայելուչն ա՛յն է որ բոլորովին
տան գիրերն՝ էրկան գրչով լոկ գըրուին ։

### Կանոն Ութերորդ

Այն ընտանեկան խմբումներն ամէն,
զոր խառն եւ անշահ տարրեր կը կազմեն,
կանանց միտքն, հոգին կ'եղծեն անդադար.
անոնցմէ խոյս տալն հա՛րկ է եւ արդար,
քանզի անոնց մէջ է որ՝ անձնուէր
խե՛ղճ այրերուն դէմ կը նիւթուին դաւեր։

### Կանոն Իններորդ

Պատուաւոր մընալ ուզող ամէ՛ն կին
խաղալէ պէտք է որ խորշի ուժգին
իբրեւ բանէ մը խիստ վըտանգաւոր.
քանզի խաղն ախտ մ'է պատրող ու մոլոր
որ կը մըղէ կինն օր մ'ալ, անխափան,
վըրայ տալու ի՛նչ որ կայ տալիք բան . . . ։

### Կանոն Տասներորդ

Օրուան խօլ ու խեռ պտոյտներէն ամէն,
դաշտային սեղան եւ կեր ու խումէն
պէտք է որ իսպառ կինն հըրաժարի,
քանզի փորձերով ստուգուած է կարի
թէ՝ կնոջն ի՛նչ որ տան — ճաշ, պատիւ, ընծայ —
փոխարժէքն՝ էրի՛կն է որ կը ցնծայ . . . ։

ՄՕԼԻԷՌ

# ԱՄՈՒՐԻՆ

Մարդը ամուրի
այրի մ'է յերկրի ,
անտէր , անտուն , տան նըման
որ հոս ու հոն կու գայ ման ,
անփութութեամբ մ'անսահման
միշտ կը դեգերի ։

Բայց միշտ ալ՝ զոհ եւ ուրախ ,
յանձնապաստան ու խիզախ ,
կ'ապրի անհոգ ու անկախ ,
—մա՛րդը ամուրի ։

*
* *

Մարդը ամուրի
անկողին մ'ունի ,
—աւա՜ղ , մէկ նե՛ղ անկողին—
որուն կէսն ալ , ի հարկին ,
բարեկամին , սէր . . . ողին
փոխ տալ յօժարի ։

Սիրտն աննենգ , քիչ հոգեբան ,
աննըպատակ , անխափան
շիտակ կ'երթայ իր ճամբան ,
—մա՛րդը ամուրի ։

*
* *

Մարդը ամուրի,
նըման զինուորի
որ մեռնելէ չի խիթար ,
կեանքի պայքարն անարդար
կը մըղէ ժիր , անդադար
որքա՛ն որ ապրի ։

Եւ օր մ'ալ , լուռ , շիփշիտակ ,
անանուն , անյիշատակ ,
կ'երթայ հանգչիլ հողին տակ,
—մա՛րդը ամուրի ։

[Նման. Ֆրանս]

# ԹԻԹԵՌՆԻԿԸ

* * *

Թիթեռնիկն , ամէն օր , ասդին անդին ,
շուշանին , վարդին
վրայ , թեթեւ ,
փափկաթեւ
տարփանքով պա՛հ մը միայն կը թառի
եւ կը հեռանայ . . . առա՛նց պատճառի ։
Ծաղիկները կը ցաւին ,
սակայն բընաւի՛ն ,
—դժգո՛հ թեւ անոր անշահ վարմունքէն—
անոր դէմ չեն պահեր քէն .
որովհետեւ
թիթեռնիկն , իրաւ , սիրով կարճատեւ
խաբեբայ , վա՛տ է , բայց . . . լեզու չունի .
ըրածն իր քովը կը մընայ գաղտնի . . . ։

* * *

Տըղա՛ք,
որ թիթեռնիկի խաղը կը խաղաք
յաճախ կանանց հետ ,
պահ մը կը . . . քծնիք , եւ կ'ըլլաք անհետ ,
գիտցէ՛ք որ , անխափան
ամէն բան
հեշտօրէն
անոնք ձեզ կը ներեն
երբ որ—համր ու խուլ գաղտնեաց պահարան—
դուք չըլլաք . . . թուլբերա՛ն ։

[Նման . Ֆրանս.]

# ՅԱՆԳԱՊԱՏՈՒՄ

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

—«Փափուկ խնդրոյ մը վրայ, այս անգամ,
«լրջօրէն խորհուրդ հարցունել կու գամ.
«պիտի կարգըւիմ, եղբա՛յր, ի՞նչ կ՚ըսես ։»
—«Շատ աղէկ կ՚ըլլայ, կարգըւէ՛, Ներսէս ։»

—«Սակայն մի՛ գուցէ գործ մ՚ընեմ յիմար,
«յախուռն ընտրութիւն մ՚անդարձ, անյարմար.
«Եւ վերջն ալ, ցըմա՛հ, զղջամ դառնապէս ։»
—«Էն, կարգըւելէ ե՛ս կեցիր, Ներսէս ։»

—«Բայց եթէ գիտնաս թէ ո՛րքան խանդով
«կը սիրեմ Աննան, աղուոր, հոգեբով,
«Մարկոսին աղջիկն, հեզ, թարմ, վարդերես . . . :»
—«Ի՞նչ կը վարանիս, կարգըւէ՛, Ներսէս ։»

—«Վարանումս, է՛ն, չէ՛ շատ անբընական,
«անուն ու պատիւ վստահիլ կնկա՛ն . . .
«խաբուած էրիկներ տեսնեմ դէն ու դէս . . .
—«Իրա՛ւ, կարգըւիլ մի՛ փութար, Ներսէս ։»

—«Բայց սէրն, որդի պէս, սրտիս մէջ թաքուն
«զիս կը կրծէ միշտ. գիշերներն անքուն
«կ՚երազեմ, ցերեկն ալ տխուր եմ ես . . . ։»
—«Հասկըցա՛յ, պէտք է կարգըւիս, Ներսէս ։»

—«Դիւրագրգիռ եմ, կրքոտ, անհամբեր . . .
«թէ որ օր մը կինս ինձ առակ չափէր՝
«զաւազան մ'առած հաստըկէկ ու մեծ
«կարող եմ քաշել փառաւոր մի ծեծ . . . :»
—«Գէ՛շ բան․ կարգըւիլ չես կրնար, Ներսէս :»

—«Բայց տարփոտ հեշտանք մը կ'զգամ ներսէս
«երբ կը մըտածեմ թէ, ինչպէս շատեր,
«ես ալ զաւակաց կրնամ ըլլալ տէր,
«որոնք համբոյրներ առնեն այտերէս . . . :»
—«Հարկա՛ւ, լաւ է որ կարգըւիս, Ներսէս :»

—«Ա՛հ, բայց երբ կինս, անխոնջ անվըհատ,
«ետեւէ ետեւ շարէ ութ տասն հատ . . .
«դառնայ տունս անկարգ մի մանկապարտէզ . . . :»
—«Կարգըւիլն՝ եկուր զա՛նց ըրէ, Ներսէս :»

—«Թո՛ղ որ, կը սահին օրեր վաղանցուկ,
«տըղաքս, երբ մեծնան, կ'ըլլան ինձ նեցուկ,
«կը թեթեւցունեն զիս իմ հոգերէս . . . :»
—«Տարակոյս չի կա՛յ, կարգըւէ՛, Ներսէս :»

—«Սակայն մահն ալ կայ, չար ու վաս, անի
«երբ երբէք գայ կինս առնու, տանի . . .
«ո՛հ, չեմ դիմանար, կը մեռնիմ եւ ես . . . :»
—«Վերջին խօսք, դու մի՛ կարգըւիր, Ներսէս :»

—«Գողտր հաճոյքներ, քաղցր յոյսեր գեղադէմ,
«ցաւեր, հոգեր ալ կանգնած դէմ առ դէմ,
«որք մեզ վախցունեն կամ անուշ ժպտին,
«ա՛յնքան տառապիլ կուտան մեր սրտին,
«եւ ամուրի կեանքն է ա՛յնքան անհամ
«որ, ի՛նչ ալ ըլլայ, ես կ'ամուսնանամ :»
—1901—

# ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԱԳՌԱՒԸ

## Ա Ռ Ա Կ

Պարոնն Ագռաւ, թառած ծառի մը վերեւ,
կըտուցին մէջ բռնէր պանիր մէկ կըտոր.
պարոնն Աղուէս առաւ անոր հոտն աղւոր
եւ խօսք ուղղեց գրեթէ սապէս. —«Ո՜, բարե՛ւ,
«բարեւ ձեզ, պարոն Ագռաւ,

«ի՛նչ սիրուն էք, ինչ գեղեցի՛կ ալ, իրաւ,
«ճիշդն ըսելու համար, երբ ձեր գեղգեղ
«ձեր փետուրին չափ, անոր պէս է շքեղ,
«այս անտառին թռչնոց փա՛ռքն էք մէկ հատիկ.
«քիչ մ'երգեցէ՛ք որ ընեմ ձեզ մըտիկ:»

Ագռաւն յուշիկ—իր խնդումքը զսպելով—
թաթիկին տակ դըրաւ պանիրն, ապահով
ոստին վըրայ տեղաւորեց զայն, ապա,
արձակելով հեգնոտ, հնչուն մէկ քահքահ,
վարն, Աղուէսին, որուն լեզուն կը ջրոտէր,
ըսաւ. —«Պարո՛ն, ազնի՛ւ տէր,
«շատ լաւ գիտեմ որ շողոքորթ ամէն
«խարդախ, շահամոլ, կեղծ բարեկամ են.
«եւ միշտ կը ջանան որ բան մը շորթեն
«իրենց խնկարկած ընչեղ շոշորդէն:
«Այս դասն առի
«անցեալ տարի
«—չէ՞ք յիշեր—
«վըրայ տայով
«թարմ ու համով
«պանիրի շերտ մը «*խաշէ՛ր*»:





Խաբողէն կրկին խաբուելու համար,
ո՛չ դիւրահաւան եմ ո՛չ ալ տխմար.
Ձեր քոնբլիմանին վրայ, ախորժով
Ես պանիրս ուտեմ. դուք . . . կլլեցէք հո՛վ։

Սրբագր. Օրէլիէն Տօլ

Լաֆօնթէն

---

# ԼԵՌՆ ՈՐ ՄՈՒԿ ՄԸ ԿԸ ԾՆԻ

Որդեծնութեան երկունքներուն
ենթակայ լեռ մ՚յաղթ ու տամուկ,
կը հանէր ա՜յնքան դղորդ, աղմուկ
որ իրաւ կարծել կուտար ամէնուն
թէ պիտի ծընէր քաղաք մ՚ահագին.
եւ ահա՛ ծընաւ խիստ չնչին մի մուկ . . . ։

Այս առակին՝ նիւթը սըխալ,
իսկ խիստ ուղիղ է իմաստն ալ։
Ձայն գրողին՝ կրցայ ես միտքն հասկընալ.
կ՚ակնարկէ՝ ճոխ, զարդարուն
օրչազգեստներուն
գեղեցիկ սեռին,
որք, հրապուրիչ, կը ծաւալին, կ՚ուռին . . . ։
—Անոնց տակն ի՞նչ կայ ըստոյգ, ապահով . . . ։
—Հո՛վ։

Լաֆօնթէն

Սրբագր. Օրէլիէն Տօլ

## ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

—«Սիրտըս կը կրծէ կասկած մը ծածուկ . . .
«դու համբաւուած ես իբր անսուտ հարցուկ ,
«կ՚աղաչեմ քեզի , սրտատե՛ս Գասպա՛ր ,
«գիտցածդ ըսէ՛ ինծ բացայայտաբար ։
«Ամուսնանալէս , տարիէ մ՚ի վեր ,
«կինս ուրիշ մարդու հետ չէ՞ . . . տեսնըւեր ,
«չէ՞ ըրեր պատիւս հողի հաւասար ,
«հէ՞ . . . ։»
—«Նայի՛նք , անունդ ի՞նչ է ։»
—«Պաղտասար ։»
—«Գէ՛տ անուն , կրողին միտ կու տայ տուժել ։
«Իսկ կընոջդ անունն ի՞նչ է որ . . . ։»
—«Անժե՛լ ,
«Աղջիկն Երմոնին . . .»
—«Երբեմն անուանի՞ . . .
«Աղջիկն ալ մօրմէն եթէ բան մ՚ունի . . . ։»
—«Ո՛չ ։»
—«Տարիքդ ի՞նչ է ։»
—«Վաթսուն հազիւ կամ ։»
—«Հազի՞ւ , վաթսունն է շա՛տ իսկ , բարեկա՛մ .
«Անժելին հապա՞ ։»
—«Քսան մըտած նոր ։»
—«Կրնայիր մեծ հա՛յրն ըլլալ դուն անոր . . .
«գեղեցի՞կ է շատ . . . ։»
—«Արշալոյսի՛ պէս ։»
—«Վա՜յ . . . բարեձե՞ւ ալ ։»
—«Արձա՛ն մ՚է կարծես ։»

—«Օ՛յ, օ՛յ, բըխադե՞մ քէ խարտիշագեղ։»
—«Թուխ։»
—«Մութ . . . իսկ հասա՞կն։»
—«Առոյգ ու ՚ըրքեղ։»
—«Վա՛յ չար սատանայ . . . Աչքե՞րն։»
—«Ցա՛ր փառփռուն,
«չըքնաղագոյններն՚ երկրի աչքերուն։»
—«Սե՞ւ աչքեր։»
—«Հապա՛։»
—«Մի՛ պարծիր այդպէս.
—«Ա՛լ գէշ . . . ։»
—«Ինչ *կայ*, *վաս* բան մ՚եղա՞ծ եմ ես…
—«Մի՛լ խեղճ Պաղտասար, գլխուղ, անխափան,
«քէ չէ եկած դեռ, պիտի գա՛յ այդ բան . . . ։»

---

## ՍԷՐԸ

Սէրը ճիօղ ու ճիօղ յուսնին է նըման.
պէ կը նըւաղի երբ հասնի . . . լըման։

[Նման. Ֆրանս.]

# ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Իտէալ կեսուր մը ըլլալ ուզող
կիներուն ուղղուած ։

1. Մէկ տուն բընակիլ չըլլար . — հարկ է որ
դուն քեզի համար զատ յարկ մը վարձես ։

2. Կիրակիներէն զատ ո՛ եւ իցէ օր
ճաշի հրաւէր պէտք է միշտ մերժես ։

3. Մինչեւ որ խնդրանք չըլլայ մասնաւոր,
ո՛ եւ է խրատ բնաւ չի պիտի ուղղես ։

4. Դրացիներու կամ ասոր անոր
քով՝ դիտողութիւն չի պիտի ընես ։

5. Ծագած խնդիրներ, վէճերը բոլոր
առանց շեշտելու պիտի կարգադրես ։

6. Ամէն անգամ որ ծնունդ պատահի նոր,
անձնուէր՝ պիտի յօգնիս ու հսկես ։

7. Թոռներդ, սիրուելու փափաքով մոլոր,
պիտի չափազանց չի շփացունես ։

8. Կաղանդին, ինչպէս ամէն տօնի օր,
ընծայ ու նուէր շա՛տ պիտի բաշխես ։

9. Պաղ կատակներու, խօսքերու ալ չոր,
առանց բարկութեան պիտի հանդուրժես ։

10. Ա՛յս կերպով միայն կրնաս դուն՝ անդորր
իտէալ կեսուրն ըլլալ ի՛սկապէս ։

[Նման. Ֆրանս.]

## ՏԻՊԱՐ ԸՆՏԱՆԻՔ

### ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայրը․— Հսկայ իբրեւ կաղնի ծառ,
յաղթանդամ ու պայծառ
մա՛նչս, իմ պարծանք ու պատիւ,
կ'ուզեմ, ուրախ, գոհ սրտիւ,
քեզ կողակից ու մեզ հարս
աղջիկ մ'առնենք գեղավարս։

Տղան․— Հսկայ իբրեւ կաղնի ծառ
կ'երեւիմ յաղթ ու պայծառ,
հա՛յր, բայց, աւա՛ղ, յիմ արմատ
որդեր բանան . . . խըրամատ
երբ աշնան հոյլք ինձ մօտին
պիտի գլորիմ ի գետին։

Հայրը․— Ցանքերուդ բաւ կամարին
ի տե՛ս կանայք կը մարին,
մինչ բեռնակիրք ա՛խ քաշեն
ի տես բազկացդ ամրաշէն . . .
տարիքն ունիս ժիր մարդու,
պէտք է փեսայ ըլլաս դու։

Տղան․— Ցանքերուս բաւ կամարին
տակ, աչքերս, հա՛յր, կը մարին.
զի ախտ մը գարշ ու կոպիտ
խամրէ այտիս վարդ ծըպիտ,
սիրտս ա՛լ մահուան լոկ յուսայ,
կրնա՞մ ըլլալ ես փեսայ։

Հայրը .— Է՜հ, քո՛ղ վախերդ այդ սարսափ,
մաքուր ես դու զերդ կարապ,
մեր քաղքին մէջ՝ մէ՛կ հատիկ,
տարիքով ալ դեռ պզտիկ.
պէտք է կապես դու պսակ,
աղջիկ մ'առնես նրբհասակ ։

Տղան .— Գանձս ու քսա՛կս են պարապ,
ես՝ անքիծ զերդ . . . սեւ կարապ,
կուլ տամ ցերեկ ու գիշեր
դեղահատներ, լի շիշեր,
խարխուլ կեանքիս յուսատու . . .
թէ կարգուիմ՝ կուլա՛ս դու ։

Հայրը .— Տղաս, առողջ ու կայտառ
փեսացու մ'ես, լա՛ւ պատառ.
երբ որ իրենց առաջէն
կ'անցնիս, կոյսերն հառաչեն . . .
գիտէ՞ս արդեօք ինչեր կան
ցանկացող քեզ պէս էրկան ։

Տղան .— Վիճակս՝ անել, մութ անտառ,
շապիկս է պատա՛ռ պատառ,
գրպանն ալ ծակ, անկուտի . . .
կարգուի՛լ — քունչս ալ հոտի—
չորս հարիւրնոց զբրագիր՝
չեմ կրնար, չեմ փափաքիր ։

Հայրը .— Խօսքեր կ'ընես յիմարի .
երբոր աղջիկն յօժարի
նախ՝ քեզ յանձնել մա՛նաւանդ
հազար ոսկի իբր . . . աւանդ,
եւ ունենայ հաստատուն
կայուած, խանութ, երկու տուն . . . ։

Տղան .— Հօր երազներ զո՛ւր ու սին.
դըրամ, կալուած, ամուսին՝
պատիր յոյսեր են երբոր
չի կշտանար մեր հեգ փոր ։
Այդպէս հարուստ աղջըկան
մեզ առաջարկ ընողք կա՞ն ։

Հայրը .—Հապա՛, տըղաս, կա՛ն . . . ։
Տղան . —Իրա՞ւ ։

Հայրը .—Միջնորդ կին մ'ինձ լուր բերաւ
թէ՝ աղջիկ մը կայ հարուստ,
ունի դըրամ, տուն, ապրուստ,
տարիքով՝ երսունի մօտ,
ուսմունք առած . . . խոհամոտ,
դէմքը ճերմակ, քիչ մը պաղ,
հասակը կարճ, ոտքը՝ կաղ,
քիչ մ'ալ դժգոհ իր կուզէն . . .
զինքը մեզ հարս տալ կ'ուզեն ։

Տղան . — Խօսքերդ, հա՛յր, զիս կ'ախորժեն.
իմ ալ դէմքս է կախ, արդէն
ես ալ խեղճ եմ ու հիւանդ,
սակայն, հարուստ մա՛նաւանդ,
ուսեալ կինն է մէկ գոհար.
ի՞նչ փոյթ, կաղ, կուզ, գէր, նիհար . . . ։

Հայրը .—Այս աղջիկն ա՛ռ դուն, տըղաս,
որ շատ դրամի հետ խաղաս,
ընկեր կեանքիդ օրերուն,
քաղցրաբարոյ եւ սիրուն,
թեթեւ . . . նըման թռչունի,
հայրն՝ անծանօթ, մայր՝ չունի . . . ։

Տղան . — Հայրն անծանօ՞թ, ա՛հ, հա՛յր իմ,
անպատի՞ւ պիտի ապրիմ . . . :

Հայրը . — Վըրէժս չունեին այդ քաջեր . . .
որբ է, մեզ ի՞նչ պէտք ածեր .
Նաեւ, խեղճըդ տուն կանչէ՛,
զերծ ալ կ՚ըլլաս . . . զմանչէ ։

Տղան . — Թէ պատուոյս չի գար արատ՝
խորհուրդներդ են ինձ խըրատ
որոնց, հայր, հեզ եւ հըլու,
միշտ պատրաստ եմ անսալու ։

Հայրը . — Եթէ հրեշտա՛կ իսկ լինի
անարծաթ կինն յարգ չունի,
զի լո՛կ ոսկի, տէր եւ տուն
կ՚ըներ կեանքն հէշտ եւ ժպտուն
ու կը պարզէն՝ անխափան՝
երջանկութեան դիւր ճամբան ։

Տղան . — Լո՛ւր դրկէ, հայր, որ փութով
առնեմ այն կոյսն հոգերով . . .

Հայրը . — Ու համաձայն, սիրապար
զոյգ մը կազմէ՛, զո՛յգ տիպար,
շուտ յօրինել հոգ տանիք
մէ՛կ պատուական ընտանիք
որուն շնորհաց առանձին
բոլո՛ր աշխա՛րհն նախանձին . . . :

[Ֆրանս. Նման.]

— 1887 —

# ԱՆՄԽԻԹԱՐ...

Իրիկուան մը դէմ, ցուրտ, ձըմեռնային,
Յակոբ ու Պօղոս տուն կը դառնային
Գերեզմաննոցէն ։

Յակոբ, յուսահատ,
դառն հեկեկանքով կուլար անընդհատ,
ա՛յնքան տխուր էր եւ անմըխիթար
որ գայլն տեսնողը վըրան կը գըթար...։
Պօղոս, ըշուարած, կ'երթար քովն ի վեր...։
—«Բայց, եղբա՛յր, ասանկ բան չէ՛ տեսնըւեր»
պոռթկաց ալ. ցասկոտ, «Զոքանչըդ մեռաւ...
«կատղած, անռելի չատուկ մ'էր պառաւ
«որուն հետ, տարին տասներկու ամիս,
«կըռուով կ'ուտէինք իրարու հում միս...։
«Վերջապէս, քեզի Աստուած մեղքցաւ...
«այսօր թաղեցինք զայն...։ Ի՞նչ է քու ցաւ,
«ես չեմ հանդիպած քեզի պէս մարդու...
«խե՞նդ ես, պէտք է ա՛լ երգես, պարե՛ս դու...։»
Յակոբ, լալագին, յարեց. —«Եղբա՛յր, ա՛խ,
«ի՞նչպէս կ'ուզես որ ըլլամ ես ուրախ...
«մեր երէցն ըսաւ. — «Որդեա՛կ, անդ յերկին
«զիրար պիտ' անշուշտ գտնէք դուք կրկին...։»

[Նման. Ֆրանս.]

## Անդարձ Կորուստը

—«Ինչո՞ւ այդպէս տրտում տխուր
«կը հառաչես դուն անդադար,
«Մելքո՛ն աղբար, ցա՞ւ մ'ունիս սուր
«որ կրծէ սիրտդ անմխիթար.
«ըսէ՛, ի՞նչ կայ։»

—«Ա՛հ, բարեկա՛մ,
«կործանեց զիս բաղդն անիրաւ.
«անցեալ ամիս մահն անըզգամ՝
«կընիկս ու կովս առաւ, տարաւ....»
—«Ահ, մե՛ղք, վիճակդ է դըժընդակ...
«Քեզ սիրողներ կան բազմաթիւ,
«Ք..ւլ չէ՞ն ըլլար ընաւ օժանդակ,
«չէ՞ն փոխեր քեզ այս առթիւ։»
—«Մտերիմներու ըսփոփանքին
«ամէն օր եմ ես ենթակայ.
«տաւար կուզեն ինծ տալ... նոր կին.
«իսկ կով տըւող՝ մէ՛կը չի կայ....։»

—1904—

### ԱՌԱԾ

Կոյր կին մ'ու խուլ մարդ մ'երբ զան միասին,
կ'ըլլան իրարու ընտիր ամուսին։

[Նման. Յրպնդ.]

# Կնոջ Մասը

Առաւ Աստուած իր կակղագոյն
կաւն, ու թրմեց, մաքրեց զանի,
եւ Նուրբ զոհար մ'ստեղծեց իսկոյն,
խորհրդաւոր ու գեղանի ։

Շինեց կընոջ մասն այն սիրուն,
գլուխ-գործոցն այն վեհ ու անգին
որ պաշտօնն է՝ մեր սիրտերուն
դպչիլ եւ մեզ ցոյց տալ զերկին ։

Այդ մասին մէջ դըրաւ բոլոր
աւելորդն այն ճառագայթման
որով պճնած էր յուսաւոր
ճակատն արփւոյն վարդանըման ։

Դըրաւ հոն ծուք մ'իբր ի մի քող,
դող մ'ալ դըրաւ իբր օրրանի․
տըւաւ անոր աստղէն մէկ շող
եւ բա՛ն մ'ալ որ թռչնոյ նմանի ։

Եւ Հայրն, որմէ ծընան մարդիկ,
խառնելով ալ եթեր ի նայ,
Նուրբ՝ շինեց որ ըլլայ քաղցրիկ,
խիստ ճերմակ՝ որ մաքուր մընայ ։

Եւ մանաւանդ գողտր՝ որ յաւէտ
անկէ բընաւ չ'ելլեն չարիք .
եւ մեզ թըւի ամէնադէտ
երկնաւորին մատն՝ այլ փոքրիկ :

Անով պճնեց ծեռքն Եւային ,
այն նուրբ ձեռքն որ կը գուրգուրայ
երազի պէս՝ մեր մարդկային
սեռի նըսեմ ճակտին վըրայ .

Այն ծեռքն համէստ այլ անգիտակ
վարիչ մարդուն մոլորընթաց ,
որ կը դողդղայ , նուր եւ յստակ
ճակատագրի լուսին դիմաց :

* * *

—Այն կատարն ուր հասած ես, Կի՛ն ,
գետնահայեաց հրեշտա՛կդ արի ,
գեղեցկութիւնն է փոքրագին
եւ լոկ շնորհք չե՛ն բաւ յաշխարհի .

Պէտք է սիրե՛լ , զի ամէն ինչ
հառաչէ , ջուրն , աղկիոնն ու վարդ .
ըշնորհքն ինքնին ծըպիտ մ'է ջինջ ,
գեղեցկութիւնն ալ՝ շո՛ղ զըւարթ :

Զի մեր ճամբուն վըրայ Աստուած
ըստեղծած է Սէրն ու կիներ ,
եւ զըգուա՛նքն է սիրոյն տըւած ,
իսկ զըգուելու համար՝ մատներ :

Այն ցուրտ կաւէն՝ մատն անաղարտ
Երբ եղաւ մատն այն մոգական,
Խնդա՛ց Աստուած, զի վէհն հըպարտ
Կ'ըլլայ երբ գործն է պատուական ։

Ցոյց տըւաւ Տէրն հրեշտակներուն
մատն, ըսելով «Ահա՛ւասիկ» .
յետոյ գընաց հանգչիլ ի քուն . . .
—Սաղանն արթուն էր, անխօսիկ ,

Շըքեղ արփւոյն վըրայ՝ մըթին
բանալով լայն արտեւանունք ,
ժպտեցաւ , եւ այն նուրբ մատին
ծայրն հաստատեց մի սուր եղունգ . . . ։

—1889— Վ. ՀԻՒԿՕ

## ՃՐԱԳՆ ՈՒ ԼԱՊՏԵՐԸ

Օր մը ճըրագը Լապտերին կ'ըսէր .
«Քու խորքէղ սղտոր կ'ելլեն իմ լոյսեր .
«ծոցդ ինչո՞ւ բռնի զիս բանտարկեր ես .
«բացուէ՛ , որ աշխարհ փայլի շողերէս ։»
—Բացուեցաւ Լապտերն հընազանդ իրաւ .
հով մ'եկաւ . . . ճըրագն իսկոյն մարեցաւ ։

[Լըպայի]

128

# ՔԵՐԹՈՂԻ ՍԷՐ

(ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷ, Նմանողաբար)

Երբ կատարուին մեր հարսանիքն ու պսակ ,
կինս ըլլալուդ պէս , սիրելիս , գիտցիր
որ , վայելքներու մէջ ամէն տեսակ ,
պիտի հրճուիս ու խայտաս անձանձիր ։

Մեր կեանքն՝ ընտանի բոյն մը մեղմօրոր ,
մինչ հոն՝ սիրատարփ փարած իրարու ,
օրերդ՝ երջանիկ , վարդագոյն բոլոր ,
պիտի շա՛րք մ'ըլլան հեշտութիւններու ։

Եւ , առաւօտէն մինչեւ իրիկուն ,
գերի մը պէս կամքերուդ հըլու ,
քմահաճոյքներուդ ես ամէն մէկուն
պատրաստ պիտ' ըլլամ անձայն տոկալու ։

Թէ անարգես զիս , ձաղրես , կշտամբես ,
մարմինս , հոգի՛ս ալ տանջես չարաչար ,
չի՛ պիտի ըմբոստիմ , պաշտօնս ճամբես ,
պիտ' համակերպի՛մ հեզ , անտրտունջ յար . . . ։

—Իսկ երբ խոր[illegible]աս , նուրբ կամ պերճաբան
քերթուածներէս մէ՛կն որ մը չի գովես ,
գիտցի՛ր որ այն օրն , անդարձ , անխափան
պիտի վռնտե՛մ քեզի իմ քովէս . . . ,

## ՀԻՆ ԵՐԳ

Թէ կայ փափուկ մէկ մարմանդ
զոր այգն ողողէ,
մէկ մարմանդ ուր երկնաւանդ
բուրում մը ցօղէ,
եւ ուր քաղել կարենամ
շուշան, յասմիկ, շահոքրամ,
ա՛հ, ես յաւէտ կը բաղձամ
որ ոտքդ հո՛ն կոխէ ։

* * *

Թէ կայ կուրծք մը սիրասուն
որ ճանչնայ պատիւ,
որ անձնըւէր, անընկուն,
վեհ ըլլայ սրտիւ,
բարւոյն համար մարտնչի,
ուր ոչինչ վատ բան թաքչի,
կ'ուզեմ որ ճակատդ հանգչի
հո՛ն, գիշեր եւ տիւ ։

* * *

Թէ կայ սիրոյ մէկ երազ
քաղցր ու վարդագոյն,
զոր օրօրեն գեղանազ
ցոլումներն արփւոյն,
զոր Աստուած օրհնել հաճի,
ուր հոգին լուսով աճի,
ա՛հ, կ'ուզեմ որ հո՛ն հանգչի
սիրտդ իբրեւ ի բոյն ։

—1882—

Վ. Հիւկօ

[redacted]



# ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Մա՛նկունք, դարձուցէ՛ք անգամ մ՚աչքերնիդ
աս մարդուն, ահա՛, որ լուռ, անքըթիթ
երկնից կը նայի եւ կը սքանչանայ .
—Բանաստե՛ղծ մ՚է նա ։

Եթէ իր նայուածքն հանգչին մի վայրիկ
ձեր ճակտին վըրայ անմեղ ու քաղցրիկ ,
քո՛ղ ձեռնէ մ.ն մին իր գլուխը բանայ .
—Բանաստե՛ղծ մ՚է նա ։

Իր հագուստն , աւա՛ղ , չէ նաշակալի .
բանկոնն , արդէն հին , իւղոտ , կը փայլի ,
մա՛նկունք , մի՛ խընդաք դուք անոր վըրայ .
—Բանաստե՛ղծ մ՚է նա ։

Իր խոշտակն անցուք՝ տանեաց է մօտիկ ,
ձմրան ցուրտ քամին հոն սուլէ սաստիկ ,
բայց հոն՝ աւելի՛ երկնից մերձենայ .
—Բանաստե՛ղծ մ՚է նա ։

Ցանախ չի գտնէր սեւ կամ ըսպիտակ
պատառ մը հացին իր ատամանց տակ .
Է՛ն , քերթուածո՛վ մը լոկ կը կշտանայ .
—Բանաստե՛ղծ մ՚է նա ։

Տըքեղ բընութիւն , թռչունք , ծաղկունք , սէր ,
գիշերուան խաւարն եւ այգուն լոյսեր ,
ամէնքն՝ իր երգին մէջ պատկերանայ .
—Բանաստե՛ղծ մ՚է նա ։

Երբ փոթորկայտանչ հերօք, քիթն հովուն,
կ'երթայ, չգիտեր ո՛ւր, քայլով թափառուն,
ամեն ոք կ'ըսէ. «յիմա՛ր մ'ալ ահա . . .»
—Բանաստե՛ղծ մ'է նա ։

Գիտէ, առանց վիշտ ըզգալու քընաւ,
թէ օր մալ իր կեանքն—ո՛վ բաղդ անիրաւ—
հիւանդանո՛ցը պիտի վերջանայ .
—Բանաստե՛ղծ մ'է նա ։

Այլ Մահը, զոր նա կոչէ անձկապէս,
երբ գայ զայն բառնալ, տանիլ աշխարհէս,
պիտ'Երկինք բացուի՛ն առաջի նորա .
—Բանաստե՛ղծ մ'է նա ։

Արընէ-Տանզուռ

## ԸՍԷ ԻՆԾԻ

Ըսէ՛ ինծի, երբ երկնի լոյսերը — վառ գումարտակ —
կը ցոլան գեղ կոյսերու փայլուն աչքեր քողին տակ,
արեւներէն այն շողշող ո՞րն է ծագումն առաջին,
Ո՞րն է մարողը վերջին ։

*
* *

Ըսէ՛ ինծի, երբ ծովուն յաւերժածուփ յորդ ալիք
ուռին, փրփրուն, մրրընչեն, զոռ փոթորկին խաղալիկ,
ո՞րն անոնցմէ կ'արձակէ իր հառաչանքն առաջին,
Ո՞րն իր մրմունջը վերջին ։

*
* *

Ըսէ՛ ինծի, երբ մեր սիրտն, զգայուն, յողդողդ, անհամբեր,
քաղցր յոյզերու, ցաւերու մէջ կ'սպառի տարուբեր,
ո՞րն է իր Սէրն հեշտալից, խանդն, ըղձայրումն առաջին,
Ո՞րն իր պատրանքը վերջին ։

Թարգմ. Գերմ. Ձ. ԿՐՈՒՆ

# ՕՐՕՐՈՑՆԵՐԸ

Երբոր թռչուններն հեռանան անդարձ ,
ա՛լ թափուր մընան բոյներն ու փտտին .
մեր օրօրոցներն արդ ի՞նչ են եղած . . .
անոնց փայտերը կեր կ'ըլլան որդին ։

Ձեղնայա՛րկին է հիմա , նետուած խորն , այնպէս . . .
մոռացումն , յուշիկ , կրծէ իր փայտեր .
զայն պիտի սիրո՛վ համբուրէի ես ,
զի իմ մանկութիւնս հոն կը ժպտի՜ դեռ ։

Անոր մէջ էր որ ինձ , գիշեր եւ տիւ ,
հովանի էին աչքեր մայրենի
որոնց խորն՝ հոգիս Սէ՛րն հեգէր հեշտիւ ,
նորաբաց բիբերս ալ՝ լոյսն արփենի ։

Մտերմաց սրտին վրայ անկեղծ , անպղտոր ,
եւ ձերինի'ն ալ , ջինջ , անբիծ կիներ ,
մենք օրօրոց մը կ'երազենք անդորր .
այս կամ այն ձեւո՛վ մի միայն տարբեր ։

Բընազդն ապրելու սիրամփոփ մի տեղ
տեւէ մինչեւ մեր տիքն արբուն մարդու ։
Ա՜հ , ինչո՞ւ ուրեմն , ա՛յնքան շուտ շատ նեղ ,
օրօրոցներ , զմեզ կը լքանէք , ինչո՞ւ . . . ։

Սիւլլի-Բրիւտոմ

## ԻՆՉՊԷՍ ԱՅՆ ԱՏԵՆ

Երբ փոքրիկ մանուկ էի տակաւին
ու դեռ բերանս այլ խօսիլ սովրած չէր,
Նեղկուկ անկողնիս խորէն, լալագին,
պէտքերս յայտնէին իմ անզօր ճիչեր՛։

Ու բոլոր միտքս այ՝ մա՛յն էր ղըժընդակ
որ խաղալիքին մին չի կորսուէր,
Եւ ցանկութիւնս ու տենչքս այ բովանդակ
կը յայտնէին իմ կարկառուն թեւեր։

Եւ սակայն հիմայ որ, սովորաբար,
կը խօսին շրթունքս անճիգ, աննըւաղ,
ճիչ ու նշանէ շատ՝ ունիմ գաղափար,
կակազումս անյայտ է եղած, աւա՜ղ...։

Եւ հիմայ, որ ա՛լ իմ անկողնոյս քով
օրրող գըգուանքներ չկան որ զիս պաշտեն,
անբացատրելի՛ խանդաղատանքով
կ'երկարեմ թեւերս — ինչպէս այն ատեն...։

Միսլի Որիսպմ

## ՀԱՄԲՈՅՐԸ

* * *

Համբոյրով եղած եմ միշտ երջանիկ ,
կը խոստովանիմ — բայց քիչ, աւա՜ղ — .
Շատ կը սիրէի , դեռ մանուկ փոքրիկ ,
զոյգ շրթանց հպումն այտերուս մատաղ ։

* * *

Կ'ամոքէ համբոյրն հոգեակս անհանգիստ ։
Պատանեկութեան եւ տարիքս արբուն
փնտռեցին զայն միշտ , սո՛ւրբ թէ մեղապարտ ,
շրթունքս համն առին այն համբոյրներուն . . . ։

* * *

Անցած են սիրոյ , հեշտից եղանակ . . . .
Անոնք , անզգալաբ երբ չըւեմ աստի ,
իմ ոգեւարին , մա՛հուան ժամանակ ,
ճակատս ո՞վ արդեօք համբուրէ պիտի , . . . ։

Ֆ. Գոբբէ

## ՍԻՐՈՅ ԵՐԳ

Խարտեաշ դաշտին մէջ , ծառերուն ներքեւ ,
լաւ եւս տօնելու համար զայն ամրան,
պիտ' երթանք ուրախ բաներն որք թրթռան.
— Ես՝ տող մ'երգ , եւ դու թիթռունքն ոսկեթեւ ։

Եւ պիտ' ընտրենք նեղ ուղիներն անփայլ ,
գորշ ուռենեաց տակ , եղեգանց մօտիկ.
լաւ եւս լսելու՝ բաներն երգեցիկ.
— Ես՝ վանկն աղու , դու՝ թռչնիկաց դայլայլ ։

Երկուքս երթալով չինչ եզերքն ի վեր
զոր խօսուն ալիք կը ծեծեն վէտ վէտ,
պիտի զձե՛զ գտնենք, քանի՜ր հոտաւէտ.
—Ես յանգեր քաղեմ, իսկ դու՝ ծաղիկներ։

Ու Մերն.ալ, մեր քմաց ծառայելով յար,
պիտ՝ ամառն ընէ այն օրն ա՛լ սիրուն.
քերթո՛ղ պիտ՝ ըլլամ ես, դու՝ քերթուհի՛ն,
դու՝ ա՛լ գեղեցիկ, ես՝ ա՛լ սիրահար։

Ֆ. Գորբէ

# ՎԵՐԱԴԱՐՁ

ՋԱՑՆԵԱԿ

Ձե՛զ, որ արբշիռ կը սիրէի ես սպասանի,
թարմ հովիտներ, լիճեր, առուակք անտառակի՛ն,
իմ անդրանիկ գաղտնեացս հասու վայրք ընտանի,
այժմ, ալեւոր, ուզեցի զձեզ տեսնել կրկին:

Ի՛նչ դարձ տխուր դէպ՝ անցեալն, ա՜հ, սերն այնքանի...
դուք կ'երեւաք ինձ անհրապոյր, ցուրտ, տրտմագին,
եւ, օտարի մ'հանգոյն որ դէմն ելլող չունի,
զո՛ւր կ'սպասեմ մեղմ կոչերուս արձագանգին....։

Բայց նո՛յնն ես դու, ո՛վ բնութիւն վեհազդեցիկ,
նոյն են պերճանքդ ակնախըտիղ, միշտ գեղեցիկ,
երկնքնէ՝ ոչի՛նչ ունիս պակաս այսօր։

Ա՛հ, կորսուե՜ր եմ խանդն որով կը սիրէ մարդ...
սիրտս այն ատեն կ'ապրէր, հիմա՝ ածխա՛րծ քոյոր,
այս վայրերուն պակասածն, աւա՜ղ, ե՛ս իսկ եմ արդ....։

Ժ. Սոլարի

# Ա Պ Ա Ռ Ա Ժ Ն Ե Ր

Ցորեններէն, գարիներէն, հաճարներէն ա՛լ անցին,
հոն ուր դալար, ծառ, կակուղ խոտ, փոշոտ հողեր ալ չեկան,
գետի մը մօտ, ուր ջինջ ալիք միշտ կը փրփրան մոլեգին,
կը խորհին ժայռք, մողեսներուն, արծիւներուն սիրական։

Հազարաւոր ամեր ապրող մանկական տիք մշտափայլ,
անշարժութիւն, խոր ապշութիւն, սարսռատեսիլ երեւոյթ,
մեռած սրտից, անկեալ հոգւոյ ցուրտ լռութիւնն անայլայլ,
ունին ժայռերն ամէն ի՛նչ որ շփոթ, սարսուռ տան հոգւոյդ։

Գետն որ կ'ոռնայ վետվետելով այդ ժայռերու ոտքին տակ,
հայելի մը կ'ըլլայ անոնց հեղեղընթաց, խեռ, յիմար,
եւ որ, ձըմեռն երբ կը յորդէ, կուգայ ծակէն դուրս շիտակ
մտրակել կողն անոնց, փրփրոտ ապտակներ տալ անհամար։

Գորշ ու տամուկ նեղքի մը մէջ, կամ խոռոչի մը վրայ,
այն ամսուն մէջ ուր զեփիւռն հետ բուրումներով ողողուն,
կը վառէ խունկն այն ծաղիկն որ իր շունչովն իսկ կ'երերայ,
իմն իր գըլուխն հոն ցոյց կուտայ տեգի պէս սուր, այլ սողուն։

Մառախուղին մէջ, մըտատանջ, կարծես սպասել կը թուին
որ ժամն հնչէ հրաժեշտի մը խորհրդաւոր, ու երբա՛ն . . .
ու տեսնե՛լ ալ կրնան կարծես—իսկ աչք չունի՛ն բնաւին,
ո՛չ ալ ականջ—սակայն լսել ալ կը թուին ի մըքան։

Հէ՛գ հսկաներ վսեմաչարչար այն ահռելի վայրերուն,
սարսափ կ'ազդեն շրջակայից, կը դողան լեռ, ձոր, բլուր,
զի ողբն ու ճիչը բուերուն որք անոնց հիւրն են, քաղցուն,
այն ձա՛յնն է որ անոնց համար կը հեծեծէ դառնալուր։

Թէ արեգակն այրէ զիրենք, թէ զարնուին կայծակէն,
փայլատակման, զոռ որոտման, փոթորկաց սալ անձրեւուն,
ապառաժներն այն դժընդակ տրտում սքօղուր կը հագնեն
սոսկավիթխար հըրէշներու խումբի մը պէս հոն կանգուն։

Մին, որուն ծայրն է սուր, երկայն դանակի պէս ցցուած վէր,
եւ կը մաշի տակ զոս բորբոս սունկերու, բաց խոտերու,
մութ ճեղքերով որք կ'երեւան խոցերու պէս կարեվէր,
դէպ ի մէկ կողմ կը հակի խոնջ, մռայլ դէմքով մ'աճարկու։

Մինչ ուրիշ մ'այ, որ դագաղի մը կափարչին է նըման,
խորհրդաւոր երկինքն ի վեր կարծես բացուած, բարձրացած,
գետնամած, չոր տերեւներուն վըրայ, վայրկեան առ վայրկեան,
կը թափըրփի բորումն անձրեւ, հարին օրերն արտասուաց։

Եւ ամէնքն ալ, տարբեր ձեւով, բորոտ, գօսոտ, ծեր ու մութ,
այն մենութիւնն է՛ս առաւել կ'ընեն լռին, սոսկմնալից,
եւ իրենց ցուրտ տեսքովն որ խո՛ր խռովում կուտայ ու սարսուռ,
կը պատմեն վիշտն, անհու՛ն հանճարոյն որ կը կրեն առյաւէտ։

Մ. Պօլսեան

## ՀՈՒՍԿ ԲԱՆՔՍ...

Գրողներ կան դեռ որոնք, անխափան,
կ'ուզեն որ փայլուն մէկ յառաջաբան
իրենց հատորին ճակատին վրայ
լոյս-պըսակի մը պէս շողայ, թրթռա՛յ։
Սովորութիւն մ'է աս շատ հընաւանդ
որուն հետեւող են, միշտ, մա՛նաւանդ
այն վարժապետներն որք ատեն ատեն
դասագիրքեր ալ — վա՛հ — կը պատրաստեն,
եւ ուսումնատենչ մանկըտւոյն ի սէր
սփռելով իրենց հմտութեան լոյսեր,
կեղծ համեստութեան ծամոնը ի բերան,
քաջալերութիւն—դըրա՛մ —կը մուրան։
Կարգ մ'ալ հոգեբան գըրագէտներ կան
որոնք, շեշտով մը սէգ ու տիրական,
ընթերցողներուն՝ փութկոտ, ինքնագով
*Երկու խօսք* կ'ուղղեն արհամարհանքով
ըսելու համար անոնց թէ՝ իրեն
չի համակրողներն հե՛գ ապուշներ են,
կամ նախանձոտներ՝ որք կ'այլըստամքին
երբ վարդ չի բուրեր թերթը կաղամբին . . . ։
Իսկ յառաջաբան գըրողներ կան որ
տոգորուած խանդով, տենդով մ'անսովոր,
գիրքին լեզուն, նիւթն, ոճն, արժէքն, ոգին
չեն քններ անգամ. լո՛կ կը բորբոքին
եւ, պերճ բառերու պահծու տրցակէն,
զոռ ածականներ, բայեր կ'արձակեն,
գովեստ կ'որոտան, վըճիռ ու պատգամ
ա՛յնքան ուռուցիկ, կեղծ՝ որ շատ անգամ,

—խեղճ Գառլօն յանկարծ փոխուած Գառլայլի—
գիրքին հեղինա՛կն իսկ, նոյն, կ'այլայլի,
եսքն, ինքնամոռաց, բարկ խունկէ գինով,
կ'ուռենայ իր սին միջակութիւնով.
երգածն՝ հազիւ մէկ փարդ, երկու ոսկոն,
կը կարծէ ինքզինքն Հայերուն Հիւկօն,
մեծ տաղանդ, հանճա՛ր, դիւթակա՛ն գրիչ.
երեկուան ճնճղուկն՝ արծիւ բարձրաթռիչ
կ'ըլլայ. ամպերուն մէջ կը սաւառնի,
իր անունն անմահ՝ դարերն ապառնի
պիտի ողջունեն իբր հսկայ լեռներ . . .։
—Հետեւեալ առտուն բարեւ ա՛լ չառներ,
մարդու չի հաւնիր, յառաջ ալ չ'երթար
եւ. ինքն որ վաս էր՝ կը դառնայ վասպար . . .։
—Իր տնակին մէջ նոր բոլորովին
յառաջաբան մ'ալ ինծ գրել տուին,
երկու տարի կայ, գիրքի մը համար։
Ես ալ, գրողին, գրուածքին յարմար
յիսուն վաթսուն տող զա՛րդ ոտանաւոր
խըրատական մը գրեցի այլուր
որուն մէջ, անկեղծ դիտումով բարի,
գովեստ, ծափ, խունկ, մոմ՝ բընաւ չի դըրի։
—«Երգեր կը մնջես, ըսի, թարմ ու խակ,
«Պատանի ես դեռ, սիրահա՛լ սոխակ . . .»
եւ այլն . . . ։—Ի՞նչ, գիտէ՞ք ի՛նչ պատահեցաւ.
դեռատի քերթողն ըզգալով խոր ցաւ
որ լիաբերան զինքը չեմ գովեր,
ետ դարձուց ։ նետեց զայն երե՛սս ի վեր
եւ, լաւ թուղթի վրայ, կողքով գեղանի
տըպեց գիրքն առանց . . . յառաջաբանի,
եւ կարծեմ թէ՝ տաս կոյսեր փափկաշնորհ
իրենց սիրտին մէջ տեղ տուին անոր,
որ Սէրն երգելով անդուլ, ամէն օր

կ'օրօրէ զանոնք անուրջներով նոր . . . ։
Այս պատճառներով համոզուած եմ թէ
յառաջաբանը միշտ աւելորդ է ։
Սակայն երբեմն ալ իրա՛ւ շահեկան .
պարզելի կէտեր ու հայեացքներ կան
որոնցմէ գիրքի մ'համար կը ծնին
պէտքն անհրաժեշտ յառաջաբանի ։
—Ե՛ս, զոր օրինակ, որ մէկ քառորդ դար
գրիչ շարժելով անվերջ, անդադար,
օրաթերթերու , հանդէսներու մէջ
հրատարակած եմ բազմաբազում էջ ,
երբ բոլոր գրածս , անշա՛հ թէ ընտիր ,
Նըսեմն ու վըսեմն ու վէհն , անխտիր ,
ես կու գամ այսօր, հին՝ նոր, քովէ քով
*Այգեկութքիս* մէջ ցուցադրել կարգով ,
պէտք չէ՞ր որ մէկ կարճ, սեղմ յառաջաբան
գրելով պարզէի ես անոնց ճամբան .
Ըսէի թէ , իմ *Շողեր ու ցոլերս*
*Այգեկութքին* հետ չունին բնաւ աղերս ,
եւ, հաւատացէ՛ք խօսքիս հաւաստող
թէ՝ հոնկէ բերուած հոս չի կա՛յ մէկ տող։
Ըսեմ , նաեւ , թէ ինձ դիւրին էր կարի
կոկ , միօրինակ աշխարհաբարի
վերածել , յղկել հին գրածներս որ
ինձ ալ խառն ոճով կ'երեւան այսօր ։
Բայց այդ բանն ընել չուզեցի ես , ո՛չ .
գրչի առաջին փորձերուս դողդոջ
թող տըւի որ պարզ եւ աներկեւան ։
իրենց նախնական ձեւովն երեւան ։
Տարիներ առաջ տասնեւհինգ քսան ,
միտքիս ծաղիկներն ի՛նչպէս որ բուսան ,
իրենց գոյնովն ու բոյրովն հարազատ
դիտմամբ պահեցի ամէ՛նքն ալ զատ զատ .

Խորթ կամ ապօրէն զաւակի նման,
փոխանակ մտածելու զանոնք մոռացման,
տըկար թէ խոնարհ՝ անոնց ո՛չ մէկն ալ
չուզեցի գիրկէս վանել, ուրանալ ։
Քանզի, բացայայտ ըսեմ, չե՛մ հոգար
թէ կրնան ոմանք ինծ արձակել քար
եւ, իմ մէկ տողին կամ բառին առթիւ,
դիտողութիւններ ընել բազմաթիւ ։
Ցոլումնանի ձեւեր, ոճեր նախնական,
գրաբարի դրօշմով դարձուածք երբ կան,
անոնք քննութեան նիւթեր են յարմար
այն սուր, հետախոյզ աչքերուն համար
որոնք կ'ուզեն որ տեսնեն, բաղդատեն
թէ՝ գրողին լեզուն ի՞նչ էր նին ատեն,
արուեստի մասին շա՞հ կայ թէ կորուստ,
երբե՞մն էր աղքատ թէ հիմայ հարուստ,
եւ թէ՝ այսօրուան գեղակերպն անոր
ունի՞ ինքնատիպ հըրապոյր մը նոր . . . ։
Պիտի խնդրեմ ալ որ, այս հատորին
կամ յաջորդներուն մէկ կամ միւս կտորին
առաւել կամ նուազ արժէքին մասին
քննադատներըս երկար չի խօսին .
Քանզի կը գրեմ ես, կայ ա՛յսքան տարի,
մարդէ՛ չեմ առած խրատ մը բարի .
չէ՛ դէմս ելած մէկն որ, եղբայրաբար,
տայ ինծ մէկ խորհուրդ կամ լաւ գաղափար ։
Թռչիլն ինքնիրեն սորված թռչունին
բան մ'ալ ըսելու իրաւունք չունին ։
Նախ՝ թէ գտնեն զիս հաճոյ կամ . . . անհամ,
ես ի՛նչ որ եմ, միշտ ա՛ն պիտի մնամ ։
Ու յետոյ, ըսեմ, երբ կը ներեն . . .
կը կարծեմ որ զիս կարդացողներէն
եւ ո՛չ մին ինծ չափ փորձ է եւ ներհուն
ճշդելու արժէքն իմ գրածներուն .
Ինչպէս ոսկերիչ մ'իր ցուցափեղկին
անխարդախ արժէքն եւ անխառն ոսկին
իրենց տեսակով ու կշռով բոլոր
կարող է ճշդել, ճանչնալ անմոլոր ,

Ես ալ լա՛ւ գիտեմ, տեա՛րք իմ, կ'իմանա՞ք,
թէ՝ ո՛րն իմ ոսկին, ո՛րն է իմ անագ։
Անոնց ամէնուն ես ծնողին ու տէր,
զանոնք իրարմէ դիտմամբ չեմ զատեր,
փափաքելով որ հօր մը պէս խոհեմ
բոլոր զաւակներս անկորուստ պահեմ։
Գրուածքներուս մէջ, գիտեմ, քաներ կան
որոնք այսօր — ո՛չ բանաստեղծական—
քերթուած, տաղ, գեղօն ըլլալէ հեռու,
սին գրչի խաղեր թուին տասերու,
Մեծ-Արմբսանցւոց *մեղայագր*ին պէս
որ ժամանակին ցնցեց խորապէս՝
բարեմիս հեգնոտ յօդուածի մ'առթիւ,
կիրքով բորբոքած հոգիներ անթիւ,
ու՝ վրան խոժոռած դէմքերու՝ դիւրաւ
հաճոյութեան մեղմիկ ժպիտ մը բերաւ։
Արդար չէր ըլլար, այնպէս չէ՞, որ ես
դուրս վտարէի զանոնք հօտորէս,
զանոնք՝ որք կեա՛նքիս անցեալ՝ զուարթ ու տէն
մէկ դրուագն եւ կամ անցքը կը նշեն։
Ասկէ զատ, ըսեմ անկեղծ, անվախ հոս.
Ես, մերթ քնարերգակ, մերթ բարոյախօս,
մերթ մանուկներու բարբառող լեզուն,
կամ՝ իմաստասէր երբեմն երազուն,
յաճախ ալ հեգնող, ծաղրող սրաքան,
մերթ ալ սիմպօլիստ —ո՛հ, շատ քիչ մը բան—
շատ ատեն՝ օտար մտքերու յղացման
պտուղ՝ գեղեցիկ տողերու թարգման,
գրական ամէն սեռերն ու ձեւեր
մշակող մ'եղած եմ ժիր, անձնուէր,
ոճով, ճաշակով ու շունչով տարբեր
շատ նիւթեր—քա՛ւ որ չըլլան . . . քնաբեր —
«Աղօթք»էս մինչեւ «Օգոստինին Նամակ»
երկնած ու դրած եմ թուղթին վրայ ճերմակ,
այս պատճառաւ իմ ամբողջ գործս այսօր
խառնուրդ զանգուած մ'է անզուգ, անսովոր,
ուր ծանրն ու թեթեւն, հեգնանքն ու խնդուք,
ողբ, երգ, ամէ՛ն բան պիտի գտնէք դուք։
Գործս անուանած է մէկ մեծ . . . իմաստուն.

UNIVERSITY OF MICHIGAN
04146 2774